

S. ՇԱՄԻՐԴԻՆԱՅԻՆ



ՊԵՐՍՈՎԱԿԱՆ  
ԱՐՎԵՏՈՒԹԻ  
ՀԻՄՈՒԼԱՐԵՐԸ

ՊԵՏԶՐԱՆ

АГ 20298

792.01 | 14154

6-28 | Гиацинты  
Пурпурноцветные  
бруслины

Пурпурноцветные  
бруслины

3) VIII 170 | Y!



EXCELSIOR

1982

792.01  
6-28


Տ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱՀ

• Ապրիլի 15, 1981 թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հ 20293







S. ԵԱՎՐՈՎՆԵԱՆ

Մեծատաղանդ արժիս  
ՀՈՎՀԱԱՆՆԵՍ Ա.ԲԵԼՅԱՆԻ  
պայծառ նիւատակին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՐԱԼՈՒՆ



## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ


Դերասանական արվեստի հիմունքների մասին գրած մեր այս  
աշխատությունը բնավ չի սպառում գերասանի ստեղծագործական  
այն բոլոր հարցերը, վորոնք կազմած են բնմական տիպերի կերտ-  
ման և նրանց գրանիքուման հետ:

Դրույմ զվարապես տեղ են գտել դերասանի ստեղծա-  
գործության հետ կազմած այն նախնական տարրերը և դիտե-  
միքները, վոր մեր կարծիքով, դերասանը պետք է յուրացնի  
նախքան վորնել դեր պատրաստելը:

Բացի այդ, մի շարք տեսական ու գործնական գրույթ-  
ներ, վոր բնմական արվեստում տարիներ շարունակ արագի-  
ցիոն ճշմարտություններ են համոզվել, մենք փորձել ենք հիմ-  
նական վերաքննության յենթարկել ու նոր լուսաբանություն տալ  
նրանց:

Ստկայն մենք բնավ հավակնություն չունենք կարծելու, թե  
մեր այս համեստ աշխատությունն իր տեսակի մեջ միանգումայն  
լրիվ և կամ վերջնական ընդհակառակը, մենք սրանով միտյն  
կամեցնել ենք գերասանական արվեստի մասին՝ մեր ռանցած մաքերն  
ու կարծիքները, այսպես ասած, ստեղծագործական փորձի փոխա-  
նակության կարգով ծանոթացնել մեր ընկերներին և նրանց  
քննադատական խոսքի սպիտակամբ ել ավելի սրել ու որակարգի  
խնդիր դարձնել խորհրդային թատրոնի յերիտասարդ կազմերի  
ստեղծագործական դաստիարակության սկզբունքային հարցերը:

Առանձին գոհունակությամբ մեր շերժ շնորհակալությունն  
ենք հայտնում ընկե. Ստրվիս Մելիքանցյամին, նրա արժեքովը  
ցուցումների ու գեղավայրի մեջ հանդիս բերած հոգատար վերաբերմունքի  
համար:



«Մեր այժմյան պայմտններում  
կադրերն են վարուս ամեն ինչ».  
**ԱՏՎԱԼԻՆ**

I  
ԵՐԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ  
ԶՐՈՒՅՑ



## 1. ԱՐՎԵՍՏԻ ԱՌԱՆՉԱՍԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախ և առաջ պետք է գիտենայ, վոր արվեստը, ինչպես նաև բոլոր գիտությունները, կոչված և նամաշիլ, բացառությունը և վերափոխնել ուղինեալի իրականությունը:

Սակայն այդ քանոյ գիտության ու արվեստի բնագավառներում տարրեր կերպով ե տեղի ունենում:

Որինակ՝

Գիտականները մտածում և իրենց մոռքերն արտահայտում են նաև ցանցազուրյաններով:

Մինչդեռ արվեստագետները մտածում ու իրենց ստեղծագործական մտադրություններն արտահայտում են զվարապես զեղարվեստական պատկերներով:

Սակայն մտածողության այս յերկու յեղանակները վոչ մի զեղքում չպետք ե հասկանալ մնխանիկորեն՝ վոր իրը թե գիտականները միանդամայն կարված են պատկերավոր մտածողությունից, իսկ արվեստագետները բոլորովին զուրկ են հասկացություններով մտածելու ունակությունից:

Նշանակում ե չի կարելի արվեստն ըստ եյության հակադրել գիտության, քանի վոր նրանք յերկումն ել կոչված են կյանքը ճանաչելու և վերափոխելու:

## 2. ԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՑԻՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Հարկ և նշել, վոր արվեստը վոչ մի զեղքում չի կարելի ըմբռնել վորպես գոյություն ունեցող իրականության սոսկ ընդուրինակություն:

Այսուհետև չի կարելի նաև ընդունել արվեստը վորպես պարագ ժամանցի կամ զվարճության առարկա:

Լենինն ասում ե, վոր Շնա (այսինքն արվեստը Տ. Շ.) պետք ե միացնի մասսանեւք զգացմանը, միտք և կոմք՝<sup>2\*</sup>:

2) Լենինը և արվեստը—Մակղա, Պետրատ, 1933 թ. հջ 35, Բոլոր այն ընդուրները, վորոնց հասուկ հիշատակություն չկա հեղինակի կողմից ընդուրությունը մտած, իմ են: Տ.

Նշանակում ե՞ արվեստը լոկ այն ժամանակ և լիործեք արվեստ, յերբ նա հասարակութան կյանքում ակտիվ դաստիարակչական գեր և կատարում:

Բայց քանի վոր դասակարգային հասարակության մեջ դասակարակչական գործը դասակարգային բնույթ և կրում, նշանակում և ամեն մի արվեստ նույնպես դասակարգային և Արվեստի դասակարգային եյությունն այն և, վոր նա կուբուքայի բնադավառում մշտապես արտահայտելով այս կամ այն դասակարգի շահերը, միաժամանակ և պայքարի զենք և հանդիսանում ավյալ դասակարգի ձեռքին:

Թատրոնը նույնպես հանդիսանում և դասակարգային պայքարի հումկու զենքերից մեկը:

Նրա դասակարգային նշանակությունն ու արժեքը հենց այն և, վոր նա գաստիարակում ու կաղմակերպում և մարդկանց մտքերն ու զգացմունքները, նրանց հոգերանությունն ու գիտակոցությունը:

Սակայն արվեստի բուրժուական տեսաբանները, հաճախ քողարկելով հարցի այս կողմը, ձգտում են արվեստին ապացուակարգային բնույթ տալ:

Նրանք՝ աշխատավորական մասսաներին մոլորեցնելու համար շարունակ հայտարարում են, թե Շիսկական» ու «մաքուր» արվեստը վորենի կազ չունի քաղաքականության հետ, թե նա «վեր» և ու «ազատ» մարդկանց տնտեսական շահերից և դասակարգային պայքարից:

Մինչդեռ Լենինն ասում և, վոր «... բուրժուական գրողի, նկարչի ու դերասանությունու ազատությունը լոկ դիմակավորված (կամ կեղծավորաբար դիմակավորվող) կախումն և փողի- բակից, կատորից, ապրուսից»\*):

Բուրժուական արվեստագետներն ամեն կերպ աշխատում են սքողել արվեստի դասակարգային եյությունը: Սակայն մենք բնագի կարիք չունենք թաղղնելու այդ մեր մասսաներից:

Մենք բացորոշ կերպով հայտարարում ենք, վոր մեր արվեստը դասակարգային արվեստ և և կոչված և ծառայելու բանվոր դասակարգի և աշխատավորության մեջ գործին, սոցիալիզմի կառուցման գործին:

Արվեստը մեդ մոտ նույնպես դաստիարակում ու կաղմակեր-

\* Հենինք և արվեստը. էջ 31.

պում և մարդկանց հոգերանությունն ու դիտակցությունը։ Սակայն նա այդ անում և սոցիալիզմի վողով։

Դասակարգային հասարակության մեջ հակառակ բուքժուական արվեստագիտների պնդման, չկա և չի ել կարող լինել ապահանակարգային արվեստ։

Դասակարգային հասարակության մեջ արվեստը միշտ ներշնչված ու հազեցված և դասակարգային վողով։

Բացի այդ, արվեստը պարտավոր և վաշ միայն կյանքը ճանաչել ու բացատրել, այլ նա պետք և ծառայի ավյալ հասարակությանն ու ազգակ հանդիսանակ կյանքը վերափոխելու գործում։

Յեզ հենց այդպես ել ե. մեզ մոտ արվեստը վոչ միայն կյանքն ուսումնասիրում, ճանաչում ու բացատրում ե, այլև վորպես գաստիարակչական մի հուժկու զենք, ակտիվորեն տօգակցում և սոցիալիստական հասարակության աշխատանքներին և կազմակերպում է մեր աշխատավորության դիտակցությունն ու հոգերանությունը։


## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր

1. Խնչյի համար են գիտություններն ու արվեստները։
2. Խնչմա չի կարելի արվեստն ըստ եյության հակադրել գիտությանը։
3. Խնչմա չի կարելի մարդու պատկերացումները կտրել նրա հասկացողություններից և ընդհակառակը։
4. Խնչմա և արվեստը տարբերվում գիտությունից։
5. Խնչմա և արվեստը նմանվում գիտությանը։
6. Վերն և արվեստի դասակարգայնությունը։
7. Կարմա և արդյոք դասակարգային հասարակության մեջ գոյություն ունենալ ապադաստակարգային արվեստ։
8. Խնչ և նշանակում «ազատ» ու «մաքուր» արվեստ։
9. Խնչպես և արվեստը վերափոխում կյանքը։



II

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՏՈՒՄ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ



## 1. ԳԵՐԱՍԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՑՈՒԹԸ

Նախ և առաջ պետք է իմանալ, վոր թատերական արվեստը ըստ եյտթյան սինթետիկ արվեստ եւ

Թեմական արվեստի սինթետիկականությունը՝ ավյալ գեղագում կայանում և նրանում, վոր այսուղ, բացի դերասանից, մասնակցում են նաև այլ արվեստագետներ:

Որինակ՝

— գրամատուրգ,

— սեժիսյոր,

— նկարիչ,

— յերաժիշտ և այլն

Միայն այս բոլոր արվեստագետների որդանական համազարծության շնորհիվ եւ, վոր ներկայացումը կրում է սինթետիկ բնույթ:

Սակայն այդ սինթետիկ մեջ արվեստագետներից ամեն մեկն ունի իր վարոշակի տեղն ու իր ստեղծագործական ուրույն նշանակությունը:

Բայց քանի վոր արվեստում եյտականը միշտ կազմում է նրա բովանդակությունը, ապա մենք նախ և առաջ պետք եպտրզենք, թե բեմական արվեստում վորն և այն կոնկրետ նյութը, վորի շուրջը համախմբվում են վերոհիշյալ արվեստագետներն ու կատարում իրենց աշխատանքը:

Մեր կարծիքով, թատրոնում այդպիսին հանգիստանում եւ պրամատուրգիական յերկը, այսինքն պիեսը:

Նշանակում են միանգամայն պարզ եւ, վոր բեմական արվեստում արվեստագետներից ամեն մեկը պարտավոր և աշխատել վոչ թե ինքն իր համար, այլ պիեսի ու ներկայացման համար:

Այսուեղ մի փոքրիկ թյուրիմացություն կարող է ծագել գերասանի նկատմամբ, վոր իրը թե զերասանն այս խնդրում նման չի մյուս արվեստագետներին, վորովհետև գոյություն ունեն կարգերներ, վոր իրը թե նրա ստեղծագործության նյութը կազմում և վոչ թե պիեսը, այլ հենց ինը՝ դերասանը:

Բանն այն է, վոր գերասանի ստեղծագործության նյութը կամ որյեկտը յերբեք չպետք և շփոթել նրա հոգեկան ու ֆիզի-քական տվյալների հետ, վորոնց ոժանդակությամբ նա կերտում և իր ընմական տիպերը:

Ստեղծագործության նյութը կամ որյեկտը այն բօվանդա-կուրյանն է, վորի վրա գերասանը թափում և իր ստեղծագործու-կան ամրողջ եներգիան։) Այս իսկ պատճառով ել միանգամայն անհինն են արդեն արագիցիոն դարձած այն բնորոշումները, վո-րոնք գերասանական արվեստի առանձնահատկությունն են հա-մարում այն,

—վոր իրը թե գերասանական արվեստի ստեղծագործության նյութը հենց ինքը, գերասանն է,

#### Կամ՝

—վոր իրը թե գերասանն ինքն իրեն համար միաժամանակ հանդիսանում և թե իր ստեղծագործության սուբյեկտը և թե իր ստեղծագործության որյեկտը,

Ինչ վերաբերում և գերասանի ստեղծագործության սուբյեկ-տին, պետք և ասել, վոր գերասանն իրոք վոր հանդիսանում և իր ստեղծագործության սուբյեկտը։ Դա միանգամայն ճիշտ է, վորովհետև առանց գերասանի չկա և չի ել կարող լինել վորին ընմական արվեստ։ Անշուշտ, դեռասանն ե միայն, վոր ստեղծում-ու կերտում և ընմական սոցիալական կենդանի տիպերը նա չե, վոր իր ստեղծագործության շնորհիլ հագեցնում և թատրոնը և շունչ ու կենդանություն տալիս ընմական արվեստին։

Առանց գերասանի դրամատիկական թատրոնը նույնքան-անիմաստ է, վորքան և առանց թատրոնի գերասանը։

Սակայն, հիշյալ արագիցիոն բնորոշումները կարոտ են լուրջ պարզաբանության և անհրաժեշտ սրբազնության։

Վերոհիշյալ բնորոշումներից գուրս և գալիս, վոր իրը թե ընմական արվեստը տարբերվում և մյուս բոլոր արվեստներից նը-րանով, վոր այսուղ գերասանի ստեղծագործության նյութը, այսինքն որյեկտը, հանդիսանում և «իմը» դեռասանը։ Հարցը ճիշտ լուսաբանելու համար անհրաժեշտ ե պարզել, թե առաջա-րակ ինչ և նշանակում լինել վորեն ստեղծագործության նյութ կամ որյեկտ։

Արվեստի մեջ ստեղծագործության նյութ կամ որյեկտ և հանդիսանում այն, ինչ ստեղծագործում և արվեստագետը, այսինք-

—յն հիմնականը, վորի վրա արվեստագիտը աշխատանք և թափում ու ձգում և ստեղծագործել:

Տվյալ զրությունն ազնիվ լավ ըմբռնելու համար պետք է դիտենայ, վոր յուրաքանչյուր աշխատանքի պրոցես միշտ ունենամ և յերեք հիմնական պարզ մոմենտներ:

ա. Մարդկային նպատականարմար գործաթեյաւթյան,

այսինքն մարդ, վոր կարողանա անհրաժեշտ ուժ ծախսել ու նպատականարմար աշխատանք կատարել.

բ. Աօխատանքի առարկա,

այսինքն՝ այն հիմնական նյութը կամ որյեկտը, վորի վրա մարդ աշխատանք թափելով, ձգում և փոխել այն:

գ. Աօխատանքի միջոցներ,

այսինքն՝ այն գործիքները, վորոնց ոգնությամբ մարդ սկսում և ներդործել իր աշխատանքի առարկայի վրա՝ իր նպատակին հասնելու համար:

Դժվար չի ըմբռնել վոր գերասանական արվեստում աշխատանքի վերահիշյալ յերեք պարզ մոմենտներից տուաջինը, այսինքն՝ մարդկային նպատականարմար գործունեյություն ծավալողն ու աշխատանք կատարողը հիմնականում հանդիսանում է գերասանը:

Սակայն ինչ վերաբերում և աշխատանքի պրոցեսի յերկրորդ մոմենտին, այսինքն՝ գերասանի ստեղծագործության նյութին, պետք և ասել, վոր այստեղ գժվարությունը կայանում է նրանում, վոր գերասանական արվեստի ստեղծագործության նիմնական սրբեկը, վորն ըստ եյության միշտ ել կազմում և զերի բովանդակությունը, մենք շատ հաճախ անզիտակցարար շփոթում ենք այդ նույն զերի կառուցման համար պահանջվող անհրաժեշտ տիմանյալքի ու նրա մշակման միջոցների հետ:

Պետք և դիտենայ, վոր բոլոր արվեստներն ել՝ առավել կամ նվազ չափով միշտ անդրադարձնում են իրական կյանքի այս կամ այն կողմը: Այս իմաստով ել իրական կյանքը միշտ հանդիսանում և այն միակ ու նիմնական որյեկտը, վորն ի վերջո կազմում և յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործության բուն նյութն ու նրա արվեստի բովանդակությունը:

Այստեղ տարբերությունը նրանումն եւ, վոր արվեստներից ամեն մեկն այդ նույն կյանքն անդրագարձնում և իրեն հատուկ շինանյութի ոգնությամբ:

### ՈՐԲԻՆԱԿ՝

- գորողը, վորապես շինանյութ, ոգտագործում և խռովը;
- նկարիչը՝ ներկը,
- յերաժիշտը՝ ձայնը,
- քանդակագործը՝ կավը, մարմարը, պղինձը և այլն:

Նույնը կարելի յե և պետք և ասել նաև զերասանի մասին,  
Դերասանն իր զերակատարության միջոցով նույնպես անգրա-  
գարձնում և իրական կյանքը, սակայն նա իր բեմական տիպերը  
կերտելու համար վորապես շինանյութ գործ և ածում վոչ թե ներկ,  
կավ, մարմար կամ պղինձ, այլ վորապես կենդանի շինանյութ,  
ոգտագործում և հենց ինքն իրեն:

Այս տեսակետից ել զերասանն ինքն իրեն համար հանդի-  
սանում և վոչ թե իր ստեղծագործության որյեկտը կամ նյութը,  
այլ կազմում և իր արվեստի օնտանյալքը:

Սրանք բոլորովին տարրեր բաներ են և յերրեք չի կա-  
րելի իրար հետ շփոթել, կամ թե նույնացնել:

Դերասանի ստեղծագործության բուն նյութը կամ հիմնա-  
կան որյեկտը գեղարվեստական տիպի բովանդակությունն է, իսկ  
շինանյութը գերասանի այն արտահայտչական միջոցն է, վորի  
ոժանդակությամբ նա կազմակերպում և դրսելորում և տվյալ  
բեմական տիպի բովանդակությունն ու նրա սոցիալական երա-  
քյունը:

Այս բոլորից հետո միանդամայն պարզ է, վոր բեմական  
արվեստում զերասանն ստեղծագործում և վոչ թե շնորհ-իրենք, այլ  
իր դերը, այսինքն՝ դրամատորգիական սոցիալական տիպը:

Իսկ յեթե ընդունելու լինենք, վոր զերասանի ստեղծագոր-  
ծական աշխատանքի հիմնական տարրերն, նյութը կամ որյեկտը  
հանդիսանում և վոչ թե գերը, այլ «ինքը—զերասանը», ապա այդ  
դեպքում դժվար չե հասկանալ, վոր բեմական արվեստը, բոլորովին  
կորցնելով իր սոցիալական բովանդակությունն ու որյեկտիվ նշա-  
նակությունը՝ կդառնատ մոռկ գերասանի անհատական կարողու-  
թյունների ինքնանպատակ ցուցադրման մի ասպարեզ:

Յեթե զերասանի ստեղծագործության հիմնական նյութը,  
տարրերն կամ որյեկտը իրոք կազմի հենց «ինքը—զերասանը»,  
ինչպես այդ շատ հաճախ ընդունված են կարենել, ապա պետք և  
տաել, վոր զերասանն ինքն իրեն համար հանդիսանում և այն  
որյեկտիվ իրականությունը, վորը յենթակա յե գեղարվեստական  
անգրագարձման:

Սաացվում և մի գրություն, յերբ զերասանի անհատական հույզերը, մաքերը, ապրումներն ու շաբժումները դառնում են նրա ստեղծագործության միակ խմանուն ու առանցքը:

Իսկ այստեղից ել առաջանում ե այն, վոր զերասանն իր աշխատանքի պրացեսում իր ստեղծագործության շեշտը որյեկտիվ իրականությունից, այսինքն ընմական տիպի սոցիալական բովանդակությունից հաճախ աննկատելիորեն տեղափոխում ե զեղի սուրյեկտիվ իրականությունը, այսինքն՝ դեպի իր մնատառ «յես-ը և, իրը արվեստագետ կորպվելով որյեկտիվ իրականությունից, փաստորեն որյեկտիվ իրականությունը փոխարինում ե իրենով։

Յեզ առա հենց այդ և պատճառը, վոր շատ զերասաններ իրենց ստեղծագործության հիմնական նյութը միշտ լոկ «իրենց» համարելով, ամեն անվամ տարբեր սոցիալական տիպեր կերտելու փոխարեն, շարունակ «իրենց-իրենց» են խաղում ու անընդհատ իրենց սեփական ըլսը-ը ցուցադրումն։

Դերասանն իր արտահայտչական միջոցները գերին հարմարեցնելու փոխարեն շարունակ ձգում ե դերն իրեն հարմարեցնելու իսկ դա ստեղծագործական վոչ մի արժեք չունի, վորովնեան այլ բան և, յերբ զերասանը միշտ նորանոր սոցիալական տիպեր և կերտում ե, ընդհակառակը, բոլորովին այլ և, յերբ նա այդ տիպերի անվան տակ շարունակ «ինքն-իրեն» և խաղում իսկ այդ ամենից ել, վորպես անխուսափելի հետևանք, սաացվում է այն, վոր վոչ թե զերասանն ե հանդիսանում իր զերի արտահայտչական միջոցը, այլ գերն ե հանդիսանում տվյալ զերասանի ցուցադրության առիթը։ Սակայն բանն ել հենց այն և, վոր ինչպես մյուս արվեստներում, այնպես ել ընմական արվեստում, զերասանի ստեղծագործության խսկական նյութը, առարկան կամ որյեկտը իրականում փաստորեն պետք ե հանդիսանա վոչ թե «ինը»՝ զերասանը, այսինքն նրա Փիզիկական ու հոգիկան կարդադիւնները վորպես այդպիսին, այլ այն, վոր այդպիսին նրա համար միշտ ել հանդիսանում ե որյեկտիվ իրականությունը, վորի զեղարգվեստական անդրագարձումը տվյալ գեպքում պետք ե համարել դրամատարգիական յերկը։

Ինմական արվեստում զերասանը ինքն իրեն համար աշխատանքի ասարկա, նյութ կամ որյեկտ և դառնում միայն այն զեղքում, յերբ մահացող գասակարգն իր անկումն ապրելով, ընկնում

և ձեռապաշտական արվեստի մեջ ու թատրոնը դարձնում է սոսկ գերասանի վարպետության ինքնանգատակ մարզանքների մէ վայր:

Նշանակում ե՞ւ այժմ մնաք կարող ենք սրբազրել մեր այս գրույցի սկզբում մնջ բերած արագիցիոն բնորոշումների տառաջն մասը և ասել, վոր թեմական արվեստի ստեղծագործության նյութը համեմիտանում և փոշ ինք դերասանը, այլ սրբեկին խրակությունը, վորը դրամատուրգիական յերկի միջոցով մանում և թատրոն ու դերի ձևով բաշխվում և դերասանների միջն:

Պատել հակառակը, նշանակում և բնորունել, վոր բնմական արվեստի բովանդակությունը հանդիսանում և վոչ թե որյակախի իրականությունը, վորի գեղարվեստական անդրադարձումը այլալ դեպքում պետք և համարել պիեսն ու դերը, այլ գերասանի իմբիտանպատճի շյուշան ու նրա ամրավունդոկ վարպետուրբանը:

### Ա Տ Ո Ւ Գ Ի Զ Հ Ա Բ Ց Ե Ր

1. Խնչի՛ մեջ և կտյանում թատրոնի սինթետիկականությունը:
2. Վորմաք են աշխատանքի պրոցեսի յերեք պարզ մոմենտները:
3. Խ՞նչ և նշանակում լինել աշխատանքի առարկա, նյութ կամ որյակա:
4. Խնչեւ չի կարելի ասել, թե գերասանի ստեղծագործության նյութը, առարկան կամ որյակուր հանդիսանում է ինքը, գերասանը:
5. Յերբ և գերասանն ինքն իրեն համար աշխատանքի նյութ հանդիսանում:
6. Վճրն և տրագիցիոն տեսակետի սխալը գերասանական արվեստի առանձնահատկության բնորոշման ինքըում:
7. Խ՞նչն և գերասանի ստեղծագործության հիմնական նյութը՝ առարկան կամ որյակուրը:
8. Կարմաղ և լինել դրամատիկական թատրոն առանց գերասանի, կամ թե գերասան առանց թատրոնի:
9. Խ՞նչ տարբերություն կա ստեղծագործության նյութի և շինանյութերի միջև:
10. Խ՞նչն և գերասանի ստեղծագործության շինանյութը:

## 2. ԴԵՐԱՍԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԸ

Այժմ ամենայն իրավամբ հարց և առաջանում, թե արդյոք վորո՞նք են զերասանի ստեղծագործության այն հիմնական միջոցներն ու դործիքը, վորոնց ոգնությամբ զերասանը մշակում ու փոփոխության և յենթարկում իր ստեղծագործության առարկան, նյութը կամ որյեկտը։ Այսինքն, այժմ մենք պետք եւ պարզենք նրա աշխատանքի պրոցեսի յերրորդ հիմնական մասնութը։

Մենք արդեն պարզեցինք, վոր յուրաքանչյուր արվեստ կյանքն անզբաղարձնելու համար ովտապործում և իրեն հատուկ շինանյութը։

Նույնը կարելի յեւ ասել նաև աշխատանքի միջոցների մասին։ Պետք եւ գիտենալ, վոր զերասանի ստեղծագործության միջոցը կամ զործիքը հանդիսանում է նենց ինքը՝ զերասանը, այսինքն խոսող ու զօրծող կենդանի մարդը, վորովհետեւ աշխարհում և վոչ մի ուրիշ զործիք, բացի զերասանից, չի կարող կենդանի մարդ ներկայացնել Վոչ մի ուրիշ միջոց ի վիճակի չեւ արագանայտել այն բոլոր մաքերը, նույզերն ու արարքները, վոր պահանջում եւ դերը։

Դերասանի մարմինն ու զեմքը, շարժումներն ու ձայնը, զգացու և մատածելու կարողությունը, ապրումներ և հույզեր ունենալու հատկությունը կազմում են նրա այն արանուայշական միջոցները, վորոնց ոժանզակությամբ նա կարողանում է մշակել իր զերն ու կենդանի գործողությամբ պատկերել նրա ամբողջ սոցիալական եյությունը։

Սակայն պետք եւ իմանալ։

ա. Վոր զերասան-զործիքը, նախ և առաջ հանդիսանում եւ կենդանի զօրծիք և ընդունակ և նպատակահարմար ու համոզիչ զործողություններ կատարել։

բ. Վոր նա ի վիճակի յեւ ամեն անպամ հիմնովին վերափոխել ու նարմարվել իր նյութին, այսինքն դերին։

գ. Վոր նա կարող եւ, աշխատանքի պրոցեսում ճիշտ գործածության գեղքում, ինքն իրեն շարունակ զարգանալ և կատարելազգածվել։

դ. Վոր նա, ժամանակին լավ ժարգվելուց հետո, հետագայում  
քննպահակ և գոռնուում վոյ թե շարունակ ստանդարտ ձևով իրաբ  
նման դերեր խաղալ, այլ կարող և կերտել միշտ իրարից սարքեր  
ու բազմապիսի սոցիալական տիպեր:

Բացի այդ, չափեաք և մոռանալ, վոր գերասանի գործիքը,  
ինչպես և ամեն մի գործիք, իր հերթին նյույնպես նյութական է:

Սակայն գերասանն իր գործիքի նյութականությունը չպետք է  
շփոթի. իր ստեղծագործության բուն նյութի, այսինքն՝ իր գերի  
բազմագույն նյութը:

Ենք գերասանն իր գերերը պատրաստելիս ինքն իր վրա  
քրաջան աշխատանք և թափում, այդ բնավլ չի նշանակում, թե  
նու զարգարում և իր արվեստի գործիքը մինելուց և զանում և իր  
ստեղծագործության նյութը:

Նա այդ անում և, վորպեսի Ել ավելի մարզի ու նզկի իր  
արտահայտչական միջոցները:

Նշանակում և, մենք պարզեցինք նաև այն, վոր գերասանն  
ինքը վոչ մի գեղքում իր ստեղծագործության նյութը շիմնելով,  
միաժամանակ իր ստեղծագործության նյութի, այսինքն՝  
գերի մշակման ու փոփոխման միակ գործիքն ու միջոցն և հանդի-  
պանում:

Այստեղից ել ահա միանգամայն պարզ և ու հասկանալի,  
վոր անհրաժեշտ և ժամանակին տիրապեսն այդ գործիքին և  
սովորել վարպետորեն զեկավարել այս Դերասանը պետք և սովորի  
իր այդ գործիքի վրա վարժ ու անսխալ նվազել Նա պետք և  
կարսկանա իր միջոցով մշակել ու հնչեցնել այն բոլոր գերերը,  
վոր արվում են նրան:

Այսպիսով գերասանն իր ստեղծագործության համար հանդի-  
պանում և այն միակ, անփոխարինելի միջոցն ու հրաշալի գոր-  
ծիքը, վորը նա, վորպես արվեստագետ, սպառըրծում և իր բնմական  
տիպերը կերտելիս:

Այսուհետեւ այս կտպակցությամբ պետք և պարզել նաև  
մի ուրիշ հարց, թե՝ արդյոք վո՞րն և այն հիմնական փոփոխու-  
թյունը, վոր գերասանը, շնորհիվ իր գործիքի ու աշխատանքի  
միջոցների, առաջ և կերտում իր ստեղծագործության նյութի,  
այսինքն դրամատուրգի տված գերի մեջ:

Նախ և առաջ պետք են գիտենալ, վոր յուրաքանչյուր պիես  
կամ գեր, վոր զբում և դրամատուրգը, ներկայացնում և բացասա-  
պիս գրական կամ դրամատուրգիական արժեք: Դերը բնմական

արժեք և դաշնում միայն այն ժամանակ, յերբ զերասանը ձեռնա-  
մուխ և լինում նրա կոնկրետ կատարմանը:

Յեզ ահա շնորհիվ հենց այն փաստի, վոր զերասանն իր  
նուրբ ու յուրահատուել գործիքի միջոցով զրամառութիւննե  
տիպը, այսինքն զերը, կարողանում և դարձնել բնմական կենդանի-  
տիպ, հիմնականում առելի յև ունենում այն անհրաժեշտ փոփոխու-  
թյունը, վորին միշտ յենթակա յե ամեն մի աշխատանքի առար-  
կա, նյութ կամ որվեկա:

Դրամատուրգիական զերը—դա գեռ բնմական կենդանի, խո-  
սող ու գործող տիպը չեւ վարպեսպի հեղինակի կողմից զրված-  
դերը կենդանանա, անհրաժեշտ ե, վոր զերասանն իր նուրբ գոր-  
ծիքի ովնությամբ փոփոխի այն և դերին կենդամուրյուն տա:

Դերն այս իմաստով փոփոխության յենթարկելը ընազ չպիտք-  
հասկանալ այնպես, վոր իրը թե զերասանը պետք և անսպայ-  
ման ըստ իր քմահաճույքի հեղինակի գրած գերերը շարունակ կը մա-  
տի ու փոխարենը նոր բառեր զբի, Դա կլինի հարցի շատ մեխա-  
նիկական ու գոհենիկ ըմբռնումը, Մենք խոսում ենք այն եյական-  
փոփոխության մասին, վոր զերասանը, շնորհիվ իր կենդանի գոր-  
ծիքի, առաջ և բերում հեղինակի կողմից զրված զերի մեջ, Այսինքն՝  
յերբ զրամատուրգիական զերը զերասանի կատարումով ստեղծա-  
գործության պրոցեսում իր գրական վարակից փոխվում և դառ-  
նում և բնմական փօրակ:

### Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ծ Ե Ր

1. Ի՞նչ և նշանակում աշխատանքի միջոց կամ գործիք:
2. Վո՞րն և զերասանի ստեղծագործության գործիքը և նյութի  
մշակման միջոցը:
3. Վորմանք են զերասան-գործիքի հիմնական հատկություն-  
ները:
4. Յերբ և զերը բնմական արժեք դառնում:
5. Վո՞րն և այն հիմնական և անհրաժեշտ փոփոխությունը, վոր  
զերասանն իր գործիքի շնորհիվ մացնում և զերի մեջ.

### Յ. ԴԵՐԱՍԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՈԲՅԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԶԵՎՀ

Այժմ անհրաժեշտ է պարզել նաև մի ուրիշ շատ կարելոր հարց: Նախ և առաջ պետք է իմանալ, վոր մարդկոյին ամեն մի սպասելոր աշխատանքը միշտ ստեղծում է մի վորեւ արդյունք: Սակայն այդ արդյունքը, վորպես հետեւանք, միայն այն ժամանակ է վորեւ արժեք ներկայացնում, յերբ նա աշխատանքի պրոցեսում ընդունում է իր կամկրես նյութականացած ձեվը:

Իսկ յեթե այդ արդյունքը, վորպես սպասողական արժեք, աշխատանքի վերջում չի ձևակերպվում ու չի ընդունում իր կոնկրետ նյութականացած ձեվը, այդ գեղքում մենք պարզապես վոչ մի արդյունքի մասին ել խռով չենք կարող:

Ենթադրենք, թե վորեւ հանճարեղ հեղինակի գլխում տարիների ընթացքում մի հոյակապ վեպ է ստեղծվում: Սակայն կարելի՞ յե արդյոք այդ վեպի մասին խռով վորպես արդեն կոնկրետ ստեղծագործության մասին: Պարզ ե, վոր վոչ, վորովնեաւ նա առաջմ դոյություն ունի միայն սուրյեկտիվ պլան, այսինքն՝ հեղինակի ստեղծագործական յերևակայության մեջ:

Սակայն, վորպեսզի մենք կարողանանք տվյալ վեպի մասին կոնկրետ պատողություններ անել և զգալ նրա գեղարվեստական արժեքն ու սոցիալական ոգտակարությունը, անհրաժեշտ է, վոր այդ հոյակապ վեպը դուրս գտ իր տուրիեկտիվ վիճակից, այսինքն՝ հեղինակի գլխից, և օրիեկտիվանու:

Իսկ վեպի սրբեկարիվացման համար անհրաժեշտ է, վոր նա ընկունի վորեւ կոնկրետ նյութականացած ձև Տվյալ դեպքում հեղինակի ստեղծագործության արդյունքի, այսինքն վեպի որյեկտիվացման համար նյութականացած ձև կամ միջոց կհանդիսանա դրվուն կամ տպագրված գիրքը:

Նույնը կարելի յե և պետք է ասել նաև նկարչի, յերաժշախ, քանդակադործի, ճարտարապետի և մյուս բոլոր արվեստագետների մասին:

Հետեւվարար միանգամայն պարզ ե, վոր դերասանի ստեղծությունը յան արդյունքը նույնպես աշխատանքի պրոցեսում պետք է անպայման որյեկտիվանա և ընդունի իր նյութականացած կոնկրետ ձևվը:

Հարցի այս կողմը լավ ըմբռնելու համար անհրաժեշտ ե մի փոքր հանգամանորեն ծանրթանալ այն պրոցեսի հետ, վոր դերասանն ունենում և նախքան իր ընմական տիպի ցուցադրումը:

Յենթադրենք, թե վորնեն դերասան պետք ե խաղա ֆալստաֆի զերը: Շատ պարզ ե, վոր նա իր դերն ու ամբողջ պիեսը խորապես վերլուծելուց հետո կակսի ուսումնասիրել նաև այն բոլոր աղբյուրները, վորոնք անհրաժեշտ են տվյալ տիպն ավելի լավ ըմբռնելու: Համար: Այսուհետեւ նա կակսի նաև թանգարաններ հաճախել, զանազան լուսանկարներ դիտել, ծանոթանալ գարայը՝ ջանի վոճի հետ և այլն, և այլն:

Միանգամայն պարզ ե, վոր այս ամենի հետեւվանքով դերասանի գլխում, այսինքն՝ նրա ստեղծագործական յերևակայության մեջ, կծնվի ու աստիճանաբար կակսի ձեվակերպվել ֆալստաֆի տիպը:

Սակայն բանն այն ե, վոր դերասանի գլխում յեղած ֆալստաֆը առայժմ մեզ համար վորեն սեալ արժեք չի կարող ներկայացնել, վորովհետեւ նա դեռևս գտնվում ե իր ստեղծագործողի դիմում: Մենք այդ ֆալստաֆի մասին վոչինչ չենք կարող ասել, քանի վոր մենք նրան կոնկրետ չենք տեսնում, չենք բումու չենք զգում:

Սակայն այժմ հարց ե առաջանում, թե արդյոք վո՞րն ե այն զգայական կոնկրետ ձեվը, վորի մեջ պետք ե առարկայանա դերասանի ստեղծագործության արդյունքը:

Հայտնի յն, վոր դերասանն իր ստեղծագործության շնորհիվ շարունակ կերպում ե ընմական զանազան տիպեր:

### Որինակ՝

- բանվորներ,
- կոլտնտեսականներ,
- ուսանողներ,
- կուլտակներ,
- կապիտալիստներ, և այլն, և այլն:

Ինչպես տեսնում ենք, սրանք բոլորն ել կենդանի տիպեր են և սրանցից ամեն մեկն իր կոնկրետացման համար դերասանից պահանջում ե կենդանի մարդ: Սակայն ինչպես և վո՞րտեղից կարող ե դերասանն ամեն անգամ կենդանի մարդիկ գտնել, վոր-

պիսզի նրանց միջոցով որյեկտիվացնի իր գլխի մեջ ձևակերպված այս կամ այն սոցիալական տիպը։ Շատ պարզ է, վոր դերասանը բարբ զեպքերում ել ստիպված և այդ սոցիալական տիպերը, վորպիս «կենզանի մարդկանց», մարմացնել իր մեջ ու ինչը նրանց բռլորի համար առարկայացման ու օբյեկտիվացման միջոց գտանալ.

Այսպիսով բնմական արվեստում կիթղամի մարզը հանդիսանում և դերասանի ստեղծագործության արդյունքի այն միակ ու վերջական նյութականացած ձևը, վորի շնորհիվ նա կարողանում և կոնկրետացնել ու որյեկտիվացնել իր կերտած բնմական տիպերը։

Մեր կարծիքով հենց այստեղ ել պետք և փնտուի դերասանական արվեստի առանձնահատկությունը, վորովհետեւ արվեստագետներից և վոչ մեկը, վորպիս կենդանի մարդ, լրիվ չափով չը հանդիսանում իր ստեղծագործության արդյունքի նյութականացման ձևը, ինչպես ուս տեղի լն ունենում գերասանի հատ։

Մյուս բոլոր արվեստագետներն իրենց ստեղծագործության արդյունքներն որյեկտիվացնելու և նրանց նյութականացած կոնկրետ ձև տալու համար կամ բոլորովին կարիք չունեն կենդանի մարդու, կամ թե կենդանի մարդուն ոգտագործում են միակաղմանի, այսինքն վերցնում են միայն նրա այս կամ այն առանձին հատկությունը։

### Որինակ՝

- պարարվեստում ստեղծագործության արդյունքի նյութականացման համար պահանջվող կենդանի մարդը միայն շարժվում է։
- ողերայում կենդանի մարդը գլխավորակեն յերգում է։
- ասմունքի արվեստում կենդանի մարդը հիմնականում խոսում ու նկարագրում է, և այն, և այլն։

Մինչդեռ գրամատիկական արվեստում ստեղծագործության արդյունքի նյութականացման ձևը դերասանից պահանջվում և այն պիսի կենդանի մարդ, վորն ընդունակ լինի և խոսել և պարել, և յերգել, և առնասարակ կատարել այն ամենը, ինչ վոր առնարաժեշտ ե տվյալ բնմական տիպը բազմակողմանի ու լիարժեք դրսեվորելու համար։

Ենք ահա, յեթե այժմ վերհիշենք մեր այս զրույցի սկզբանը բնմական արվեստի առանձնահատկության մասին հիշատակութ արագիցին սխալ ընորոշումները, ապա կարող ենք միանգում մայն վստահ կերպով սրբագրել այդպիսիներն ու ասել՝

ա) Վոր բնմական արվեստի ստեղծագործության նյութը հան-

պիտանում և վոչ թե «ինքը դերասամը», այլ դրամատուրգիական յերկը, դեր, սոցիալական ժիպը:

բ) Վոր բնեմական արվեստում դերասանը միաժամանակ հանդիսանում և վոչ թե իր ստեղծագործության սուրյեկտը և որյեկտը, այլ հանդիսանում և իր ստեղծագործության սուրյեկտն ու իր ստեղծագործության արդյունքի որյեկտվացման ձեւը կամ միջոցը:

Հետեւաբար պիտք և ասել՝ զերասանական արվեստի առանձնահատկությունն այն է, վոր նա իր ստեղծագործության սուրյեկտը՝ լինելուց զատ, վորպես կենդանի մարդ, միաժամանակ հանդիսանում և նաև իր ստեղծագործության զարծիքն ու գեղարվեստական յերկի, այսինքն իր կերտած բնեմական տիպերը՝ սինտեզուրն ու որյեկտվացման միջոցը:

### Ս Տ Ո Ւ Դ Ի Զ Ա Ր Ծ Ե Ր

1. Ի՞նչ և նշանակում աշխատանքի արդյունք:
2. Ի՞նչ և նշանակում աշխատանքի արդյունքի որյեկտավիվացման կամ նյութականացման ձևի:
3. Ի՞նչն և հանդիսանում դերասանի ստեղծագործության արդյունքը:
4. Վերը և դերասանի ստեղծագործության արդյունքի որյեկտիվացման կամ նյութականացման ձևի:
5. Ի՞նչ և նշանակում կենդանի մարդն ոգտագործել լրիվ չափով:
6. Դերասանն իր ստեղծագործության սուրյեկտը լինելուց զատ միաժամանակ ել ի՞նչ և հանդիսանում:
7. Ի՞նչմետն և դերասանական արվեստի առանձնահատկությունը:

#### 4. ԱՌԱՆՉԱՆԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՍԽԱԼ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Այժմ մենք պետք եւ ծանոթանանք նաև բեմական արվեստի տառնձնահատկությունների մասին գոյություն ունեցող միշտը այլ անհիմն ու սխալ բնորոշումների հետ:

Որինակ՝

ա) Վոր իրը թե հատկապես թատերական արվեստի զեղարվեստական արդյունքը կարելի յեւ դիտել միայն նրա ստեղծագործության պացեաւմ,

Ճիշտ ե, բայց դա հատուկ ե նաև՝  
— արտասանության արվեստին,  
— պարարվեստին,  
— վոկալ արվեստին,  
— նվագ արվեստին և այլն:

բ) Վոր իրը թե թատերական արվեստում ստեղծագործողի ու սպառողի, այսինքն դերասանի ու հանդիսականի միջև շարունակ գոյություն ունի. կենդանի ու անմիջական կապ:

Միայլ ե, վորովհետև բեմական արվեստում հենց բացասականն ել այն ե, յերբ դերասանն իր խաղի ընթացքում մոռացության տարով իր դերը, կտրվում ե իր բեմական շրջապատից ու սկսում ե հանդիսականների հետ անմիջական կապ ստեղծել և ուղղակի գծով շփվել նրանց հետ:

Մինչդեռ դերասանը պետք եւ հանդիսականների՝ հետ շփվի իր դերի միջոցով.

Նշանակում ե՝ դերասանի ու հանդիսականի միջև յեղած կենդանի կապը միշտ պետք եւ կրի վոչ թե ուղղակի ու անմիջական բնույթ, այլ ճիշտ հակառակը, պետք եւ կրի անուզդակի և վոչ անմիջական բնույթ:

Այսինքն վոչ թե՝

— դերասան ու հանդիսական, այլ ճիշտ հակառակը,  
— դերասան, դեր ու ապա հանդիսական  
ևսկ նման անուզդակի ու վոչ անմիջական կապ միշտ պայու-

թյուն ունի նաև արվեստի մյուս բոլոր բնակավառներում, վա-  
րովնեան սանդազործողի ու սպառողի միջն միշտ գոյություն-  
ունի վորեն կոնկրետ գեղարվեստական յերկը

ՈՐԲԻՆԱԿԻ

— գերասան	գեր	հանդիսական,
— զրող	վեպ	ընթերցող
— նկարիչ	նկար	դիտող,
— յերաժիշտ	նվագ	լսող,
— պարող	պար	դիտող,
— յերգիչ	յերգ	լսող և այլն,

դ) Վոր իրը թե թատերական արվեստը տարբերվում է բոլոր  
մյուս արվեստներից նրանով, վոր նա սիմբօնիկ արվեստ և  
ծիշտ և, սակայն այս հարցն անհրաժեշտ և մի վորքը պար-  
պարանել, վորովհետեւ սինթեզի նման ըմբռնումը շատ միակողմանի  
յի ու վուզպար:

Նախ և առաջ պետք է գիտենալ, վոր՝

«... տռանց տնտիզի չի կարող սիմբեզ լիմել, առումն Ենգելսը\*):  
Նշանակում ե, չի կարելի սինթեզը մեխանիկորեն անջատել  
անալիզից ու հակադրել իրար, քանի վոր թատրոնն այս իմաս-  
տով նույնքան սիմբօնիկ ե, վորքան յեվ անալիտիկ. Այնուհետեւ,  
յերբ մենք առում ենք, թե թատրոնը սինթետիկ արվեստ ե, զա  
նշանակում ե, վոր մենք անուղղակի կերպով ուզում ենք ասել,  
վոր մյուս բոլոր արվեստները սինթետիկ չեն ևսկ մենք գիտենք,  
վոր արվեստը գիտությունից տարբերվում է նրանով, վոր արվես-  
տում առաջատարը հանդիսանում է գեղարվեստական պատկերը:  
Այսեղից ել առա հարց և առաջանում կարմա և արդյոք գեղար-  
վեստական պատկերը ըստ եյության սինթետիկ չլինել, կարծում  
ենք, վոր վոչ, վորովհետեւ գեղարվեստական պատկերը, արվեստի  
վոր բնագավառումն ել վոր նա լինի, պետք և ըստ եյության միշտ  
արտահայտի կյանքի յերևույթների տիպիկ և վոչ թե մասնա-  
վոր կողմնը»:

Նա պետք է իր մեջ խոացրած ընդհանրացումներ պարու-  
նակի, և վոչ թե արտահայտի միայն պատահականն ու յեղակին  
Յեվ այսպես, յեթե պարզ ե, վոր արվեստի առանձնահատ-  
կությունը կազմում է գեղարվեստական պատկերը և ապա պարզ

\* Տ. Ենգելս, Անտի-Դյուրինգ, 1932 թ. եջ 54.

և նաև այն, վոր այդ գեղարվեստական պատկերը կամ կերպարը վոչ մի դեպքում ըստ եյության չի կարող սինթետիկ չլինել, ապա ել Բնչ միտք կամ հիմք կա ասելու, թե միայն թատերական արվեստն և սինթետիկ արվեստ:

Նշանակում ե, միանգամայն պարզ-ե, վոր թատերական արվեստն այս առումով ևս նույնքան սինթետիկ ե, վորքան նաև ամեն մի արվեստ, վոր գործ ունի գեղարվեստական պատկերի հետ:

Իսկ յեթե թատերական արվեստի սինթետիկականությունը ավագ գեղագում հասկացվում է սոսկ վորոնես տարբեր արվեստների որդանական միացում, ապա այդ առումով նույնովու նա յեզակի չե, վորովհետև այդ իմաստով սինթետիկ և նաև կլասիկ ճարտարապետությունը, վորտեղ ճարտարապետությունը, նկարչությունն ու քանդակագործությունն այնպիսի որգանական միասնական հաղմում, վոր նրանց բնակլ հնարավոր չի իրարից զատել:

Այսպիսով, վերջ ի վերջո ստացվում ե, վոր բաժերական արվեստը նույնքան սինթետիկ արվեստ ե, վորքան և ամեն մի արվեստ:

Դ) Յեզ վերջապես, վոր իրը թե թատերական արվեստը կալիկիլ ստեղծագործություն ե,

Ճիշտ ե, սակայն նույնը կարելի յե ասել նաև բոլոր  
— սիմֆոնիկ համերգների,  
— ջազերի,  
— խմբային պարերի,  
— յերդեցիկ կազելլաների և այլոց մասին:

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ծ Ե Ր

1. Խնչմաւ չի կարելի ասել, վոր միայն թատերական արվեստն և սինթետիկ արվեստ:
2. Գեղարվեստական պատկերը կարմաղ ե ըստ եյության սինթետիկ չլինել:
3. Տարբեր արվեստների որդանական միացում միայն թատրոններն ե տեղի ունենում, թե դա հատուկ և նաև այլ արվեստներին:
4. Կարելի՞ յե ասել, վոր բեմական արվեստում դերասանի ու հանդիսականների միջև գոյություն ունի ուղղակի և անմիջական կապ:

5. Ի՞նչներ չի կարելի ասել, վոր միայն թատրոնում գոյացնելուն  
ունի վոչ անմիջական կապ ստեղծագործողի ու սպասողի  
միջև:
6. Ճիշտ ե, վոր միայն թատերական արվեստն և պա-  
հանջուռ ստեղծագործական կոլեկտիվ:
7. Ճիշտ ե, վոր միայն թատերական արվեստի արդյունքն ե, վոր  
կարելի յեղիտել նրա ստեղծագործության պրացեսում:
8. Ի՞նչպիսի բնույթ պետք ե կրի դերասանի և հանդիսա-  
կանի միջև յեղած կապը:



III

ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ



Գետք և իմանալ, վոր՝ այսպիս կոչված՝ «գերասանությամբ» կարող և զբաղվել ամեն մեկը, վորովհետև վերջ ի վերջո առըիների ընթացքում կարելի յե մի քանի տասնյակ ձևեր, յեզանակներ և տեխնիկական պրիուներ սովորել և շարունակ նրանցով գործ անել:

Սակայն դա կլինի վոչ թե կենդանի ստեղծագործություն, այլ հօւգականուրյանից գուրեկ մի առնեա, վորը կերի արագարեամի, կամ ինչպես ընդունված և առել, թատերական ռամպշի կնիք:

Թատերական կամ գերասանական շատամպշները գլխավորապես առաջանում են նրանից, վոր գերասանը, ըստ եյության զուրկ լինելով ստեղծագործական ինքնուրույնությունից, ստիլված և լինում շարունակ ընդորինակել ուրիշի գտած արտահայտչական միջոցներն ու, աստիճանաբար ընտելանալով նրանց, սկսում և անխստիր իր բոլոր գերերը խազալ նրանց ունաւթյամբ:

Նման գերասանները բեմի վրա կենդանի ու բազմակողմանի սոցիալական տիպեր կերտելու փոխարեն, ամեն անզամ սկսում են այդ անկենզան ու միորինտէ շատամպշների ոգնությամբ իրենց արագարեատային «յեռը» խազալ:

Մինչդեռ խոկական գերասանը վոչ միայն չպետք և ընդորինակի ուրիշի արտահայտչական ձևերն ու միջոցները, այլև պետք և խուսափի իր սեփական արտահայտչական միջոցներն անընդհատ կրկնելուց, վորովհետև յուրաքանչյուր արտահայտչական ձև կամ միջոց՝ վոր գերասանն սկսում և իր բոլոր գերերում նույնությամբ կրկնելու աստիճանաբար կորցնում և իր ներդորենության ուժը և վեր և ածվում մեռած շատամպշի:

Այլ կերպ ասում, թատերական կամ գերասանական շատամպշները կոնկրետ բովանդակությունից զուրկ և «ընդհանրապեշի» բնույթ կրող արտահայտչական ձևեր են, վարոնց կառշամ և անճարակ գերասանը և այլև պակ չպալով, արհեստագորի պես սկսում և ոգտագործել զբանց իր բոլոր գերերում և բայց դեպքերում

Մինչդեռ ծիծագի կամ լացի այն ձեզն ու յեղանակը, վոր կարող ե ունենալ «Պատվի համար»-ի 50 տարեկան խորամանկ, կիսազբագետ, անվրդով, շողոքորթ ու խարդախ Ստղարելլը, բոլորովին կտարբերվի նույն պիճուի 26 տարեկան, կուլտուրական, որմազամիտ ու առջարյուն նրայանի լաց ու ծիծագից:

Թատերական «շտամպը» բեմական արվեստում գերասանի համար այնպիսի մի սոսկալի շարիք է, վոր գերասան-առեղծադադողին աստիճանաբար դարձնում և դերասան-արհեստավոր:

Բեմական արվեստում շտամպները լինում են բազմաեկակ-որինակ՝

— բարկություն, սեր, տաելություն, վիշտ, խանդ ու նման զգացմունքներ արտահայտելու շտամպներ.

— առողջանության, շեշտագրության և ձայնի յնլենջների շտամպներ.

— գիմախաղի, շարժումների և քայլվածքի շտամպներ.

— գրիմի և զգեստագործան շտամպներ.

— կլասիկ ու պատմական դերերի կտարման շտամպներ.

— ամրող պիեսների բեմագրության շտամպներ, և այն, և այլն:

Դերասանը «շտամպ»-ի յե գիմում զյուավորապես՝

ա. ընդունակության բացակայության և ստեղծագործական անհարակության հետեւնքով.

բ. գերասանական վարպետությանն անբավարար տիրապետելու պատճառով.

Նշանակում ե՝ յուրաքանչյուր դերասան կամ ուսանող պետք և շատ լավ գիտենա, վոր բեմական արվեստում պիտանի լինելու համար նախ և առաջ անհրաժեշտ, և ունենալ համապատասխան բնդունակություն:

Ընդունակությունը շպետք և հասկանալ վորպիս մի անորոշ և անբացատրելի բան:

Մարզու ընդունակությունը նրա անձնական հակումների, հատկությունների ու տվյալների մի այնպիսի ներդաշնակություն և, վորը ընորոշում և տվյալ անհատի այս կամ այն ասպարիզում աշխատելու կարողությունն ու պիտանիությունը:

Ընդունակությունը բնական մի այնպիսի տվյալ և, վոր խորապես պայմանավորված և նախ անհատի ֆիզիկական ու հոգիկան կառուցվածքով և ազա՝ մարդկանց նախորդ սերունդների սոցիալական-փորձի ժառանգականությամբ:

Սակայն մարդկանց ընդունակությունների դրսեվորման ու գործացման դործը վճռապես պայմանավորված և նաև սացիալական միջուվայրով:

Մարդ կարող է բնականից այս կամ այն ընդունակությունն ունենալ, սակայն միջավայրն ու սոցիալական պայմանները նրա այդ տվյալները կարող են զարգացնել կամ բթացնել:

Դերասանի ընդունակությունը բաղկացած է հետեւյալ չորս հիմնական տվյալներից:

1. ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՎԱՐ ՅԵՐԵՎԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ,
2. ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒՐՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒԹԻՒՔ, ԿԱՄ ԲԵՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ «ՀԱՎԱՏ».
3. ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՐՑԻՒԹ,
4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՏ ՏՎՅԱԼՆԵՐ.

### 1. ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՅԵՐԵՎԱԿԱՎՈՒԹՅՈՒՆ

Գետք է իմանալ, վոր յերևակայություն այս կամ այն չափով ամեն մարդ ունի:

Սակայն բանն այն է, վոր գերասանից պահանջվում է վոչք սովորական, այլ ստեղծագործական վառ և առօդ յերևակայություն:

Այսինքն՝ այնպիսի յերևակայություն, վորի շնորհիվ գերասանը կյանքում յեղածն ստրկորեն ընդորինակելու փոխարեն կարողանա միշտ նորմ ստեղծել:

Սա, ինարկե, վոչ մի դեպքում չպետք է հասկանալ այնպիս, թե իր գերասանի յերևակայությունը պետք է կրի բոլորովին կյանքից կարգածու վերացական բնույթը. Դա կլիներ շատ հիվանդու ու անարժեք մի յերևակայություն:

Դերասանը պետք է ունենա այնպիսի յերևակայություն, ու վորի շնորհիվ նա կարողանա ստեղծագործել այնպիսի գեղարվեստական տիպեր, վորոնց գիտելիս կարելի լինի ասել, թե տվյալ ընմական տիպերը իրականում գոյցություն ունեցող մարդկանց նման չեն, սակայն միանվամայն հնարավոր ու հավանական են, վոր այդպիսիք լինեն:

Բացի այդ, պետք է իմանալ նաև, վոր մարդու յերևակայությունը, վորքան ել նա վառ ու վերացական լինի, այնուամենայնիվ հիմնականում միշտ պայմանավորված են:

ա. Նրա գիտողականությամբ և

բ. Նրա կյանքի փորձով:

Մարդ յերբեք չի կարող իր յերևակայտւթյամբ այնպիսի մի քան ստեղծել, վերն իր հիմնական կամ տռանձին մասերով չհիշեցնի ռեալ կյանքի այս կամ այն մոմենտը:

### ՈՐԻՒԱԿ՝

— Հիշեցնեք բոլոր առասպելական կենդանիներն ու մարդկանց յերևակայտւթյան շնորհիվ ստեղծված զանազան տեսակի դիցուքնական պատմությունները հին Հռոմաստանում, հայրի, վրացիների և այլ ժողովուրդների մեջ:

Յերևակայտւթյամբ մի վարեւ բան՝ ստեղծել նշանակում են սպավելով կյանքի ռեալ տարրերից, մեր պատկերացութերի միջոցով նրանց զանազան նպատակահարմար կոմբինացիաների յենթարկել և նրանցով կառուցել հավանական ու ճշմարտանման հորը:

Դերասանը նույնագիս, յեխելով իր դերի տվյալներից և կյանքի մասին ունեցած իր ճանաչողությունից, պետք են կարողանա իր վառ և առաղջ յերևակայտւթյան շնորհիվ ստեղծել ու պատկերել զանազան ռեալ՝

— դեմքեր ու դեռքեր,

— մարդկանց հարաբերություններ,

— բնավորություններ, սովորություններ և այլն:

Առանց վառ յարևակայուրյան չի կարող լինել դերասան թեմը շատ անհղորմ և դեպի ամեն մի տափակություն ու միորինակություն:

Դերասանը վոչ թե պետք են ընդունակի իր շուրջը տեսան մարդկանց, այլ՝ ուշի ուշով դիտելով նրանց, իր վառ յերևակայտւթյան շնորհիվ պետք են կարողանա ստեղծել բեմական գեղարվեստական նոր տիպեր:

Առանց վառ և ռեալ յերևակայտւթյան դերասանը դադումնում և ստեղծագործող լինելուց, — նա պարզապես դառնում է արհեստավոր:

## 2. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒՐՃ ՎԵՐԱԲԵՐՄՈՒԹ ԿԱՄ ԲԵՄԱԿԱՆ ՊԱՑԱՌԱԿԱՆ «ՀԱՎԱՏ»

Թատերական արվեստում ամեն ինչ միշտ արվում է վարոշ պայմանականությամբ: Նույնիսկ այն գեղագործում, յերբ թատրոնն իր հիմնական վաճի ու «զավանանքի» տեսակետից կանգնած են ծայրական նատուրալիզմի կամ ռեալիզմի դիրքերում, այնուամենայնիվ դա չի նշանակում, վոր ավալ թատրոնը բոլորովին ազատ և

պայմանականությունից, Մենք այստեղ նկատի ունենք վոչ թե թատերական վոճի պայմանական հասկացողությունն ու ցուցադրումը, այլ առհասարակ այն պայմանականությունը, առանց վորի հնարավոր չե թատրոնում վորեւ գործ անել:

Յեվդա ճիշտ ե, վորովնեան թատրոնում ամեն ինչ բարեկեղծ վում եւ Այստեղ բնավ դոյություն չունեն վոչ բնական ծառեր ու մարմարի պալատներ, և վոչ ել իսկական շատրվաններ, թագավորներ, զործարաններ ու կոլտնտեսություններ:

Յեվդ յեթե վորեւ թատրոնի նույնիսկ հաջողվի ել ներկայացման ոկղորից կամ ընդմիջումի ժամանակ, իր բեմի վրա իսկական ծառերից անտառներ կամ մարմարից պալատներ կառուցել այսոււմնայնիվ դիտող հանդիսականներից և վոչ մեկը չի հավատա, վոր ներկայացման ժամանակ բեմի վրա իսկական ծառեր են բռնել:

Իսկ դա նշանակում ե, վոր թատրոնում բոլոր գեղքերում պայմանականությունը՝ վորպես բեմական արվեստի նախապայմանաթիվութիվի լի:

### Որինակ՝

— Ամենանատուրալիստական թատրոնում անդամ դերասանները բեմի վրա իրար հետ շնորհով խոսելիս միշտ խոսում են այնպես, վոր դահլիճը նրանց լսի:

Պիեսի գիշերային տեսարանները միշտ լուսավորվում են այնպես, վոր հանդիսականը՝ կարողանա տեսնել բեմում կատարվող դրծողությունները:

Այստեղից ել առա հարց ե ծագում, դերասանը պե՞տք ե հավատա արդյոք իր բեմական շրջապատի պայմանականությանը, թէ վոչ՝ Պարզ ե, վոր վոչ, վորովնեան հավատալ վորեւ բանիր նշանակում ե նախապես ընդունել նրա ռեալ գոյությունը:

### Որինակ՝

— վոր կտավների վրա ներկված գետերն ու առվակները իրոք բնական հոսուն ջրեր են.

— վոր դիքաից ու լաթերից պատրաստված ծառերն ու թփերը իրոք բունում են.

— վոր սյունապարդ դահլիճը, ուր դերասանը արունակ անց ու գործ ե անում, իսկական մարմարից ե.

— վոր ժող. արտիստ Հ. Աբելյանը «Պատվի համար» պիեսում Անդրիաս Սլիպրուց խաղավիս իրոք ինքն այնպիսին եր, և այլն, և այլն:

Իսկ մենք արդեն զիտենք, վոր թատրոնում ամեն ինչ բարեկեղծված և ու պայմանական վոր այնտեղ վոշինչ խկական չեալի իմաստավ, ինչ իմաստով վոր նրանք մատուցվում են զիտող հանդիսականներին։

Նշանակում ե, թատերական արվեստի այս անխռուսափելի պայմանականությունը դերասանը նախապես զիտենալով ու ընդունելով հանդերձ, պետք է ընդունակություն ունենա և կարողանագեղի այդ վոչ ռեալ շրջապատը վերաբերվին այնպես, ինչպես յեթե դա լիներ իրոք խկական և ռեալ նա պետք և կարողանաըստ հարկի հաճողեցուցիչ կերպով արժեքավորել իր ընմական ամրող շրջապատն ու իր բոլոր գրությունները։

Նա պետք և կարողանա իր ստեղծագործական լուսջ վերաբերմանը համապեկ և համապատասխան վերաբերմանը ստեղծել իրեն դիմուղ հանդիսականների մեջ գեղի այն ամենը, ինչ տեղի յեւ ունենում բեմի վրա։ Դերասանն այդ ամենին պետք և մոտենամիանգամայն զիտակցաբարար, և նա այդպես ել անում և նա շատ լավ զիտե, վոր իր շուրջն ամեն ինչ բարեկեղծված ե, և վոր ինքը գործում և վոչ թե խսկական պարտառում, հիվանդանոցում, բանտառում կամ արտօնամունում, այլ՝ թատրոնում նա շատ լավ զիտե, վոր ինքը վոչ թե շրջապատված և խական հայրերով, մայրերով, վնասաբարելիներով, մատնիչներով ու թագավորներով, այլ՝ վոր այդ բոլոր գործող անձինք հանդիսանում են իր գերասան խաղընկերները։

— Վոր բեմի վրա վոչ վոք չի սպանում, չի թունավորում, չի խեղդում։

— Վոր առանձանակը, վորով գործող անձն իրեն սպանում և, միանգամայն անվտանգ ե։

— Վոր բաժակը, վորով նա ըստ դերի թույն և խմում, զատարկ ե։

— Վոր չորս կամ հինգ գործողության ընթացքում ինքն խսկապես չի ծերանում, և այլն, և այլն։

Դերասանը բեմ մտնելիս պետք է վոչ թե միամոռեն նավտա իր բեմական պայմանական միջավայրին, այլ նա իր ստեղծագործական լուրջ վերաբերմանը ու վարպետության շնորհիվ պետք և կարողանա հաճողեցուցիչ կերպով ձեվացնել ու խաղալ այդ հավատք-ը։ Իսկ յեթե զերասանը բեմի վրա ամեն բան խսկականի տեղ դնի ու իրոք հավատա, ինչպես այդ հաճախ փորձում են հավատացնել թատերական արվեստի շատ միամիտ տեսաբան-

ներ, ապա նու շատ շատով ստիպված կլինի խելագարվել ու հողեկան հրվանդների հիվանդանոցը տեղափոխվել:

Սակայն ճիշտ այնպես, ինչպես չի կարելի՝ զբամեքենայի տառերից վորոշել թե կես ժամ առաջ նրա վրա ինչ բովանդակության դրություն և տպվել, ճիշտ այնպես ել ներկայացումը վերջանաւոց հետ չի կարելի դերասանների յերեսին նայելով վորոշել, թե նրանցից ով ինչ դեր և խաղացել<sup>1)</sup>:

Առանց ստեղծագործական լուրջ վերաբերմունքի դերասանը չի կարող համոզել և հուզել հանդիսականին:

### 3. ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՐԴԻՌ

Ներաստանի այս ընդունակությունը պահանջում է, վոր նու ամեն անդամ, աշխատանքի ժամանակ, կարողանա զրգութել ու համակվել աշխատանքի բուռն ցանկությամբ:

Նա իր հոգեկան և ֆիզիկական ավաները պետք և այնպես մարզի, վոր պահանջված պահին կարողանա անմիջապես ինքն իրեն յենթարկել և պատրաստ զգալ ստեղծագործության համար:

Այսպիսով գերասանի այն հատկությունը, վորը ապահովում և հարատվորություն և տալիս նրան իր ստեղծագործության գործիքը լարել ու աշխատեցնել, կոչվում և ստեղծագործական գրգիռ կոմ պատրաստականությամբ:

Ներաստանը պետք և միշտ ակտիվ ու սիրահոժար կերպով ուղենա և ձգտի կատարել այն աշխատանքը, վոր պահանջվում է նրանից, վորպես տվյալ գերի համար ընտրված լավագույն գերակատար, Ունենալ ստեղծագործական գրգիռ, նշանակում և միշտ ներքին մի հաճելի թրթիռ զգալ և, պատրաստ լինել ստեղծագործության համար:

Ստեղծագործության թրթիռը այս դեոլքում չպետք են փոխել վախի այն զգացումի հետ, վոր հաճախ այս կամ այն գերասանն ունենում և իր մուտքից առաջ. Ներաստանի վախի զգացումը գըշխավորապես առաջ և գալիս:

— իր բեմական անելիքը չի մանալուց,

1) Հեղալ որինակը պահանջում է, վոր մենց նախապես բոլորովին քննուչներ ու ծանոթ լինենք ովյալ գերասանների հետ և ազա շահուց և նաև գիտենանց. Մե այդ յերեկո թարբունում ինչ ներկայացում և անզի ունեցել.

— ստեղծագործական փորձի պահանջմանից,  
— զերը չհաղթահարելուց:

Մենք խոսում ենք այն թրթիռի կամ հաճելի հուզմունքի  
մասին, վորը դերասանին՝ աշխատանքից առաջ ու աշխատանքից  
ընթացքում վորեվորում, զինում և ու բարձրացնում և նրա ստեղծագործական ակտիվությունը: Իսկ այդպիսի թրթիռ պետք է  
ունենա ամեն մի դերասան: Առանց այդ հաճելի հուզմունքի և  
անհրաժեշտ խտանքի դերասանը կորցնում է իր աշխատանքի  
զերմարդուրյան ուժը և դադարում է՝ արվեստագետ լինել ու չվախենալ  
ստեղծագործելուց: Այդ նշանակում և կարողանալ վորեվոր-  
վել աշխատանքի ակտիվ ցանկությամբ: Իսկ դա կարող է տեղի  
ունենալ միայն այն դեպքում, յերբ դերասանը ընդունակություն  
ունի ժամանակին ստեղծագործական պատրաստակամությունը  
զգալու: Ստեղծագործական գրդիռ ունենալ և միշտ պատրաստ  
լինել ստեղծագործության համար, նշանակում և գտնվել հոգեկան  
ու ֆիզիկական այնպիսի ակտիվ վիճակում, յերբ հնարավոր և  
մինում:

ա) գործել միանգամայն ազատ ու համոզեցուցիչ.

բ) շրջապատի յերևույթներն ու գործող անձանց արարք-  
ներն ընդունել վորպես անսպասելի ու չնախապատրաստված-  
գ) գրություններն արժեքավորել ու դնահատել ծայր տա-  
տիճան ճիշտ:

Առանց ստեղծագործական գրդիռ դերասանը նման կլինի-  
մարած կրակի:

#### 4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՆՏ ՏՎՅԱԼՆԵՐ

Գետք եղիտենաւ, վոր դերասանը բացի ստեղծագործական յե-  
րեւակայությունից, բեմական շրջապատին լուրջ վերաբերվելու ըն-  
դունակությունից ու ստեղծագործական գրդիռ ունենալուց, պետք  
է ունենա նայել:

ա) ուժեղ ու հաճելի ձայն:

Զայնը նույնպես բնական տվյալ և և չի կարելի «ձայն»  
սովորել կամ թի «ձայն» ձեռք բերել:

Ենթե վորեն մեկը բնավ ձայն չունի կամ թի՝ ունեցած ձայնն  
աշխաղվելի խղված և, նրան վոչ վոչ չի կարող հաճելի ու հնչուե-

Ճայն տար Կարելի յե միայն ունեցած ձայնը մեծ կամ փոքր հաջողությամբ մշակել ու հղկեր

Դերասանը պետք և խռուափի նաև իր ձայնը կեղծելուց, վարավեճանե քացի կոկորդի լարումից և շատամզից, դրանից ուրիշ վաշ մի լով բան չի ստացվում:

Դերասանը պետք և իր ձայնն այնպես մարզի, վոր ստիպագում չմնի իր բոլոր դերակառում շարունակ միենույն յելենիշներն ոգուազործել և ընկնել միորինակության մեջ:

Բացի դրանից՝ դերասանը պետք և շատ լուրջ մատանգաւթյան առարկա դարձնի նաև իր առողջանության հարցը:

Առաստարակ մարդիկ խսուում են նրա համար, վորպեսզի կարողանան արտահայտել իրենց ստժերը:

Նշանակում են դերասանն իր առողջանությունը պետք և այնպես մարզի՝ վոր նանդիսականները կարողանան նրան լսել ու հասկանալ:

Դերասանը պետք և սովորի խոսել հասարակ, պարզ և հասկանալի:

բ) Ալեարին սվյաջներ:

Դերասանը պետք և ունենա նաև համապատասխան արտաքին ավյաներ, Ֆիզիկական զգալի արատներով չի կարելի աշխատել թատրոնում վորպես ստեղծագործող:

Ենթե վորն մեկը կույրե, կաղ, կակաղ կամ թե խուլ, նրան վոչ վոք չի կարող տալ նոր աչք, ականջ կամ լեզու:

## ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Արդյոք ամեն մեկն ել կարմղ և ստեղծագործել:
2. Վորմնք են դերասանական ընդունակության չորս հիմնական ավյաները:
3. Ի՞նչ և նշանակում ստեղծագործական յերեակայությունը:
4. Կարելի՞ յե արդյոք յերեակայել այնպիսի բան, վոր վոչնչով չհիշեցնի սեալ կյանքի այս կամ այն մոմենտը:
5. Ի՞նչ և նշանակում բնմական կամ ոլոյմանական «հավատաւ»:
6. Կարմղ և արդյոք դերասանն իսկապես հավատալ իր բնմական շրջապատին:
7. Ի՞նչ և նշանակում ստեղծագործական դրդիու

8. Ի՞՞նչ աղիսի ֆիզիկական անհրաժեշտ տվյալներ են պահանջվում դերասանից:
9. Լավ և արգյուք, յերբ դերասանը շարունակ կեղծում է իր ձայնը:
10. Ի՞՞նչ պետք է անի դերասանը, վարպետի ձայնի խնդրում չընկնի միուրինակության մեջ:

IV

۷۹۰۸



**Մենք** արդեն պարզեցինք, վոր արվեստի ընազավառում պիտօնի լինելու և ստեղծագործությամբ զբաղվելու համար նախ և առաջ անհրաժեշտ և համապատասխան ընդունակության իսկ այժմ պետք և դիտենալ նաև այն, վոր ընդունակություն սպարել չի կարելի:

Թատերական և վոչ մի զարոց, տեխնիկում կամ ստուդիա յերեք չի կարող իր ուսանողներին դերասանական ընդունակություն ներարկել:

Մասնագիտական լավագույն զարոցն անդամ կարող և միայն մարդել ու զարգացնել իր ուսանողի անհատական ավագաները:

Իսկ մարդել ու զարգացնել կարելի յե միայն այն, ինչ վորապես ընդունակությունն արված և ընությունից:

#### Որինակ՝

- Գիտիկական անթերի արտաքին,
- առողջ ձայնի և լավ լսողության նախնական ավագաներ,
- վառ յերմակայություն,
- ստեղծագործական դրվին, և այլն, և այլն

**Մենք** արդեն ասացինք, վոր առանց համապատասխան ընդունակության դերասանը փաստորեն դադարում և ստեղծագործող լինելուց և գանում և արհեստավոր:

Այնուհետև՝ լավ զերասան լինելու համար բավական չե միայն ընդունակություն ունենաւ, այլ անհրաժեշտ և նաև ձեռք բերել բնմտկան սեխսնիկու, այսինքն՝ դերասանական վարպետություն:

Սակայն տեխնիկայի կարելությունը վոչ մի զեղչում չի կարելի և չպետք և հասկանալ սոսկ մեխանիկորեն, այսինքն՝ վոր իր թե կարելի յե բնավ ընդունակություն չունենաւ, բայց բեմական տեխնիկա սովորելով ստեղծագործող դերասան դառնալի:

Այսպես հասկանալ խնդիրը, նշանակում է ժխտել արվեստի արժեքը և, գոենկացնելով այն, արվեստագետի կենզանի ստեղծագործությունը հասցնել մերկ տեխնիկովմի:

Դերասանական վարպետությունը կարևոր և միայն և միայն

այն զեպքում, յերբ զերտսանը, ինչպես արդեն ասել ենք, հիմնականում ունի համապատասխան ընդունակությունն Սակայն, վարպետովի դերասանը կարողանա իր ընդունակությունը խելացի կերպով ոգտագործել, նա ընդունակությունից բացի պետք է ձեռքբերի նաև անհրաժեշտ վարպետարյան:

Իսկ վարպետովի յուրաքանչյուրի համար պարզ լինի, թե ինչ բան ե բեմական կամ դերասանական վարպետությունը, նա պետք է նախ և առաջ շատ լավ գիտենա այն տարրերությունը, վորը գոյություն ունի բեմական և իրական կյանքի միջև:

ա. Կյանքում մենք մեծ մասամբ ամեն ինչ անում ենք մեր անունից և մեր ցանկությամբ վոչ վոք մեզ չի ստիպում կատարել այս կամ այն զործողությունը, իսկ բեմում մենք ամեն ինչ անում ենք դերի անունից և յելնում ենք դերի պահանջներից:

բ. Կյանքում մենք շփվելով ու գործ ունենալով սեալ առարկաների ու մարդկանց հետ՝ վերաբերվում ենք նրանց այնպես, ինչպես այդ թերապում և մեզ մեր գիտակցությունը, իսկ բեմում մենք ստիպված ենք մեր յերևակայության շնորհիլ նախ ստեղծել այդ մեջավայրն ու ապա վերաբերվել զեպի այն, յելնելով դերի հոգերանությունից և աշխարհայացքից:

գ. Կյանքում մենք սովորական պարզ զործողություններ կատարելիս յերբեք նախորոք չենք մտածում այն մասին, վոր այդ զործողություններն անպայման բնական ու համոզիչ ստացվեն, Մինչդեռ բեմում զերտսանի կատարած գործողությունները մրցուպայմանավորված են չափի զգացումով, Թատրոնում առանց չափի զգացումի չի կարելի կատարել վոչ մի ճշմարտանման ու համոզիչ զործողությունն:

Յեզ ահա, վորպետովի զերտսանը կարողանա բեմում վորեւ հասարակ ու համոզիչ զործողություն կատարել, նա պետք է ձեռք բերի այն անհրաժեշտ ու մինիմալ վարպետությունը, առանց վորի ամենաընդունակ զերտսանն անգամ իր ամենորյա աշխատանքում շատ հաճախ դժվարությունների յի հանդիպումն: Դերտսանը բեմի վրա իրեն կարող է ապա զգալ միայն այն գեղքում, յերեն հաստատ կգիտենա ու կտիրապետի իր տեխնիկայի հիմնական առքերին:

Կարելի յե ասել, վոր զերտսանների մեծագույն մասը վոչ թե սաեղծագործողներ են, այլ պարզապես ընդորինակողներ: Յեզ այդ սասաւցել և զմխագորտապես վոչ թե այն բանից, վոր չերանք

անընդունակ մարդիկ են, այլ վորովհետեւ նրանք չգիտեն ու չեն աիրապետում իրենց տեխնիկային:

Նրանք պարզապես խաղում են ռեժիսյորի ոգնությամբ. բավական է, վոր ռեժիսյորը հիշյալ կարգի գերասաններից հեռանա, նրանք անմիջապես հուսահատվում և անոգնական վիճակի մեջ են ընկնում. Բացի այդ, չի կարելի բավարարվել նաև գերասատնական վարպետության մասին սոսկ մի քանի կցկառուր տեղեկություններ իմանալով, այլ անհրաժեշտ և սեփական անձի վրա տեսկան մարզանքներ անել և որպանապես աիրապետել նրանց. Առանց ստեղծագործական պրոցեսի հիմնական տարրերի որգանական յուրացման չկա ու չի կարող լինել և վոչ մի այլ տեսակի գերասանական վարպետություն. Պետք և իմանալ, վորդերասանը, յեթե միայն նա ընդունակ դերասան է, միշտ ել իր ամենորյա պրակարիկայի միջոցով, դիտակցարար թե անգիտակցար—այդ միևնույն և—աստիճանաբար հասնում և ի վերջո առավել կամ նվազ չափով ձեռք և ընթում իրեն անհրաժեշտ վարպետությունը, սակայն այն տարրերությամբ միայն, վոր գա վենում և արդեն չափովանց ուշացած. Դերասանն իր վարպետությանը պետք և տիրանա վորքան կարելի յե շուտ, վորովհետեւ ուս հասրավորություն կտա նրան արագ զարգանալ ու զգալապես անել:

Սակայն վարպետությանը չի կարելի աիրապետել միանգամից: Դա բավական մեծ աշխատանք ու յեռանդ և պահանջում Այստեղ շտա հաճախ առաջ են դալիս տանջանքի և հուսահատության բովակներ: Յեզ ճիշտ այնպես, ինչպես չի կարելի առանց հեծանիվից հատկությունները նախապես իմանալու հեծնել այն ու անսարժաթք քշել ճիշտ այնպես ել չի կարելի առանց ստեղծագործական պրոցեսի հիմնական տարրերին աիրապետելու պատասկանութել:

Դերասանը պետք և ձգտի կատարելության հասցնել իր վարպետությունը: Այս ինդրում գերասանը պետք և աշխատի ձեռք ընթել անհրաժեշտ առախօսականություն:

Արտիստականություն առելով մենք հասկանում ենք գերասատնի այն հատկությունը, վոր ցույց է տալիս, թե տվյալ գերասանները արվեստագետ ինչպիսի թեթեությամբ, ճարտարությամբ ու կուլտուրականությամբ՝ և տիրապետում իր վարպետությանը:

Ուրիշ մասնագետներ ևս տարբերվում են իրարից նույն այդ հատկություններով, ինչպես և շատ տաղանդավոր գերասաններ, վորոնք՝ բնավ իրար չղիջելով ընդունակությամբ՝ այնուամենայ-

Նիվ Երաբից տարրերվում են իրենց արվեստի վարպետությունը տիրապետելու մաքրությամբ ու թեթևվությամբ:

### Արբինակ՝

— բեմի վրա կոպտությունը չի կարելի կոպիտ խաղալ,

— ծուզությունը՝ ծույլ,

— ծանրաշարժությունը՝ ծանրաշարժ, և այն, և այն:

Դերասանը բեմի վրա կոպտությունը, ծուզությունն ու ծանրաշարժությունը պետք է այնպիսի ճարտարագությամբ կառապերի, զոր հանդիսականը չստանա այն ապագավորությունը, թե ուսինը դերասանն և այսպես ծույլ, կոպիտ կամ ծանրաշարժ:

Այս ամենից զատ պետք է գիտենաւ, զոր բացի անհրաժեշտ ընդունակությունից ու բեմական վարպետությունից, գերտաննիր. մտահոգության առարկա պետք է դարձնի նուև իր կուզաւրականության և աշխարհաբացցքի խնդիրները. Խորհրդային գերասանը բեմական վարպետություն ունենալուց բացի, պետք է ձգուի նուև ձեռք բերել պրոլետարական կայուն աշխարհայացք, նու պետք և սովորի պրոլետարականուրեն հասակ մտածել և զատակարգային ճիշտ մտացում ու վերաբերմունք ունենալ զեղի կյանքի յերևույթները:

Իսկ վորպեսպի դերասանը կարողանա կյանքի յերևույթները ճիշտ ըմբռնել, նու ուստի և նպաստ և առաջ վերացնի իր քաղանդրագիտությունն ու ապա խորապես զինվի մարդօխտական տեսությունը:

Առաջնորդ Մարքսի-Ենգելսի-Լենինի-Ստալինի ուսմունքի որդուական յուրացման մեր արվեստագետը, վորթան ել զոր նու ընդունակություն ու վարպետություն ունենա, այնուամենայնիվ շատ հետու զնալ չի կարող:

Յուրացման մարքսիստական ուսմունքը, այդ նշանակում և խորապես տիրապետել նրան և կարողանալ այդ մեծ ուսմունքը հմտությամբ կիրառել իր ստեղծագործական պրակտիկայում:

Գետք և վճռական կոիվ մզել բոլոր նրանց զեմ, ովքեր հիշալ ուսմունքի յուրացումը հասկանում են մակերսառքն և ըափականանում են մի քանի ցիտատներ անզիր անելով:

Հնաւարար, տրժեքավոր խորհրդային ստեղծագործող վիճելու համար դերասանը պետք է ունենա՝

ա. բնածին ընդունակություն

բ. բեմական վարպետություն և

գ. պրոլետարական կայուն աշխարհայացք:

ՍՏՈՒԴԻԶ ՀԱՐՑԵՐ

1. Դերասանը բացի ընդունակությունից ել լնչ պետք է ունենաւ:
  2. Առանց վարպետության կարելի՞ յև արդյոք լավ դերասան լինել:
  3. Ի՞նչ տարբերություն կա ընտական և իրական գործողաւթյունների միջև:
  4. Կարմաղ և արդյոք թատերական դպրոցը ընդունակություն ստվորեցնել իր ուսանողներին:
  5. Դերասանը բացի վարպետությունից ել լնչ պետք է ձեռք բերի:
  6. Ի՞նչ և նշանակում արտիստականություն:
-



v.

ԴԵՐԱՍԱՆԸ ՎՈՐՊԵՍ ԲԵՄԱԿԱՆ  
ԱՐՎԵՍՏԻ ԳԼԽԱԿԼՈՐ ՏԱՐՐ



Դժվար չե ըմբռնել, վոր առանձին վերցրած դերասանը դեռևս ներկայացում չե ներկայացում կազմակերպելու համար անողային անհրաժեշտ և դերասանական կանոնիվ։

Սուկայն նկատի ունենալով բեմական արվեստի սինթետիկականությունը, ինչպես արգեն առել ենք, լիարժեք ներկայացում ստանալու, համար դերասաններից զատ անհրաժեշտ են նաև ուրիշ արվեստագետներ։

Որինակ՝

—դրամատուրգ՝ վոր պիես գրի,

—ռեժիսոր՝ վոր պիեսը մեկնաբանի ու բեմական հղացում դանի,

—նկարիչ՝ վոր արտաքին ձեվավորում կատարի,

—յերաժիշտ՝ յերաժշտական ձեվավորում պատրաստի,

—պարող՝ վոր պարեր կազմակերպի և այլն, և այլն։

Անջուղաս սրանք բոլորն ել շատ կարևոր ու անհրաժեշտ ողակներ են ժամանակակից առումով՝ բարձրորակ ներկայացում կազմակերպելու համար։

Թերազնահատել վերոնիշյալ արվեստագետների մասնակցությունը ներկայացման մեջ նշանակում է պարզապես ժխտել բեմական արվեստի սինթետիկ բնույթն ու պարզունակ գարձնել այն։

Բայց և այսպիս, յեթե ուշադրությամբ վերլուծենք ներկայացումը, ապա չենք կարող չնկատել, վոր հիշյալ արվեստագետներից ամեն մեկը տարբեր իրավունքներով և մասնակցում ներկայացմանը, քան դերասանը։

Բանն այն է, վոր դրամատուրգի, ռեժիսորի, նկարչի ու յերաժշտի բացակայության գեղքում ներկայացումներուն կամ նվազ շափով տուժել և իդեալուրկ դառնալու։

Մինչդեռ յեթե ներկայացման միջից դուքս հանենք դերասաննին, ապա մենք պարզապես այլին վոչ մի ներկայացում ել չենք կարող ունենալ վորովնետն դերասանը հանդիսանում և այն միակ գլուխակար տարբեր, առանց վորի հաւաքոր չե բեմից կենդանի թաճարախաղություն ցուցադրել։

Սակայն դերասանի կարևորությունը թատրոնում վոչ մի պեղքում չպետք է հասկանալ վորպիս ինքնունպատճեկ մի տարր, այսինքն՝ վոր իրը թե դերասանը հանդիսանում է բեմական արքականի և իր ստեղծագործության միակ ու վերջնական իմաստը:

Դերասանը ընմական արվեստում անփոխարինելի ու զիմանվոր տարրն է հանդիսանում միայն և միայն այն տռումով, վոր թատրոնում, բացի նրանից, ուրիշ և վոչ վոք ի վիճակի չե բնուկան կենդամի ժիպեր կերտել:

Հիմնականում դերասանն է, վոր իր վարպետության միջոցով կարողանում և իր կերտած տիպերի բովանդակությունը հանդիսականներին հասցնել ու իր ստեղծագործական ակտիվ ներգործությամբ հուզել նրանց մաքերն ու զգացմունքները:

Առանց դերասանի դրամատիկական թուարոնը նույնքան անիմաստ է, վորքան և առանց թատրոնի դերասանը:

Այս կապակցությամբ ել անհրաժեշտ է խմանալ, վոր դերասանն իր գերերը պետք է խաղա վոչ թե իր, այլ ներկայացման համար։ Վորովհետեւ լավագույն դերակտարությունը, անզամ առանձին վերցրած, զենքն ներկայացում չե, այլ հանդիսանում է ամբողջական ներկայացման սոսկ մի մասնիկը, գուցե և շատ պատկասելի, բայց և այնպես նա կտղմում է վոչ թե ամբողջ, այլ ամբողջի մի սղակը միայն։

Նշանակում ե՞ ամենաշնորհալի դերասանն անզամ՝ ներկայացման ամբողջության անսակետից՝ պետք է իր վրա նայի վորպես ավագալ ստեղծագործական կողեկտիվի մի անդամին նա պարտավոր է զգալ և համարել իրեն ավագալ կողեկտիվի մի մասնիկը։

Ցեվ ահա այս ամենից հետո միանգամայն պարզ է, վոր ինքն իրեն և իր հանդիսականներին հարզող գերասանը պարտավոր նախ և առաջ՝ շատ լավ ուսումնասիրել և այս մարզել իր ֆիզիկական, նոգեկան և մտավոր բոլոր կարողությունները։

### Արքինական

—մարմինը, գեմքը, ձայնը,

— ուշադրությունը, կամքը, հիշողությունը, յերեսակայությունը, և այն, և այն։

Դերասանն այնպիս պիտի տիրապետի իր ուշադրությանը, վոր հարկ յեղած զեպքում կարողանա մաքսիմալ արագությամբ կենուրունացնել այն պահանջվող խնդիրների վրա։

Նա պետք է կարողանա համոզիչ կերպով կտարել այն բո-

ըոր դործողությունները, վոր անհրաժեշտ են ավյալ գերը ճիշտ դրսեռքելու համար։

Իսկ այդ նշանակում ե, վոր գերասանը, բեմական վարպետության մասին տեսական ընդհանուր տեղեկություններ ունենալուց դատ, պետք ե ձգտի նաև որզանապես արրավետելնրան։

Իսկ տիրապեսի վարպետությանը—զա նշանակում ե ճիշտ պատկերացում ուժնաւ նրա մասին, ուշի ուշով վերլուծել այն, պարզել նրա բաղկացուցիչ մասերն ու հիմնական տարրերը, ծանոթանալ այդ տարրերի փոխարարերություններին և խորապես յուրացնել այդ բոլորը։

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր

1. Կարելի՞ յե արդյոք մեկ դերասանով ներկայացում կազմակերպել։
2. Մինթեմիկ ներկայացում ունենալու համար բացի գերասաններից ուրիշ ել Բնչ արվեստագիտներ են անհրաժեշտ։
3. Ի՞նչ առումնով և դերասանը բեմական արվեստի գլխավոր տարրը հանդիսանում։
4. Ի՞նչ և նշանակում դերասանական վարպետություն ունենալ։



VI

ԳՈՐԾՈՂՅՈՒԹՅՈՒՆ



Վորովեսպի մեզ համար պարզ լինի, թե թե՛չ բան և զերա-  
առնական վարպետությունը և ինչպիսի նախնական տարրերից  
և նա բաղկացած, պետք և հիշել այն հիմնական հատկություն-  
ները, վորոնցով ոժոված և զերասանի ստեղծագործության գործիքը:  
Մենք մեր անցյալ զրույցների ընթացքում արդեն պարզել ենք,  
վոր զերասանի ստեղծագործության գործիքը հենց ինքը զերա-  
սանն ե, վոր այդ գործիքը հանդիսանում է կենդանի գործիք:  
Այդ կենդանի ու ամենակատարելազործված գործիքի ամե-  
նաբնորոշ հատկությունն այն ե, վոր նա նախ և առաջ ընդու-  
նակ և բազմակողմանի, կենդանի ու նպատականարմար գործողու-  
թյուններ կատարել:

### Որինակ

- ինքն իրեն շարժվել,
- բազմապիսի ապրումներ ու հույզեր արտահայտել,
- խոսել, յերգել, նվազել, պարել և այլն, և այլն:

Այստեղից ել ահա միանգամայն պարզ ե, վոր զերասանն  
իր զերը վոչ թե պիտի նկարագրի կամ պատմի, այլ ոգտագոր-  
ծելով ինքն իրեն վորպես կենդանի գործիք, պիտի կարողանա  
կատարել այն բոլոր գործողությունները, վորոնք անհրաժեշտ են  
այլալ դերի արարքները հանդիսականների առաջ կոնկրետ  
կերպով ցուցադրելու համար նշանակում են զերասանը, վորպես  
իր ստեղծագործության գործիք, ամենից առաջ պետք և սովորի  
և կարողանա կենդանի ու նպատականարմար գործողություններ  
կատարելու նպատականարմար գործողությունը բեմական արվեստի  
այն հիմնական առարն ե, առանց վորի թատրոնում վոչինչ հնա-  
րավոր չի անել, Գործողությունը թատրոնի սիրան ե, Առանց այդ  
արտի նա չի կարող ապրել:

Առանց նպատականարմար գործողության թատրոնը կդադա-  
րի թատրոն լինելուց և կդառնա սունկ գրական նկարագրություն։  
Այս տեսակետից ել ահա բոլորովին պատահական չե այն յերե-  
վույթը, վոր թատերական աֆիշաների, ծրագրերի ու պիեսների  
մեջ միշտ ապվում ե գարծող և վոչ թե պատճառ կամ նկարագրակ

անձերու Խնչմաւ վորովհետեւ թատրոնում ամենահիմնականը զարծոցույնն է:

Գործողությունները լինում են.

ա. Ֆիզիկական

Այսինքն՝ յերբ դերասանն իր գործողությունները կատարելիս ստիլված և լինում շարունակ շարժվել ու տեղից տեղ փոխադրվել:

Որինակ՝

— Սուրենն առավատյան անկողնից վեր և կենում, մոտենում և ընտանումին, բացում և վարագույրները, ֆիզիկուլտ մարզանքներ և անում, հագնվում ե, վացվում ե, թեյ և պատրաստում, խմում և և ապա վերցնելով իր գասագրքերը՝ գնում և դպրոց:

բ. Հոգեբաթական

Այսինքն՝ յերբ դերասանն արտաքուստ չարժվելով ու չփոխոխելով իր գործողության վայրը, դործ և ունենում հոգեկան ապրումների, ներքին մզումների, բուռն կրքերի ու զանազան սուր բաղխումների հետ:

Որինակ՝

— Սուրենն ու Սաթիկը պարտեզում նստած վեճի յեն բռնվել և իրար ինչ-վոր բանում ուզում են համոզնել: Սուրենը շարունակ փորձում և արդարանալ, իսկ Սաթիկն ապացուցում ե, վոր Սուրենի արածը մատնություն եւ Սուրենն սկսում ե հեկեկալ ու Սաթիկից ներողություն խնդրել:

Գործողության այս յերկու տեսակը վոչ մի դեպքում չըկարելի իրարից անջատել, վորովհետեւ յուրաքանչյուր ֆիզիկական գործողություն միշտ պայմանավորված և վորեն ներքին հոգեբանական դրությամբ ճիշտ արագես, ինչպես և ամեն մի հոգեբանական գործողություն՝ իր հերթին անպայման ունի նաև իր արտաքին ֆիզիկական արտահայտությունը: Սակայն՝ յերբ մենք սկսում ենք արտաքին կամ ֆիզիկական գործողություն, գրանով մենք միայն ուզում ենք ընդգծել գործողության արտաքին հողմը և, ընդհակառակը՝ յերբ ասում ենք ներքին կամ հոգեբանական գործողություն, գրանով մենք ուզում ենք ցույց տալ, վոր տվյալ գեպքում շեշտը դրվում և գործողության ներքին կողմից վրա:

Բացի դրանից, պետք և գիտենալ նաև այն, վոր մարդկային ամեն մի հոգեկան առլուս իր հերթին վերջին հաշվով միշտ ել բաղկացած և լինում շատ հաստրակ ու պարզ գործողություններից, վորոնց կատարելն այնքան ել դժվար չե, յեթե միայն

գերասաննն իր դերերի վերլուծության ժամանակ այդ գործողությունները ճիշտ ե վորոշում:

### Որինակ՝

«Նամուռա-ի Սեյրանը խանութի տեսարանում անշուշտ շատ քարդ հոգեկան ապրումներ ունի, սակայն այդ ապրումները բարձրացած են մոտավորապես հետեւյալ պարզ գործողություններից:

- սառնասիրտ յերևալ,
- զսպել հուզմունքը,
- ակնարկել,
- հանդիմանել,
- ցույց տալ իր առավելությունը,
- անպատվել,
- վիրավորել,
- խայթել,
- խռովել նեռատամի հանդիմաց, և այլն, և այլն:

Կյանքում մեզանից վոչ մեկը նման գործողություններ կառարելիս բնավ չի դժվարանում:

Սակայն բավական ե, վոր այդ հասարակ ու պարզ գործողությունները բնմ տեղափոխվեն և առա իսկույն ևեթ սկսվում մն մի շարք դժվարություններ.

- շփոթ, լարվածություն, անիմաստ շարժումներ,
- բանազրոսություն, և այլն, և այլն:

Բան այն ե, վոր կյանքում մենք մեր բոլոր գործողությունները կատարում ենք մեր սացիալական փառքի ոգնությամբ, իսկ բնմի վրա այդ նույն գործողությունները համոզիչ կերպով կատարելու համար անհրաժեշտ ե նաև համապատասխան բնմական փորձ, այսինքն՝ դերասանական վարպետություն:

Դերասանական վարպետությունը բաղկացած է յերկու հիմնական մասից, վորոնք իրարից տարբերվելով հանդերձ՝ ըստ եյտեթյան միայն կազմում են այդ նույն վարպետության յերկու անքաժանելի կողմբ:

### ա. Ներքին կաղմ

- կարողանալ ուշադրությունը կենարոնացնել պահանջվող արյեկտի վրա,
- ունենալ որյեկտիվ շափի զգացում,
- կարողանալ յերևույթները ճիշտ դնահատել,
- կարողանալ ոիթմի մի տեսակից արագորեն անցնել մյուսին,

— կարողանալ յերևույթների հանդես վերաբերմունք արտահայտել,

— կարողանալ խաղընկերների հետ փոխադարձ ներքին շրջան մեջ մտնել,

— կարողանալ կատարելիք գործողությունների համար համապատասխան գույներ ու յեղանակներ զանել, և այլն:

բ. Առաջին կօղմ՝

— մարզել մարմինն ու ձեռք բերել մկանային նորմալ ազատություն,

— ձեռք բերել մարմին ճկունություն,

— կանոնավորել շնչառությունն ու ձայնը.

— ձեռք բերել մաքուր տուգանությունն, և այլն.

Առաջ այս անհրաժեշտ տարրերի անհնարին և պիտանի լինել բնմական յարվեստում, վորովհետեւ գերասան լինել դա նախ և առաջ նշանակում և կարողանալ բեմից կենդանի ու նամազիչ մարդ պատկերել Սակայն բեմից մարդ պատկերելու համար գերասանն ամենից առաջ պետք ե սովորի և կարողանա կենդանի ու համոզիչ գործողություն կատարելը

Իսկ վորեն հաստրակ, կենդանի և համոզիչ գործողություն կատարելու համար, վորպես հիմնական նախապայման, անհրաժեշտ են՝

1. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ;

2. ՈԲՅԵԿՏ և

3. ԶԱՓԻ ԶԳԱՑՈՒՄ.

Առաջ մարզկային յուրաքանչյուր հասարակ ու պարզ գործողության այս կարևորագույն յերեք նախնական տարրերը՝ վորպես ողջությամբ միայն գերասանը կարող և կատարել իր բնական գործողությունները:

Բայց վորպեսզի գերասանի կատարած բեմական գործողությունները միշտ նպատականարմար, համոզիչ բնույթ կրն, նոպեաք և վարժվի՛ ու կարողանա.

ա. — մաքուրմալ արագությամբ կենարոնացնել իր սահմանադրույթը,

բ. — զանել իր գործողության ճիշտ որյեկտն ու

գ. — միշտ արթուն պահել իր չափի գգացումը.

ի վերջո, պետք և զիտենալ, վոր գերասանի սահղծավարձության մեջ հանդիս յեկած բոլոր տեսակի ճեղքվածքների հիմունական առաջարկագույն անհրաժեշտ պահպան կատարելը:

կան պատճառահերթ, մեծ մասամբ, միշտ առաջանում են հասարակության գործողության յերեք հիմնական տարրերին լավ չտիրապետելուց:

Տիրապետել հասարակ ու պարզ գործողության յերեք հիմնական կամ նախնական տարրերին, այդ նշանակում են՝ կարողանալ բեմի վրա հաստատ քայլել ու չվախենալ ստեղծագործական սայթագումանը:

Իսկ այս ամենին համար գերասանն անպայման պետք է մարդի իր ներքին և արտաքին տվյալներն ու բեմի վրա նրանց այնպես տիրապետի, ինչպես մեզանից ամեն մեկը համեմատարար պատ կերպով տիրապետում է զբանց կյանքում:

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր

1. Վերն և դերասան-գործիքի ամենահիմնական հատկությունը:
2. Առանց կենզանի գործողության կարմղ և արդյոք դրամատիկական թատրոն լինել:
3. Բանից տեսակ գործողություններ կան:
4. Խոչչից և բաղկացած մարդկային ամեն մի բարդ հոգեկան ապրում:
5. Վորմնք են գերասանի վարպետության ներքին և արտաքին տվյալները:
6. Վորմնք են հասարակ ու պարզ գործողության կարևորագույն յերեք նախնական տարրերը:
7. Խոչչից հետևանքով են դերասանի ստեղծագործության մեջ ձեղքվածքներ առաջանում:



VII

ՈՒՅԱԴՐՈՒԹՅՈՒՆ



Մենք արդեն ասացինք, վոր առանց ուշադրության չի կարելի կատարել և վոչ մի կենդանի ու հասարակ բեմական գործողություն։

Մարգան առուժ ե՝ « . . . աշխատանքի ամրող տեկադրության միջոցին պահանջված և նպատականացմար կամք, վորն առանայավում և իրեկ օւադրություն... »):

Նշանակում ե, օւադրությունն այն հիմնական նախապայմանն ե, առանց վորի վոչ մի դեպքում հնարավոր չե վորեն նըպատականարմար գործողություն կատարել, Յերբ մեր ուշադրությունը շարունակ ցրված ելինում, դա, ինարկե, բնավ չի նշանակում, վոր մենք բոլորովին կորցնում ենք մեր ուշադրությունը, կամ թե ժամանակավորապես զրկվում ենք նրանից։

Այդ միայն նշանակում ե.

ա. վոր մեր ուշադրությունը, հաճախ նույնիսկ մեր կամքից անկախ, կենտրոնանում ե մի այլ, ըստ յերեվույթին, մեդհամար ավելի կարևոր խնդրի վրա։

բ. վոր մեր ուշադրությունը, մեր կամքի թուլության հետեւվանքով, վոչ մի կերպ չի կենտրոնանում վորեն կոնկրետ խնդրի շուրջ, այլ շարունակ մի խնդրից մյուսին ե ցատկում։

Վորպեսզի գերասանը կարողանաւ իր ուշադրությունը կենտրոնացնել, նա պետք է միշտ ունենա վորեն վորոշակի որբեկա Առանց վորոշակի որյենիսի հնարավոր չե ուշադրություն կենտրոնացնել։

Այսուհետեւ կենտրոնացված ուշադրությունը, բայց գործողություն կատարելու նախապայմանից, միաժամանակ հանդիսանում ե նաև հանդիսականներին վարակելու և նրանց վրա ազդելու խոշորապույն մի միջոց։

Որինակ

—Հաճախ գերասանն իր խաղի ընթացքում կարող է յերկար ժամանակ վոչ մի բառ չարտասանել, բայց հանդիսականների

\*) 4. Մարգան, Կոպիտալ, 1, 1926 թ. հջ 144.

ուշաղրությունն ամբողջապես իր վրա ընենել և իրենով պրա-  
ղեցնել Դա զլխավորապես կախված է նրանից, թե ավյալ զերա-  
սանն իր կատարելիք բեմական գործողությունների վրա ինչպիսի  
ներքին լարվածությամբ և կենտրոնացնում իր ուշաղրությունը.

Ենք վորքան ավյալ զերասանն իր կատարելիք գործողու-  
թյունների վրա խարն և կենտրոնացնում իր ուշաղրությունը,  
այնքան ավելի ուժեղ ու խոր ազդեցություն և գործում նա իրեն  
զիտող հանդիսականի վրա.

Հետեւըար, զերասանի համար վոչինչ այնքան կործանիչ  
չե, վորքան կենտրոնացված ուշաղրության բացակայությունը,  
վոր զլխավորապես առաջ և գալիս հետեւյալ պատճառներից.  
Որինակ՝

— ցրվածությունից . . . . . (կամքի թուլություն).

— անտկնկալ հանդիպումից . . . . . (թշնամի, մասսա,  
հարազատ).

— անելիքը չգիտենալուց . . . . . (զերասանական խնդրի  
բացակայություն).

— զերի ծանրությունից . . . . . (զերասանական փորձի  
պակասություն).

— անելիքը չուզենալուց . . . . . (ստեղծագործական զրգիռի  
բացակայություն).

Մարզել ուշաղրությունը, նշանակում և նախ և առաջ մար-  
զել կամը, մարզել այնպես, վոր կարելի լինի զեկավարել  
ուշաղրությունը, իսկ այն զերասանը, վորը զուրկ և այդ զենքից,  
նա ամենաչնչին պատճառից անզամ կարող և անսպասելի կերպով  
իրեն կորցնել և, ըստի վրա շփոթ առաջացնելով, վնասել թե  
իրեն և թե իր խաղընկերներին:

Մարզու ուշաղրության ակտիվությունը միշտ ստուգվում և  
անցյալի մասին ունեցող նրա հիշողությամբ:

Վորքան մարդ իր շրջապատի յերեվույթները խորն և  
ըմբռնում ու բազմակողմանի հիշում, այնքան ավելի պայծառ ու  
վառ և նրա հիշողությունը:

Վորքան մարդ շատ բան և հիշում իր անցյալից, նշան ակում  
և, վոր նա այնքան ավելի ուշաղիք և յեղել զեպի այն ամենը,  
ինչի հետ վոր նա իր անցյալում շփոթել ու զորե և ունեցել, Յեվ,  
ընդհակառակը, վորքան մարդ միակողմանի ու քիչ բան և հիշում  
իր անցյալից, նա այնքան ավելի թույլ ու աղոտ հիշողություն

ունի Նշանակում և նրա ուշադրությունը շատ պասսիվ դեր և կատարել դեպի այն ամենը, ինչի հետ վոր նա շփվել և իր ան-ցյալում:

Մեր ուշադրությունը հիմնականում սերտ կերպով կապված և մեր հինգ զգայարանների հետ.

1. **ՏԵՍՈՂՈՒԹՅԱՆ,**
2. **ԼՍՈՂՈՒԹՅԱՆ,**
3. **ՇՈՇԱՓԵԼԻՔԻ,**
4. **ԶԱԾԱԿԵԼԻՔԻ,**
5. **ՀՈՏԱԱՌՈՒԹՅԱՆ.**

Մարդ իր ուշադրությունը կարող է կենարոնացնել ու ար-տահայտել միայն հիշյալ զգայարանների միջոցով և նրանց ոպ-նությամբ:

- Յեկ հենց դրա համար ել ընդունված և ասել.
- տեսողական հիշողություն,
  - լսողական հիշողություն,
  - շրջափողական հիշողություն,
  - ճաշողական հիշողություն,
  - հոտառողական հիշողություն:

Բացի հիշողության այս հինգ հիմնական տեսակներից՝ գոյություն ունի նաև հիշողության մի այլ տեսակ, վոր կոչվում և ասոցիատիվ հիշողություն, վորն իր հերթին նույնպես բաժան-վում և յերկու տարբեր ձևերի:

ա. Ասոցիատիվ նիշողության պարզ ձևի,

այսինքն, յերբ մարդ պատահաբար վորեւե առարկա կամ յերեւոյթ տեսնելիս անմիջապես հիշում և իր անցյալում ունեցած կամ տեսած նման առարկան կամ յերեւոյթը:

**Որինակ**

— Սուբենը տեսնելով Լեվոնի գնած նոր զլխարկը, ակամա-յից հիշում և իր զլխարկը, վոր գործ և ածել տասը տարի առաջ-բ. Ասոցիատիվ նիշողության բարդ ձևի,

այսինքն, յերբ մարդ իր անցյալում մի շաբք իրար հետ կապված գեղքերից խորը ապագորություններ ստանալով, հետա-դայում նրանցից մեկն ու մեկը կրկնվելու կամ հիշելու դեպքում, ակամայից հիշում և նաև մյոււնները:

**Որինակ**

— յենթագրենք, թե Լեվոնն իր ուսանող ժամանակ, առա-ջին անգամ ձմռանը Յերեանից Մոսկվա գնալիս, Բագվի կա-

յարանում թեյ խմելու պահին պատճեմամբ ծանոթանում և մող-  
աբախստ Վ. Փափառյանի հետ, ու խոսքի բռնվելով, ուշանում և  
պնացը ից և առանց վերաբերուի մասմ Բազմի կայտրանում.  
Պարզ և, վոր հետապայում կելունն ամեն անդամ ժող. արախստ  
Փափառյանին հիշելիս կամ հանդիպելիս, կհիշի նաև.

- իր ուսանողությունն ու առաջին անդամ Մոսկվա գնալը,
- Բազմի կայտրանն ու գնացը ից ուշանալը,
- իր կերպած վերաբերուն:

Յեվ, ընդհակառակը, ամեն անդամ Բազմի կայտրանը հիշե-  
լիս կամ տեսնելիս, կհիշի նաև

- ժող. արտիստ Վ. Փափառյանի հետ ծանոթանալը,
- իր ուսանող ժամանակ Մոսկվա գնալն ու գնացը ուշա-  
նալը և այլն:

Նշանակում ե, տիրապետել ու՝ կարողանալ զեկովարել ուշա-  
դրությունը, — ոս ամենահիմնականն և զերասանի համար: Յերբ  
զերասանը կորցնում է իր ուշադրությունը, նա ակամայից կորց-  
նում և նուև ինքն իրեն իշխելու կարողությունը, կորցնել ուշադ-  
րությունը՝ նշանակում և զրկվել ինքնախրապեառումից: Այս վե-  
ճակամ զերասանն ակամայից սկսում և լարվել ու անքնական  
շարժումներ անել:

#### Արինակ՝

— Փորձեք առանց անհրաժեշտ ուշադրության ու ինքներդ  
ձեզ տիրապետելու յելույթ ունենալ վորեն բազմամարդ ու պա-  
տասխանառու ժողովում: Փորձեք այդ վիճակում առանց խուճա-  
պի:

- սրել ձեր մատիտի ծայրը,
- վառել ձեր ծխախոռաը,
- զբանից արագ հանել ձեզանից պահանջվող այս կամ  
այն փաստաթուղթը, և այլն, և այլն:

Այդ ձեզ հեշտությամբ չի հաջողվի, վորովհետեւ դուք  
այն ձեզ չեք տիրապետում, դուք մասսայի ներկայությունից  
բոլորովին ճնշվել ու ձեզ կորցրել եք:

- Մատիտի ծայրը չի սրվի,
- ծխախոռը չի վասմի,
- անհրաժեշտ փաստաթուղթն իսկույն ևեթ չի գտնվի,  
և այլն, և այլն:

Ինչից և առաջանում այս ամենը:

Նըանից, վոր դուք չեք կարողանում զեկովարել ձեզ ուշա-

պրությունն ու զրկվում եք ինքներդ ձեզ տիրապետելու կարողությունից:

Բանն այն է, վոր գուշ արդեն կորցըել եք այն ամենառհիմնականը, առանց վորի չի կարելի կատարել և վոչ մի հաստիակ ու պարզ գործողություն: Հետևաբար միանգամայն պարզ եւ և հասկանալի, վոր դերասանի համար կենտրոնացած ուշադրությունների մայրը, վոր առանց անհրաժեշտ ուշադրության գերասանը բնմի վրա յերբեք չի կարող կատարել և վոչ մի հաստիակ ու պարզ գործողություն:

Ուշադրությունը հանդիսանում է յուրաքանչյուր հասարակ ու պարզ գործողության նախապայմանն ու նրա կատարման առաջին հիմնական տարրը:

Կենտրոնացած ուշադրության բացակայության դեպքում գերասանի կատարած գործողությունները միշտ կկրեն խիստ անկենդան ու միխանիկական բնույթ:


## Ս Ս Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ եւ անհրաժեշտ յուրաքանչյուր հասարակ ու պարզ գործողություն կատարելու համար:
2. Ուշադրությունը, բացի գործողություն կատարելու նախապայմանից, ել ի՞նչ եւ հանդիսանում:
3. Ի՞նչ եւ նշանակում ցրված լինել և վորոնք են ցրվածության յերկու հիմնական տեսակները:
4. Ի՞նչպիսի՞ ուշադրություն եւ անհրաժեշտ գերասանին:
5. Ի՞նչ եւ անհրաժեշտ ուշադրությունը կենտրոնացնելու համար:
6. Յերբ գերասանը կորցնում է իր բնմական ուշադրությունը, ի՞նչ եւ տեղի ունենում նրա հետ:
7. Վեր որպանների միջոցով եւ կատարվում և արտահայտվում ուշադրության կենտրոնացումը:
8. Ի՞նչով եւ ստուգվում մարդու ուշադրության տկարիվությունը:
9. Վերոնք են հիշողության հիմնական տեսակները:

10. Ի՞նչ և նշանակում ասոցիատիվ հիշողության պարզ ձև
  11. Ի՞նչ և նշանակում ասոցիատիվ հիշողության բարդ ձև
  12. Ի՞նչն ե հանդիսանում յուրաքանչյուր հասարակ ու  
պարզ գործողության առաջին հիմնական տարրը
  13. Ցերբ զերասանի ուշադրությունը կենտրոնացած չէ, նրա  
կատարած գործողություններն ի՞նչպիսի բնույթ են կրում.
-

VIII

UF364S.



Նախորդ գլխում ուշադրության մտածին խռովից մենք որպես առաջնա ասացինք, վոր առանց փորոշակի որյեկտի բնավ հնարավոր չեն ուշադրությունը կենտրոնացնել:

Այժմ մենք պետք ե ավելի հանդամանորեն կանգ առնենք և մտած ծանոթանանք, թե ինչ բան և գործողության որյեկտը,

Սովորաբար մարդկանց համար որյեկտ և հանդիսանում այն ամբողջ ֆիզիկական միջավայրը, վորը գոյսություն ունի անկախ նրանց ցանկությունից և գիտակցությունից:

Սակայն բնմական արվեստում որյեկտի ըմբանումն ավելի լայն պետք ե հասկանալ:

Դերասանի համար բնմական որյեկտ և հանդիսանում գոչ միայն նրա ֆիզիկական շրջապատը,

որինակ.

— մարդիկ,

— սեղաններ,

— աթոռներ,

— բաժակներ և այլն,

այլ այն ամենը, ինչի վրա գործողության տվյալ մամնաբն կենտրոնանում և նրա ստեղծագործական ուշադրությունը:

Ուրիշ խոսքով, այն ամենը, ինչ վոր գործողության տվյալ մամնառում կլանում ու զրադեցնում և զերասանի բնմական ուշադրությունը, կոչվում ե նրա բնմական կամ ստեղծագործական որյեկտը:

Որինակ.

— տռարկանների ու յերևույթների բոլոր հատկությունները,

— դրծող անձանց բնավորության գծերն ու սովորություննը,

— նրանց փոխհարերություններն ու վերաբերմուճը,

— նրանց մտածունքի տռարկաններն ու հոգսերը, ցանկություններն ու ձգութեաբը, և այլն, և այլն:

Որյեկտները լինում են.

ա. առաջին կամ ֆիզիկական.

այսինքն՝ այն ամենը, ինչ վոր նյութական ե:

### ՈՐԻՆԱԿ՝

- քար, պատ, սեղան, ջուր,
- տուն, շուն, ծխա, ծառ,
- մեղք, ածուխ, կով և, այլն և այլն.

բ. Աերդիմ կամ նազեկան,

այսինքն՝ այն ամենը, ինչ վոր նյուրական չե:

### ՈՐԻՆԱԿ՝

- միտք, յերազանք, պատկերացում, ցավ,
- վերաբերմունք, բնափորություն, վիշտ,
- ցանկություն, ձգում, ուրախություն, և այլն, և այլությունները միշտ ընդունում են կամ դինամիկ, կամ հարաբերական առանձին վիճակում:

### ՈՐԻՆԱԿ՝

ա. Դինամիկ կամ ռարժվադարձ:

- զնացքը ոլանալիս,
- մարդը ուարելիս,
- ծխաը թռչելիս,
- տվտոն շարժելիս,
- սավառնակը թռչելիս,
- ձին վազելիս, և այլն, և այլն.

բ. Առանձիկ կամ չօրթօնադարձ:

- սար, քար,
- տուն, հեռազբանյուն,
- արձան, նկար, զրասեղան,
- անտառ, պահարան, և այլն, և այլն,

Անհրաժեշտ են նաև տարբերել մեզ շրջապատճ նյուրական բոլոր որյեկտները նրանց մասին ունեցած մեր պատկերացումներից, վարովինեաւ բոլորովին այլ բան են,

### ՈՐԻՆԱԿ՝

— իրական սեղանը, գիրքը, տունը, կովը, սարը, ծխան ու ծառը և բոլորովին նաև են:

— սեղանի, գրքի, տան, կովի, ծառի, ծտի ու սարի մասին ունեցած մեր պատկերացումները:

Ճիշտ են, մեր այդ պատկերացումները բոլորն եւ իրական որյեկտների որդյունքներն են, սակայն դեռ չի նշանակում, վոր այդ իրական որյեկտներն ու նրանց մասին ունեցած մեր պատկերացումները միևնույն բաներն են: Իրական սեղանն ու ծառը

Հայութական են և գոյություն ունեն մեզանից դուրս ու ՄՇՐ  
պիտակցությունից անկախ Մինչդեռ սեղանի ու ծագի մասին  
ունեցած մեր պատկերացումները վերացական են ու գոյություն  
ունեն միայն մեր գիտակցության ու յերևակայության մեջ:

Այսուհետև պետք է իմանալ, վոր բեմում գոյություն ունե-  
ցող ու գործածվող որյեկանների մեծ մասն իրական որյեկաններ  
չեն, այլ հանգիստանում են զերասանի ստեղծագործական մտքի  
ու յերևակայության արդյունքները:

#### Որինակ.

Այստեղ բոլորովին ել գոյություն չունեն իսկական  
— սեր, վիշտ, տաելություն,  
— թշնամի, բարեկամ, մատնիչ,  
— սպանություն, հրդին, քեփ, և այլն, և այլն:

Նույնիսկ այն զեղքում, յերբ բեմի վրա դրված է լինում  
վորմեն իրական սեղան, աթոռ, պահարան կամ նման մի բան,  
զերասանն իր խաղի ընթացքում, յուրաքանչյուր նոր բեմագրու-  
թյան ժամանակ, միշտ նոր ձևով և արժեքավորում ու վերաբեր-  
վում զեպի տյդ իրական որյեկանները: Նա մի զեղքում տվյալ  
իրական կամակարասինների մեջ իր յերևակայության շնորհիվ տես-  
նում և հարստություն և գեղեցկություն, իսկ մի այլ զեղքում՝  
անճաշակություն և զգվանք:

Դերասանը, անհրաժեշտության զեղքում, իր տռողջ ու վառ  
յերևակայության շնորհիվ, նախ ստեղծում և այդ դրությունները  
և ապա նրանց վերաբերվում այսպես, ինչպես արդ պա-  
հանջում և նրա կատարելիք զերը:

Բացի այդ, միևնույն առարկան կամ յերևույթը զանազան  
պայմաններում կարող և մեղ համար տարբեր որյեկտ ներկայաց-  
նել:

#### Որինակ.

Ժամից հիմնականում որյեկտ և հանգիստանում վորպես գրի-  
ցու միջոց, սակայն նա այլ պայմաններում կարող և լինել նույ-  
նորսի:

— թանգարժեք իր,  
— տաշեցու ձող,  
— հիշատակ կամ հնություն,  
— կշիռ կամ չափ,  
— թեյ խառնելու միջոց, և այլն, և այլն

Մեզ համար որյեկտ կարող և լինել նաև մատիտի ոյս կամ  
այն առանձին նշանը:

### ԱՐԲԻՆԱԿ՝

— գուշինը, ձեզ, փայլը,

— քերվածքը, կետը, ճեղքը, և այլն, և այլն;

Որյեկտ կարող ե հանդիսանալ նրա այս կամ այն հատկու-

թյունը:

### ԱՐԲԻՆԱԿ՝

— նրա փափկությունն ու կարծրությունը,

— հասարակ կամ քիմիական լինելը,

— կարմիր, կապույտ կամ գեղին լինելը,

— հեղտ կամ գժվար տաշելը,

— ծայրն ուշ կամ շուտ կոտրվելը, և այլն; և այլն,

կամ.

— Ասենք թե Սաթիկը Լեվոնին, վորպես նորություն, հայտնուած ե, վոր Ամերիկայում հսարվել ե մի նոր տեսակի տարբանակը, վորին արձակելու ժամանակ բնավ ձայն չի հանում. Տվյալ գեղարքում Լեվոնի համար ուշադրության որյեկտ կհանդիսանա վոչ թե Սաթիկը կամ տարբանակը, այլ այն, վոր այդ տարբանակն արձակելու ժամանակ ձայն չի հանում, այսինքն՝ նրա հատկությունը,

Վերջապես, պետք ե գիտենաւ, վոր որյեկտ կարող ե հանդիսանալ նաև մարդկային ամեն՝ մի վերաբերմունք ու փոխհարաբերություն:

### ԱՐԲԻՆԱԿ՝

Վերաբերմունքի մասին.

— Ենթադրենք, թե նույն Լեվոնը Սուրենից ժամանակավորապես մի շատ հազվագյուտ զիրք ե վերցնում և այլաւ չի վերադրձնում. Այս գեղագում Սուրենի համար ուշադրության որյեկտը կհանդիսանա վոչ թե Լեվոնը կամ զիրքը, այլ Լեվոնի ցույցաված հակառնեկերական ու տգեղ վերաբերմունքը.

### ԱՐԲԻՆԱԿ՝

Գոխարաբերության մասին.

— Ենթադրենք թե նույն Լեվոնն ու Սաթիկն ամուսիններն, ըայց իրար նկատմամբ շարունակ անասելի զրագարտություններ են առածում, իսկ առերես մտերիթեր ձեանում:

Տվյալ որբինակում մեզ համար ուշադրության որյեկտ կլինի վոչ թե Լեվոնը կամ Սաթիկը, այլ նրանց շատ յուրահատուկ փոխհաշարեցրյամբ:

Դերասանը պետք ե միշտ նախապես վերլուծությամբ գտնի ու դիտենա, թե ովյալ պայմաններում վորն ե այն իսկական

որյեկտը, վորի վրա նա պետք է կենտրոնացնի իր բնմական ուշագրավությունը:

Սակայն հաճախ լինում է այսպիս, վոր դերասանն այս կամ այն պատճառից ատիպիած, պատահմամբ կորցնում է իր բնմական ճիշտ որյեկտներն իու ընկնում է կողմանի որյեկտների ազդեցության տակ:

### Որինակ.

Դերասանին, վորպիս որյեկտ, տրված է նկարագրել Հրուլիրի դաժանությունները, իսկ նա այդ դաժանությունները նկարագրելիս շարունակ մտածում է իր փչացած հեծանիվը նորոգելու մտախն:

### Կամ թե՝

Ներկայացման ժամանակ հանկարծ դերասաններն իմանում են, վոր դահլիճում նստած և մի շատ պատասխանատու անձ կամ հեղինակավոր մի քննադատ:

Անփորձ դերասանը, նման դեպքերում, անսպասելի շփոթվում է և, կորցնելով իր բնմական ճիշտ որյեկտները, ընկնում է նոր ասաջացու կողմնակի որյեկտների ազդեցության տակ և այդ պատճառով սկսում է անխնա խառնել իր դերը:

Դժվար չի հասկանալ, վոր այս ամենը դարձյալ ու դարձյալ բղխում է կենտրոնացած ուշագրության բացակայությունից և կամքի թուլությունից: Միայն ուշագրությանը լավ չտիրապեսերու հետեւանքով և, վոր դերասանը շատ հաճախ շփոթվում է և անսպասելի կերպով կորցնելով իր բնմական ճիշտ որյեկտները, ստեղծագործական ճեղքվածքներ և տալիս:

### Որինակ:

— Ականային ավելորդ լարվածություն,

— կեղծ պաֆոս ու գոռոցներ,

— բռնազրոսիկ շարժումներ,

— տեքստի ու միզանացենների շփոթ,

— յել ու մուտքի շփոթ,

— գրիմի յել զգեստների շփոթ, և այլն, և այլն:

Հետեվարար գերասանն իր ուշագրությանն այսպիս պիտի ակրագանի, վոր կողմանի ու պատահական ազդեցությունների հետեւանքով չանջապահի իր բնմական ճիշտ որյեկտներից: Դերասանն իր բնմական գործողությունները կատարելիս պետք է ունենա վաշ թե օմի վարեւ որյեկտ, այլ պետք է ունենա շատ վարուակի ու նիւթ որյեկտ: Ճիշտ որյեկտն այսպիսով հանդիսանում է յու-

բացանչյուր հասարակ ու պարզ գործողության յերկրորդ հիմնական տարրը:

Կենտրոնացած ուշադրությունն ու նիւթ որյեկտը գերասանի համար յերկու այնպիսի նախնական տարրեր են, վորոնցից ամեն մեկի բացակայության դեպքում այլև հասարակոր չե վորեւ նպատակահարմար և համոզիչ գործողություն կատարել:

Ճիշտ որյեկտի բացակայության դեպքում գերասանի կատարած գործողությունները միշտ կիրեն միանգամայն չարդարացված ու անհիմաս բնույթ:


### ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ է նշանակում բեմական որյեկտ:
2. Վորմնք են որյեկտների յերկու հիմնական տեսակները:
3. Ի՞նչ վիճակի մեջ ենք ընդունում մենք մեր ըրջապատի որյեկտները:
4. Ի՞նչ հիմնական տարրերությունն կա ֆիզիկական ու հոգեկան որյեկտների մեջ:
5. Ի՞նչով են զանազանվում գերասանի բեմական որյեկտները կյանքում գոյություն ունեցող իրական որյեկտներից:
6. Ի՞նչ է նշանակում ճիշտ որյեկտ:
7. Ի՞նչի հետևանքով ե գերասանը կորցնում իր բեմական ճիշտ որյեկտները:
8. Ի՞նչն է հանդիսանում յուրաքանչյուր հասարակ ու պարզ գործողության յերկրորդ հիմնական տարրը:
9. Յերբ գերասանի ուշադրության որյեկտները ճիշտ չեն, նրա կատարած գործողություններն ի՞նչպիսի բնույթ են կրում:



IV

ԶԱՓԻ ԶԳԱՑՈՒՄ



Նախորդ զբույցների ընթացքում մենք արդեն տսել ենք,  
վոր գերասանի բնմական գործողությունները՝ մարդկանց կյան-  
քում կատարած գործողություններից տարբերվում են նրանով,  
վոր գերասանն իր բնմական գործողությունների աշխատությունն-  
առութեաւ համար ստիպված է գործ ունենալ մի այլ, անչափ-  
կարևոր տարրի հետ, վորը կոչվում է չափի զգացում:

Չափի զգացումը տվյալ գեպօռմ չպետք է հասկանալ քա-  
րացած ու վերացական, վորովհետեւ հաճախ դանազան ազգու-  
թյունների ու դասակարգերի համար չափի զգացումը կարող է ար-  
տահայտվել բոլորովին տարբեր կերպ:

Որինակ.

— Այս, ինչ վոր եսկիմոսների համար չափի զգացման տե-  
սակեաից կարող է միանգամայն համոզիչ ու բնական լինել այդ  
նույն բանը ֆրանսիացիներին կարող է չափազանց անհավանա-  
կան ու բռնազրութիկ թվաւ և ընդհակառակը:

Սակայն բանն այն է, վոր յերբ գերասանը կատարում է  
իր բնմական գործողությունները, նա պետք է չափի զգացման  
ակտակետից այդ գործողություններն այնպես կատարի, վոր նրանք  
միանգամայն հարազատ ու համոզիչ լինեն տվյալ գործող անձի  
համար:

Չափի զգացումը գերասանի համար նրա վեցերորդ զգայա-  
րանն եւ Առանց այս կարևոր գենքի գերասանի կատարած բնմա-  
կան գործողությունները միշտ կլրեն չափազանց անհավանական  
ու բռնազրութիկ բնույթ:

Այս իմաստով չափի զգացումը կյանքում և կատարում է իր  
կարեւոր գերը, միայն թե տարբերությունն այն է, վոր կյան-  
քում մեզնից և վոչ մեկը, հասարակ ու պարզ գործողություններ-  
կատարելիս նախապես չի մտածում չափի զգացման մասին:

Կյանքում այդ զգացումը մեր մեջ գործում է ինքնարեարար,  
մեր սոցիալական փորձի հետևանքով:

Որինակ.

— Կյանքում չուրը այս մեջ ընկելիս մենք յերեք չենք

մտածում, վոր գործազությունը պետք է այնպես կատարել, վորպիսպի մեզ նայողները հավատան, վոր մենք իրոք շնչ մեջ չուրենք ենք լցնում:

— Բաժակով ջուր խմելիս մենք նախապես չենք մտահոգվում, վոր ջուրը պետք է այնպես խմել, վորպիսպի այդ գործողությունը ներկա յեղողների վրա ընական տապափորություն գործի:

— Յերեխային շոյելիս մենք նախորոք չենք մտածում, վոր յերեխային պետք է այնպես շոյել, վորպիսպի մեզ նայողները համոզվեն, վոր մենք իրոք սիրում ենք մեր յերեխային:

Կյանքում մարդ նախապես չափի զգացման ոգնության և դիմում միայն այն գեղագերում, յերբ նա ուզում է ուրիշի առաջ մի վորեն բան ձևացնել:

#### Որինակ.

— Յերբ մենք կատակի համար խմում ենք ջուր, բայց ուզում ենք ձևացնել, վոր մեր խմածն ողի յեր:

— Յերբ մենք ուրիշների առաջ ուզում ենք տառղջ ժամանակ հիմանդ, կամ թե շիմած ժամանակ հարրած ձևանար:

Դերասանի մեջ չափի զգացման պահանջն առաջանում է այն բանի հետևանքով, վոր նա բեմի վրա իր գործողությունները կատարելիս գիտե, վոր իր վրա բազմաթիվ նայողներ կան նա շարունակ նկատի ունի սրահի հանդիսականներին, վորոնք ուշիւ-ուշով գիտում ու վայրկենապես զգում են բեմի վրա կատարված ամենաչնչին կեղծիքն ու չափազանցությունը:

Դերասանը բեմի վրա յերբեք չպետք է մոռանա իր գիտը. նա պետք է հետեւի, վոր իր սոտեղծագործական «յեսը» միշտ արթուն լինի, վորովիետն հենց այդ «յեսն» և, վոր աշալուրջ նոկաւմ ու չափագում և նրան բեմում կատարած բոլոր գործողությունների ճշտությունը: Առանց այդ «յես-ի գոյություն չունի և վոչ մի չափի զգացում:

Սակայն պետք է ասել, վոր չափից ավելի զարգացած ու ծայրանեղության հասցված չափի զգացումը գերասանի համար նույնքան թափակար է, վորքան և թույլ կամ թե բոլորովին չզարգացածը:

#### Որինակ.

— Չոփից ավելի զարգացածի դեպքում գերասանը բեմի վրա ինքն իրեն կաշկանդված է զգում ու պարզապես վախենում և վորեն բան անկաց: Շարունակ մտածում է, վոր չինի թե չափն անցնի ու զերը վչանա:

— Իսկ թույլ կամ թե բոլորովին չզարդացածի գեղքում՝ դերասանը պարզապես չի կարողանում իրեն տիրապետել ու շարունակ ընկնում և ավելորդաբանությունների ու չափազանցությունների մեջ:

Նշանակում են դերասանին անհրաժեշտ և վոչ թե սուրյեկտիվ, այլ սրբեկի չափի զգացումն:

Այսպիսով դերասանի համար որյեկտիվ չափի զգացումը հանդիսանում և նրա բեմական գործողությունները միշտ կլիքեն ծայրատիճան անհավանական ու բռնազրոսիկ ընույթ:

Չափի զգացման խախտման կամ բացակայության դեպքում՝ դերասանի կտառարած բեմական գործողությունները միշտ կլիքեն ծայրատիճան անհավանական ու բռնազրոսիկ ընույթ:

Այս անախորժությունից խուսափելու համար դերասանը պետք են հետևել:

ա. Վոր ուշադրությունը միշտ կենտրոնացած լինի ճիշտ որյեկտիվ վրա.

բ. Վոր տվյալ գործողության համար համապատասխան չափով մկանային եներդիա ծախսվի:

## ՍՏՈՒԴԻԶ ՀԱՐՑԵՐ

1. Խոչը շնորհիվ են, վոր դերասանը կարողանում է ստուգիլ իր կտառարած բեմական գործողությունների ճշտությունը:
2. Արդյոք չափի զգացումը հատուկ է միայն դերասանին:
3. Ի՞նչ հիմնական տարրերությունն կա կյանքում ու բեմում կտառարվող գործողությունների միջև:
4. Կյանքում մարդ յե՞ր են չափի զգացման ոգնության դիմում:
5. Ի՞նչպիսի չափի զգացում պիտի ունենա դերասանը:
6. Վորմնք են յօւրաքանչյուր հասարակ ու պարզ գործողության անհրաժեշտ յիրեք նախնական տարրերը:



X

ମତ୍ରାଦ୍ୟ



Դերտուանական վարպետության հետևյալ կարևոր տարրը պա ոիրմն ե, վորը որդանապես կապված ե դրությունների փոխառության ու նրանց գնահատման ֆունկցիայի հետ:

Ամենից առաջ պետք ե խմանալ, վոր սիթմը որյեկտիվ իրականության շարժման ամենաբարդ ձևերից մեկն ե:

Մենք դիտենք, վոր յուրաքանչյուր յերևույթ վորոշ ամբողջություն կազմելով հանդերձ՝ իր հերթին միշտ բաղկացած ե լինում առանձին-առանձին մասերից ու մասնիկներից:

Այսուհետև, յեթե ուշազրությամբ հետևենք այդ բաղկացուցիչ մասերին ու մասնիկներին, ապա կտեսնենք, վոր նրանք ավյալ ամբողջական յերևույթի կամ պրոցեսի, համար բոլորն եք միննույն չափով չեն կարևոր:

Զենք կարող չնկատել, վոր նրանց մեջ կան համեմատաբար ավելի կարևոր, այսինքն՝ ընդգծված և ապա՝ համեմատաբար ավելի պակաս կարևոր, այսինքն՝ բաւլի ընդգծված կամ՝ թե բարութին շրնդգծված մասեր ու մասնիկներ:

Ցեղ ահա այն, թե ինչպիսի ներդաշնակ հերթականությամբ են կրկնվում ու իրար հետ հարաբերվում այդ ընդգծված ու շրնդգծված մասերն ու մասնիկները, իազմում են ավյալ ամբողջական յերևույթի կամ պրոցեսի սիթմը:

Որինակ՝

— բարձր ու ցածր ձայները . . . . յերաժշտության մեջ,

— շեշտված ու շշեշտված վանկերը . . . բանաստեղծության մեջ,

— արագ ու զանգաղ շաբթումները . . . պարարվեստի մեջ, և այլն, և այլն

Առասարակ պետք ե դիտենալ, վոր բնական ու հասարակական բոլոր յերևույթներն ել ունեն իրենց հատուկ սիթմերը՝ Որինակ՝

— բուքի վռանոցը,

— գարրնի մուրճի հարվածները,

— առվակի կարկաչը,

- Թուշունների ծլվլոցը,
- շան հաջոցը,
- մարդու քայլվածքն ու շարժումները,
- մարդու լացն ու ծիծաղը, և այլն, և այլն.

Ուրիշ խոսքով, սիթմը յուրաքանչյուր յերևույթի մեջ տեղ դնեցող շարժման ներքին վիճակն եւ նա ունի շատ վարակիչ ու կազմակերպիչ հատկությունն:

### Որինակ՝

- գորանոցներում ու կովի գաշտերում յերաժշտական սիթմն ոգտագործվում և վորպես ռազմիկների վոգնորությունն ու մարտունակությունը բարձրացնելու միջոց.
- հանգեսների ու իննույթքների ժամանակ յերաժշտական սիթմը նույնպես ոգտագործվում և վորպես հյուրերի արամազրությունը բարձրացնելու միջոց.
- մասսայական պարերի ժամանակ յերբեմն զիտողները նույնպես վարակվում են այդ պարերի սիթմով ու սկսում են շատ հաճախ միանգամայն անդիտակցարար համապատասխան շարժումներ անհետ և այլն:

Յուրաքանչյուր յերեսույթի նորմալ սիթմը կարող և այս կամ այն արտաքին ու ներքին պատճառների հետևանքով խախտվել ու փոխվել մի այլ սիթմի:

### Որինակ՝

- յերբ ջուրն ավելանալու կամ պակասելու հետևանքով առվակը փոխում և իր սովորական կարկաչը.
- յերբ գագանը վոռնում և վիրավորված.
- յերբ մարդ հանկարծ տիրում կամ ուրախանում և.
- յերբ ուրախության հանգեսը անսպասելի խանողարվում և, և այլն, և այլն:

Այս բոլոր դեպքերում սիթմի մի տեսակը՝ մնակ համար նկատելի, թե աննկատելի ձևով, այդ միննույն և, խախտվում ու միշտ փոխվում և մի այլ տեսակի:

### Որինակ՝

յենթագրենք, թե Հրանուշն իր փոքրիկ յերեխային քնացքել ու ինքը հանգիստ նստած՝ մի շատ հետաքրքրական զիրք և կարդում:

Սա Հրանուշի համար կլինի համեմատարար մի հանգիստ վիճակ, վորի ընթացքում՝ նա կունենա անգատ սիթմ:

Այսուհետեւ, յենթագրենք, թե հարեւանները հանկարծ հայտ-

Նուև են Հրանուշին, վոր տան ներքին հարկում շատ ուժեղ հըրդաբէն և բանկվել, Միանգամայն պարզ ե, վոր Հրանուշը, վայրկենաւար ըստ եյության գնահատելով ստեղծված դրությունը, անմիջապես կկորցնի իր անդորր սիթին ու կընկնի հուզունքի մեջ:

Սա Հրանուշի համար կլինի մի ուրիշ վիճակ, վորի ընթացքում նա կապրի շատ փօրուկալից սիթմ:

Յեզ վերջապես, ասենք, թե քիչ անց պարզվում ե, վոր վոտանգն արդեն անցել ե, և վոր այլևս հարկ չկա հրդեհից վախենալ, Կոսկածից դուրս ե, վոր Հրանուշն այս նոր դրությունը նույնպես հաշվի առնելով՝ անմիջապես համապատասխան սիթմի փոփոխություն կկրի ու այսպիս անվերջ:

Այժմ, յիթե մենք ուշի ուշով դիտելու լինենք Հրանուշի ապրած սիթմերը, ապա հեշտությամբ կնկատենք, վոր այդ սիթմերին միշտ նախորդում ե վիճակի համապատասխան փոփոխություն վորի հետեւնքով սիթմի մի տեսակը խախտվում ու անցնում ե մի այլ աեսակի:

Որիթմի փոփոխություն կրել—դա նախ և առաջ նշանակում և ըստ եյության նիւթ արծիրավանել ստեղծված դրությունը:

Առանց դրայրյան նիւթ զնանատման մարդու մեջ չի կարող ծնվել նիւթ ոիթմ:

Յերբ մեր մեջ որիթմի վորեն փոփոխություն և տեղի ունենում, այդ նշանակում ե, վոր ավյալ դրության հետեւնքով համամատարար թուլանում կամ ուժեղանում ե մեր սրտի բարախումն ու զարկերակը:

Մարդկանց սիթմը—նրանց սրտի բարախման բնույթն ե, դարձի վորակը:

Դա այս ե, ինչ վոր ցույց ե տալիս, թե ավյալ պայմաններում ինչպիսի լարվա ուրյամբ կամ անդօրրուրյամբ և աշխատում մարդու սիրտն ու նրա զարկերակը:

Այսուհետեւ, պետք ե աշխատել ոիթմը չփոթել անմայի հետ Տեմզը բանկական հասկացություն ե, վորը զիխավորապես ցույց ե տալիս շարժման արագության աստիճանը:

Մինչդեռ սիթմը վարակական ցուցանիշ ե և զլխավորապես բնորոշում ե այդ նույն շարժման ներքին բնույթն ու նրա յաւրահատկությունը:

Ճիշտ ե, սրանց մեխանիկորեն իրարից անջատել ու իրարհակաղբել չի կարելի, ինչպես և չի կարելի պատկերացնել բանականց վարակի, և ընդհակառակը:

Տեմպը չի կարող զուբկ լինել ոիրմից, ճիշտ այնպես, ինչ—  
պես և ոիթմը՝ տեմպից,

Տեմպը և ոիթմը հանդիսանում են միևնույն շարժման-  
յերկու տարրեր կողմերը:

Սակայն տարրերությունն այն է, վոր տեմպն առավելապես-  
բնորոշում է շարժման արագության աստիճանը, իսկ ոիթմը՝  
առավելապես արտահայտում է ավլյալ շարժման կառուցվածքային-  
ներքին բնույթն ու որինաչփությունը:

Բացի այդ՝

ա. մարդ ոիթմի տեսակետից կարող է արտաքուստ շատ-  
հանգիստ տեսք ունենալ, իսկ ներքուստ գանվել չափաղանց լար-  
ված վիճակում:

Որինակ՝

— յերբ մահապատճի յենթարկված կտլանավորն անշարժ  
նստած, բայց լարված սպասում է, թե յերբ պետք է նկուղի դու-  
ռը բացվի ու գահինը ներս մտնի:

— Յերբ մարդ առանց տոմսի մտնումն թատրոն կամ գնացք-  
ու զրադենում է ուրիշի տեղը:

— Յերբ վաճառքնության ժամանակ ձգտում՝  
և իրեն սահմանափակ պահել:

Ցեղ ընդհակառակը՝

բ. մարդ կարող է ոիթմի տեսակետից ներքուստ շատ հան-  
գիստ լինել, բայց արտաքուստ չափաղանց հուզված յերեալ  
Որինակ՝

— յերբ քննող մարդիկ իրենց պետերին դուր դալու նպա-  
տակով շատ հաճախ ներքին անտարբերությամբ շոյում են նրանց  
փոքրիկ յերեխաներին ու աշխատում են առերես սքանչանալ ու  
հիսնալ նրանց գեղեցկությամբ:

— Յերբ վատ տնվորներն իրենց հարևաններին չսիրելով՝  
հանդերձ, նրանց զժրախառության դեպքերում ուրիշների առաջ  
սկսում են իրենց շատ հուզված ու այլալիված Շնացնել:

Այս իմաստով ել դանել գերի ոիթմը, զա նշանակում է խո-  
րապես զգալ նրա ներախտիք և ձեռք բերել նրա նիւթ կատար-  
ման ու դրսնորման բանալին:

Յերբ գերասանը չի կարողանում գտնել ու զգալ իր գերի-  
ոիթմը, այդ նշանակում է, վոր նաև չի ուսումնասիրել ու  
չզիտե, թե զործողության ավլյալ պայմաններում հոգերանական-  
ինչպիսի վիճակ ու դրսություններ և ապրում գերը:

Յեվ ընդհակառակը՝

գտնել դերի սիթմը—նշանակում և խորապես ըմբռնել և զգալ նրա հոգեվիճակն ու գեղի ստեղծված դրություններն ունենալիք նրա վերաբերմունքը:

Վերաբերմունքի կարևորության մասին մենք մանրամասն կանգ կառնենք հաջորդ զմոււմ, իսկ առայժմ պետք և միայն իմանալ, վոր մեր մեջ կատարվող սիթմի փոփոխությունները միշտ պայմանավորված են մեզ հետ տեղի ունեցող դրությունների ու հոգեկան վիճակի փոփոխություններով։ Յուրաքանչյուր հոգեկան նոր դրություն կամ վիճակ անխօսափելիորեն իր հերթին մեր մեջ ծնում և առաջ եւ երառմ նոր ոքրմ։

Դերասանի վարպետությունն այս հարցում կայանում և նրանում, վոր նա պետք և կարողանա արագ ու անսայթաքորեն սիթմի մի տեսակից անցնել մյուսին։ Նա պետք և առվորի վարակվեց ու իր սիթմով վարակել հանդիսականներին։

Առանց այս կարևոր հատկության դերասանն իր դերերում կլինի շատ միորինակ և դժգույն։

Դերասանի սայթաքուններն այս խնդրում միշտ և զլիավորապես ասածանում են նրանից, վոր նա հոգեբանական բարդ գործողություններ կատարելիս, այսինքն՝ յերբ անհրաժեշտ և վենում ընմական տիպի հոգեկան դրությունները սահմանագծել և հաճախակի տրամադրությունների փոփոխություն տալ, նա գլուխարանում ու չի կարողանում սիթմի մի վորակից արագ ու անսայթաք անցնել մյուսին։

Կյանքում սիթմի վորակները չափազանց բազմաթիվ են ու քաղմազան, սակայն թատրոնում դրանց կարելի յե բաժանել հետեւյալ պայմանական տեսակների։

Որինակ՝

1. ծույլ, յերկարածն հիվանդությունից տանջված կոմ թե հոգնածությունից չափազանց ուժասպառ յեղած մարդու սիթմ։
2. Հիվանդությունից նոր առնդացող մարդու սիթմ։
3. Բոլորովին առողջացած մարդու սիթմ։
4. Առույգ և աշխատ աշխատանքի սիթմ։
5. Խնճույքին մասնակցող կենսուրախ մարդու սիթմ։
6. Աշխատանքից ուշացած կամ կայարան շտապող մարդու սիթմ։

- Աշխատանքի պահին գործարանն աղետից փրկող մարդու սիթմ:
- Հրդեհից խռովապի մատնված կամ թե խեղդվող մարդու սիթմ:

### ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

- Ի՞նչ և նշանակում սիթմ:
  - Ի՞նչ ձևով և արտահայտվում սիթմը պարի, յերաժշտության ու բանաստեղծության մեջ:
  - Ի՞նչ հատկություն ունի սիթմը:
  - Վորմնք են սիթմի արտահայտության յերկու հիմնական ձևերը:
  - Ի՞նչի հետևանքով և մեր մեջ ծնվում այս կամ այն սիթմը:
  - Ի՞նչ և նշանակում գանել դերի սիթմը:
  - Ի՞նչ տարբերություն կա սիթմի և տեմպի մեջ:
  - Ի՞նչ և նշանակում տիրապեսել սիթմին:
  - Վորմնք են սիթմի պայմանական ուժ տեսակները:
-

xi

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ



Առանտարակ վերաբերմունք ունենալ, նշանակում և ըմբռնել  
և վորսե կերպ արժեքավորել այն բոլոր առարկաները, դեպքերը,  
դրություններն ու շրջապատի յերևույթները, վորոնց հետ մենք  
շփում ու գործ ենք ունենում:

Առանց համապատասխան վերաբերմունքի հասրավոր չե  
ապրել բնական ու սոցիալական միջավայրում:

Մեր շրջապատի յերևույթները, անկախ մեր ցանկությու-  
նից, մեղ վրա ազդեցի մեր մեջ առաջացնում են բազմաթիվ ու  
բազմազան վիճակներ:

Այսուհետև, այդ վիճակներն իրենց հերթին պատճառ են  
զառնումք վոր մենք դեպի այդ յերևույթները հանդես բերենք  
վորսե վերաբերմունք: Իսկ վերաբերվել կամ թե վերաբերմունք  
հանդես բերել—դա նախ և առաջ նշանակում են հանգամանորեն  
հաշվի առնել ստեղծված դրությունն ու գիտենալ, թե ավյալ  
պայմաններում ինչ հասարակ ու պարզ գործողություն պետք ե  
կատարել:

Կյանքում մենք այդ շատ լավ կարողանում ենք անել, իսկ  
բեմում շատ հաճախ մոլորվում ու չենք իմանում, թե ինչպես ար-  
տահայտենք մեր՝ դեպի ավյալ յերևույթն ունեցած վերաբեր-  
մունքը: Կյանքում մենք այդ կարողանում ենք դրեթե անսխալ  
կատարել, իսկ բեմի վրա դա այնքան ել հեշտ չե, վարովնետե  
վերասանը շատ անգամ գժվարանում և պարզապես չի կարողա-  
նում խորանալ իր դերի հոգեբանության մեջ: Նա չի կարողա-  
նում հասկանալ ու զգալ իր դերի՝ ավյալ պայմանների ու հան-  
գամանքների հետևանքով ստեղծված վիճակն ու սիթմի փոփո-  
խությունները:

Իսկ սիթմի փոփոխությունն որպանական այնպիսի պրոցես  
է, առանց վորի վոչ մի դեպքում հնարավոր չե ճիշտ վերաբեր-  
մունք ունենալ դեպի յերևույթները:

Որինակ՝

յենթագրենք թե մեկը ձեզ անտեղի հայնայում ու զանա-  
զան վերավորանքներ են հասցնում:

Պարզ ե, վոր դուք այդ վրաբնիցուցիչ փաստն ըստ եյտեթյան գնահատելով, այսինքն գիտակցելով, թե ինչ կնշանակի անտեղի վերավորանքներ ստանալ, անմիջապես համապատասխան ուժմմի փոփոխություն կկրկն ու կսկսեք արտահայտել ձեր վերաբերմանը, շատ հասարակ զործողություններ կատարելով, ինչպես որինակ՝

- վերավորողից բացատրություն պահանջել,
- դատապարտել նրա արարքը, պատիվ պահանջել,
- սպառնալ, նախատել, և այն, և այլն:

Մի խորքով վերաբերվել կամ թե վերաբերմունք հանդիս բերել, նշանակում ե՝

— ընկալել յեւկույրը,  
այսինքն՝ յենթարկվել նրա ներգործությանը,  
բ. գիտակցել յեւկույրը,  
այսինքն՝ ըստ եյտեթյան գնահատել փաստն ու կրել ուժմմի համապատասխան փոփոխություն.

գ. զարծել,

այսինքն՝ հաշվի առնելով ավյալ դրությունը, վորպես վերաբերմունք, վորևե հասարակ ու պարզ զործողություն կատարել

Այս տեսակետից ել ահա պեսք և տսել, վոր կենսանի մարդը չի կարող վերաբերմունք չունենալ գեղի իր շրջապատի յերեւյթները: Միայն դիակներն ու անորդանական մարմիններն են, վոր վերաբերմունք չունեն գեղի շրջապատն ու նրա յերեւյթները:—

Շատ հաճախ ընդունված ե տսել, վոր իրը թե այս կամ այն մարդը, այս կամ այն հարցի նկատմամբ բոլորովին վոչ մի վերաբերմունք չունի թա սխալ ե, վորովհետև յեթե մարդ ավյալ խնդրի հետ արդին ծանոթ ե, նա չի կարող գեղի այն վորևե վերաբերմունք չունենալ: Սուկայն լինում ե այնպես, վոր մարդ այս կամ այն պատճառից դրդված, հաճախ ծածկում ե իր իսկական վերաբերմունքն ու ստիպված ե լինում ձևացնել, իրը թե ինքը ավյալ խնդրի նկատմամբ վոչ մի վերաբերմունք չունի:

Սակայն բանն այն ե, վոր այս տիպի վերաբերմունք չունենալը նույնպես վերաբերմունք ե:

Այնուհետև, յերբեմն լինում ե այնպես, վոր մարդ այս կամ այն խնդրի հանդիպ ունենում ե շատ վորոշակի ու ձեւակերպված վերաբերմունք, բայց ինչ-ինչ նկատմառներով ստիպված ե լինում իր իսկական վերաբերմունքը քողարկել և այդպիսին գու-

խարինել մի ուրիշ՝ տվյալ պայմաններում տվելի ձեռնուու վերաբերմունքով,

### Որինակ՝

— զործագար Ասոնը կարող ե միանգամայն բացասական վերաբերմունք ունենալ հանդեպ իր հիմնարկության պետի ընափորությանը, բայց նկատի առնելով, վոր ինքը, վորպես պաշտօնյա կախում ունի նրանից, կարող ե ձեռցնել հակասակը, Այսինքն, վոր իրը թե իրեն չափազանց զուր և գալիս իր պետի ընափորությունը:

Այսուհետեւ պետք ե զանազանել նաև մեր՝ դեպի առարկան կոմ յերեսույթն ունեցած վերաբերմունքի յերկու տարրեր կողմերը՝

ա. ֆունիցիանալ կողմ,

այսինքն՝ յերը մենք տվյալ առարկան, դեպքը կամ յերեւ վույթը զնահատում ենք յելնելով նրա ֆունկցիոնալ կամ որյեկտիվ նշանակությունից,

### Որինակ՝

— բաժակը վորպես ջուր խմելու պարագա,

— անձրես վորպես բնական յերեսույթ,

— մուշտակը վորպես ցրտից պաշտպանվելու միջոց, և այլն,

բ. սուբեկտիվ կողմ,

այսինքն՝ յերը մենք դեպի տվյալ առարկան, դեպքը կամ յերեսույթը հանդես ենք ըերում մեր անձնական (դասակարգայնորեն պայմանավորված) դրական կամ բացասական վերաբերմունքը,

### Որինակ՝

— տվյալ բաժակը դուք կարող եք հավանել կամչհավանել,

— տվյալ անձրեսը ձեզ կարող ե հաճելի կամ անհանո թվար,

— տվյալ մուշտակն ինձ կարող ե դուք գալ կամ դուք չգալ,

— տվյալ անձնավորությանը դուք կարող եք համակրել կամ հակակրել, և այլն, և այլն:

Զանազանել սեղանը գլխարկից, այդ դեռ չի նշանակում ցույց տար, թե տվյալ սեղանը կամ ոլխարկը ձեզ դուք և գալիս կամ վոչ:

Հետեւաբար, բավարարվել միայն մեր վերաբերմունքի ֆունկցիոնալ կողմով, այսինքն՝ մեզ շրջապատող առարկաները, դեպքերն ու յերեսույթները գնահատել յելնելով միայն նրանց

Ֆունկցիոնալ նշանակությունից, դեռ քիչ եւ Մարդ իր վերաբերմունքը չքողարկելու և լրիվ ցուցաբերելու համար անսպայման պետք է շեշտը իր վերաբերմունքի ֆունկցիոնալ կողմից տեղափոխի ու զնի նրա գասակարգայնորեն պայմանավորված ուժինիքի կողմի վրա:

Բացի գրանից, մեր վերաբերմունքի ֆունկցիոնալ ու սուբյեկտիվ կողմերը վոչ մի դեպքում չի կարելի իրարից անջատել և մեխանիկորեն իրար հակադրել, Սրանք իրարից բղխող ու իրարով պայմանավորված յերևույթներ են:

### ՈՐԻՆԱԿ՝

— Ինչպես չի կարելի գրական կամ բացասական վերաբերմունք ունենալ դեպի այս կամ այն գիրքը, առանց հասկանալու, թե ինչով և առհասարակ գիրքը տարբերվում անիվից, ճիշտ այնպիս ել չի կարելի, գիրքն անիվից տարբերելուց հետո, վորու գրական կամ բացասական վերաբերմունք չունենալ դեպի ավյալ գիրքը:

Դասակարգային հասարակության մեջ մարդկանց վերաբերմունքը իրենց շրջապատի հանգելով, անկախ նրանից, թե նրանք այդ ցանկանում կամ գիտակցում են, թե վոչ, միշտ կրում և դասակարգային բնույթ:

### ՈՐԻՆԱԿ՝

— Կոմունիստաներին մենք ըուրար զբականորեն ենք վերաբերմում, իսկ մեր դասակարգային թշնամիները՝ բացանորեն

— Ցարիզմը, վոր մեր մասսայի մեջ բուռն զայրույթու առելություն և առաջացնում, միտոպետականների համար յերկյուղածության ու սիրո առարկա յեւ:

Ենք վերջապես, յեթե կարելի յեւ մարդու սոց-գասակարգային եյությունը վորոշել, յելներով նրա դեպի իր շրջապատնունեցած վերաբերմունքից, ապա ընդհակառակը, կարելի յեւ նաև դեպի իր շրջապատն ունենալիքը վերաբերմունքը վորոշել, յելներով նրա սոց-գասակարգային եյությունից:

### ՈՐԻՆԱԿ՝

— յեթե ապացուցված ե, վոր Արտմը հեղափոխականներին ձևամեկբերով, նրանց շարունակ լրտեսում ու բռնել և տալիս, նըշանակում և կասկածից դուրս ե, վոր Արտմը դասակարգային թշնամի յեւ:

### ՅԵՎ ԸՆԴՀԱԿԱԿԱՌԿ,

— յեթե ստուգված ե, վոր Արտմը կայուն ու անկաշառ հե-

դափոխական ե, իսկ նրա ընկերները հեղափոխական գործունելության համար մահվան են դատապարտված, ապա միանգամցն հաստատ կարելի յն ասել, վոր Արամը ջանք շխնայելով կփորձի նրանց կյանքը դրկել.

Մարդկային յուրաքանչյուր վերաբերմունք հիմնականում միշտ ունենում է իր արտահայտության յերկու հիմնական ձևերը ա. վերաբերմունքի չաղարկված կամ փակ ձևի.  
որինակ՝

— յենթաղենք, թե Սուրենն իր տանը մի փոքրիկ ընկերական ընթրիք և կազմակերպմամ, բայց չի ցանկանում, վոր իր հարեան Վարդպետն այդ ընթրիքին ներկա գտնվի: Պարզ ե, վոր Սուրենն այս անհարմարությունից դուրս գալու համար կփորձի Վարդպետին այնպիսի ձևով ընթրիքի հրավիրել, վոր նա Սուրենի մտադրությունն զգա ու հրաժարվի նրա մոտ հյուր գնալուց:

բ. Վերաբերմունքի չաղարկված կամ բաց ձև.

որինակ՝

— յերբ հենց այդ նույն Սուրենը, առանց հետին մտքերի ու իր վերաբերմունքը ծածկելու, պարզապես վորոշում և Վարդպետին հրավիրել, կամ թե բոլորվին չհրավիրել:

Պետք է զիտենալ, վոր բեմական արվեստում վերաբերմունքի հարցը շատ պելի բարդ ե, քան կյանքում:

Այստեղ պետք է տարբերել դերասանի, վորպես ստեղծագործողի՝ սոց-դաստիարակային վերաբերմունքը այն վերաբերմունքից, վորն ունի պիեսի գործող անձը զեպի իր շրջապատը:

Պարզ ե, վոր խորհրդային գերասանը, վորպես պրոլետարիատի արվեստագետ, դրամատուրգ Շիրվանզադեյի «Պատվի համար» պիեսում Անդրիաս Ելիզբարովի դերը խաղալիս հիմնականում պետք է բացասական վերաբերմունք ունենա զեպի նաև Սակայն Ելիզբարովը, վորպես պիեսի գործող անձ, պետք է դրական վերաբերմունք ունենա զեպի իր անձն ու իր գործակատար Սաղաթելը: Դերասանը պետք է միշտ կարողանա իրեն՝ վորպես արվեստագետի, տարբերել իր դերից, վորովհետև այլ բան և դերասանի զեպի իր դերն ունեցած վերաբերմունքը և այլ և՝ դերի վերաբերմունքը զեպի իր շրջապատը:

Դերասանի վերաբերմունքը, վորպես ավյալ դասակարգի արվեստագետի, ըստ եյության միշտ պետք է ուղղված լինի զեպի իր կատարելիք դերի ձգտութեանը ու արարքները իսկ դերի վերաբերմունքը միշտ պետք է ուղղված լինի զեպի իր շրջապատի մյօւս գործող անձանց ձգտութեանը ու նրանց արարքները:

Բացի դրանից՝ շատ հաճախ գործող անձի դեպի իր շրջապատճ ու մյուս գործող անձերն ունեցած վերաբերմունքը հեղինակի կողմից տրվում է վոչ թե միանգամից, այսինքն հենց պիեսի սկզբից, ինչպես որինակ՝

— «Չար վոգում չար ֆավահիրն ու Սոնան,

այլ ստեղծում ու ձևակերպվում և ներկայացման ընթացքում, այսինքն՝ հենց հանդիսականների աշքի առաջ, ինչպես որինակ՝

— «Անուշը-ի Սարոն ու Մոսին».

Այսուհետեւ պետք է ասել նաև, վոր դերասանը միշտ պետք է կարողանա արտահայտել իր հակակրանքն ու համակրանքը դեպի այն բոլոր ձգումներն ու արարքները, վոր նաև կատարույց է իր գերի անունից:

Սակայն դերասանի դեպի իր գերն ունեցած վերաբերմունքի գրանորումը վոչ մի գեպօում չպետք է հասկանալ այնպես, վոր իրեն թե նա իր այդ վերաբերմունքի մասին պետք է ամեն անգամ ներկայացումից առաջ հանդիսականներին հայտարարի:

Ցեղ վոչ ել այնպես, վոր գերասանն իր խաղի ընթացքում իր գերի գլխին զանազան խեղկատակություններ սարքելով ու գերից կորվելով՝ հասկացնի սրահին, վոր այդ ինքը գերասանը չի արգապես ծիծողելի կամ զզվելի, այլ գերը:

Լավ գերասանի դեպի իր գերն ունեցած վերաբերմունքը պետք է արտահայտվի նրանով, թե նա վորպես արվեստագետ բնչակիսի գույներ ու յեղանակներ և ընտրում իր գերի արարքները ճիշտ պատկերելու համար:

Ըստրություն անել ընմական գույների ու գործողության յեղանակների մեջ, այդ արգելն նշանակում է ուզանական վերաբերմունք դնել գերի ամբողջ եյության ու նրա զարգացման ամենագենցի մեջ:

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ է նշանակում վերաբերմունք ունենալ դեպի առարկան կամ յերևույթը:
2. Հնարավմբ ե, վոր մարդ բոլորովին վոչ մի վերաբերմունք չունենա դեպի իր շրջապատը:
3. Վորմնք են վերաբերմունքի յերկու աարքեր կողմերը:

4. Ի՞նչպիսի բնույթի և կրում մարդկանց վերաբերմունքը դասակարգութիւն հասարակության մեջ:
5. Վերձնք են վերաբերմունքի արտահայտության յերկու հիմնական ձևերը:
6. Ի՞նչ և նշանակում վերաբերմունքի փունկցիանալ կողմէ:
7. Ի՞նչ և նշանակում վերաբերմունքի սուբյեկտիվ կողմէ:
8. Ի՞նչ տարրերություն կա զերասանի դեպի իր գերն ունեցած ու դերի՝ դեպի իր շրջապատճ ու մյուս գործող տնձերն ունեցած վերաբերմունքի միջև:
9. Դերասանն ինչպես պետք և արտահայտի իր դեպի դերն ունեցած վերաբերմունքը:



**XII**

**ՓՈԽԱԴԱՐՁ ՆԵՐՔԻՆ ՇՓՈՒՄ**



Դերասանի ստեղծագործության կարևորագույն տարրերից մեկն ենուն փախադան ներքին օփումը։ Առանց փոխագործ ներքին շփման չի կարող տեղի ունենալ բեմական և վոչ մի համոզիչ արվեստ։

Փոխագործ ներքին շփում ունենալ, — նշանակում և հետեւ թե մեր խաղընկերն ինչպես և ընդունում մեր մտքերը, հույզերն ու արարքները և ապա՝ նրանից պատասխան ստանալով, ըստ եյտթյան գնահատել այն և համապատասխան վերաբերմունք ցույց տալ Առանց այս պրոցեսի մարդկանց կատարած զործողությունները կկրեն խիստ անկենդան ու մեխանիկական բնույթ։

Պետք ե տեսլ, վոր գերասանի վարպետության նախորդ բոլոր տարբերը, վորոնց հետ մինք արգեն ծանոթացել ենք, վերջի վերջո կարենու են միայն այնքանով, վորքանով նրանք իրեն հետեւնք՝ ապահովում են գերասանի փոխագործ ներքին շփումը Յեզ յեթե գերասանը, տիրապետելով ստեղծագործական պրոցեսի նախորդ բոլոր տարբերին, այնուամենայնիվ վորպետ հետեւվանք, չի կարողանում գործողության ընթացքում կենդանի կապ ստեղծել ու օփուլի իր խաղընկերների հետ, դա նշանակում է, վոր տվյալ գերասանը գեռաւ կազում է իր վարպետության մեջ, վորովհետև վարպետություն ունենալ — դա նախ և առաջ նշանակում է կարողանալ բեմի վրա կենդանի մարդ ներկայացնել և շփվել մյուս գործող անձերի հետ։

Այս տեսակետից ել ահա փոխագործ ներքին շփման մեջ կարող են մանել միայն մարդիկ, վորովհետև մարդը չի կարող ներքին շփում ունենալ,

### որինակ՝

- քարի, ջրի, յերկաթի, անձրեի, ծառի, ածուխի,
- արձանի, սեղանի, անիվի կամ վերաբերի հետ,

Բացի դրանից, մարդ չի կարող փոխագործ ներքին շփում ունենալ նաև կենդանիների հետ, վորովհետև նման շփումը վարակապես տարբերվում է այն շփումից, վոր մարդիկ վիտակցորեն հանդիս են բերում իրար հանդեսուի։

Այս իմաստով ել միտնպամայն պարզ է, վոր մարդ չի կարող գոխազարձ ներքին շփում ունենալ.

— կովի, այծի, հավի, ձկան,

— ձիռ, շան, կտավի կամ ծոփ հետ:

Մարդկանց փոխազարձ ներքին շփումը որդանապես կապված է և միշտ բղխում է նրանց գնահատումի ու վերաբերմունքի փունկ-ցիաներից:

Եերբ դերասանը փորձի կամ ներկայացման ժամանակ հանկուրծ իր խաղընկերներից կտրվում և կորցնում է իր փոխազարձ ներքին շփումը—դա նշանակում է, վոր նրա մեջ հիմնովին խախովում են նախ գնահատումի, ճիշտ ոիթմի, վերաբերմունքի և ապա հասարակ ու պարզ գործողության յերեք նախնական տարրերը:

Ուրիշ խոսքով դա նշանակում է, վոր՝

ա. դերասանն այլառ դադարում է իր խաղընկերոջ մտքերն ու արարքներն ըստ եյության գնահատել ու համապատասխան ոիթմի մեջ գտնվիլով, ճիշտ վերաբերմունք ցույց տալ.

բ. վոր նա խոսում ու գործում և վոչ թե իր խաղընկերների հետ ու նրանց համար, այլ շառհասարակ» և «ի միջի այլոց»:

Հետևաբար, վորպեսզի դերասանը միշտ կարողանա պահպանել իր փոխազարձ ներքին շփումը, նա պետք է ամենից տառջ սովորի համոզիչ կերպով հասարակ ու պարզ գործողություն կատարել և չկտրվել իր ընմական շրջապատից:

Իսկ այս բոլոր դեպքերում, յերբ դերասանն իր խաղի ընթացքում անշատվում է իր խաղընկերներից ու ձգտում է իր և հանգիստականների միջև աւզդակին ու ամնիջական կապ ստեղծել, նա փաստորեն կտրվում է իր դերից և դադարում է իր խաղընկերների հետ շփովելուց:


Բացի այս ամենից, պետք է իմանալ նաև, վոր շփել կարելի յե նաև առանց խաղընկերների հետ խոսելու կամ թե շարունակ նրանց յերեսին նայելու:

Ուրինակ»

— յերբ մարդիկ առանց բառ արտասանելու, փոխանակվում են հայացքներով.

— յերբ մեկը մյուսին չտեսնելով, խոսում է պատի, վարանույթի կամ թե ցանկապատի յետևից:

1. Ի՞նչ և նշանակում փոխադարձ ներքին շփում:
  2. Կորելի՛ յե փոխազարձ ներքին շփում ունենալ կենդանիների կամ անորգանական իրերի հետ:
  3. Ի՞նչ և նշանակում կորցնել փոխադարձ ներքին շփումը:
  4. Վեր ողակների խախտման հետևանքով ե, վոր դերասանը կորցնում ե իր փոխազարձ ներքին շփումը:
  5. Ի՞նչ և տեղի ունենում, յերբ դերասանն իր մոռքերը, հույզերն ու գործողություններն իր խաղընկերներին ուղղելու փոխարեն, անմիջականորեն հանդիպականներին ե ուղղում:
  6. Կարելի՛ յե արդյոք շփվել տռանց խռոքի:
  7. Կարելի՛, յե շփվել տռանց իրար նայելու:
-



XIII

ԱԼԱՐԿԱՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ



Գետք և գիտենալ, վոր ըեմի վրա առարկաները շատ անպամ սպատագործվում են զանազան կերպ։

Յերբեմն միննույն իրը կամ առարկան զանազան պայմաններում սպատագործվում է միանգամայն տարրեր նշանակությունը։

Բեմական արվեստում գոյություն ունեն առարկաների սպատագործման չորս հիմնական տեսակներ՝

### 1. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

#### Որինակ՝

— ձեռնափայտը վորպես ձեռնափայտ,

— մահճակալը վորպես մահճակալ,

— սեղանը վորպես սեղան,

— շեշտը վորպես շեշտ,

— թուղթը վորպես թուղթ,

— բաժակը վորպես բաժակ,

— զուրը վորպես զուր,

— գիրքը վորպես գիրք,

— ծաղիկը վորպես ծաղիկ,

— մոմակալը վորպես մոմակալ, և այլն։

### 2. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

#### Որինակ՝

— ձեռնափայտը վորպես տաւք,

— մահճակալը վորպես բարիկադ,

— մոմակալը վորպես մաւրճ,

— մուրճը վորպես պաշապանության չենք,

— շեշտը վորպես յերաժշտական պուծիք,

— սեղանը վորպես մահճակալ, և այն, և այլն։

### 3. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՍԻՄՎՈԼԻԿ ԿԱՄ ԱՍՊԵՐԱՑԻԴ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄ

#### Որինակ՝

— մուրճն ու մանգաղը վորպես աշխատանքի խորհրդանշան,

- ծաղիկը վորպես գարնան նշան,
- բռն վորպես դժբախտության նշան,
- պոյտը վորպես «քախափ նշան»,
- ուղը վորպես չարության նշան, և այլն:

#### 4. ԱԹԱՄԿԱՆԵՐԸ ՎՈՐՊԵՍ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՅՑՈՂ ՄԻԶՈՑՆԵՐ

##### ՈՐԲԻՆԱԿ՝

- յերբ մարդ բաժակ ջարդելով արտահայտում և զգվանք,
- թաղթը տրորելով արտահայտում և զայրույթ,
- դուռը ցրիկացնելով արտահայտում և բարկություն կամ բողոք,

— նկարը շոյելով արտահայտում և գուրզուրանք, և այլն, և այլն:

Բացի դրանից, դերասանը պետք է կարողանա իր բեմական շրջապատում յեղած իրերի ու առարկաների հետ զգույշ վարդիլ, Յերեմի լինում և այնպես, վոր դերասանն իր խաղի ընթացքում աջ ու ձախ դիմուելով, անինա վայր և զցում իր շուրջը զանվոր աթուաները, սեղանի վրա գարսված գրքերը, ծաղկամանները, ջրամանը, մոմակալը, և այլն, և այլն:

Գետը և գիտենալ, վոր այս ամենն առաջանում է՝

ա. դերասանի մկանային լարվածությունից և

բ. Գիղիկական անհրաժեշտ թիթեռության և ճկունության բացակայությունից:

#### ՍՏՈՒԴԻ ՀԱՐՑ ՀԱՐՑԵՐ

1. Վերոնք են առարկաների սպասագործման տեսակները:
2. Ի՞նչ և նշանակում առարկաների սովորակի ոգտագործում:
3. Ի՞նչ և նշանակում առարկաների անուղղակի սպասագործում:
4. Ի՞նչ և նշանակում առարկաների սիմվոլիկ կամ ասոցիատիվ սպասագործում:
5. Դերասանը կարմղ և արդյոք առարկաների միջոցով սրբազնություն արտահայտել:
6. Ի՞նչի հետեւանքով և գիտասանը դիմուելով իր խաղընկերներին ու բեմական առարկաներին

XIV

ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ



Նոխորդ զբույցների ժամանակ մենք արդեն պարզել ենք զոր զերասանը բեմի վրա պետք և կարողանա կատարել հասարակ ու պարզ գործողություն։ Այսուհետեւ գիտենք նաև, զոր յուրաքանչյուր հասարակ ու պարզ գործողություն կատարելու համար անհրաժեշտ ե, վոր զերասանն ունենա՝

ա. կենտրոնացած ուշադրություն,

բ. ճիշտ որյեկտ ու,

գ. որյեկտիվ չափի զգացում։

Այժմ մենք պետք և ամենի մոտից ծանոթանանք և հանգամանուրեն զբաղվենք այն հարցով, թե ինչ և նշանակում զերասանի ուշադրությունը նպաստելուարմար ձևով կենտրոնացնել ճիշտ որյեկտիվ վրա, վորածեղ վիճութել այդ որյեկտն ու ինչպես անել, վոր մեր ուշադրության բոլոր որյեկտները շարունակ ճիշտ լինեն։

Գետք և իմանալ, վոր մարդկային յուրաքանչյուր արարք իր հիմքում միշտ ունենում և վորեն պատճառ

Մեր շրջապատը մեր հինգ զգայարանների միջոցով մեր մեջ շարունակ առաջացնում և բազմաթիվ տպավորություններ ու վիճակներ։ Այդ տպավորություններն իրենց հերթին մեր գիտակցության բոլից անցնելով, մեր մեջ առաջ են բերում զանազան պահանջներ, մղումներ, ձգտումներ ու ցանկություններ։ Այդ ցանկություններն ու ձգտումներն իրենք, առաջանալով արտաքին կամ ներքին վորեն պատճառից, իրենց հերթին պատճառ են դառնում, վոր մարդ կատարի այս կամ այն կոնկրետ Փիզիկական գործողությունը։

Որինակ՝

— Հրաշը ջուր և խմում (Փիզիկական գործողություն), վորովհետեւ ուղում և իր ծարավը հագեցնել (ցանկություն)։

— Ալիկը մարում և սենյակի լույսը (Փիզիկական գործողություն), վորովհետեւ ուղում և լուսանկարներ տպել (ցանկություն)։

— Նազիկը թիրեռնիկներ և վորում (Գիղիկական գործություն),

վորովհետեւ ուզում և ուսումնասիրություն կատարել (ցանկություն):

Նշանակում և միանգամայն պարզ ե, վոր մարդկային ամեն մի արարք կամ գործողություն միշտ ունենում և իր ներքին արտօնության ու արտաքին ֆիզիկական կողմբը, ըստ վորում զործողության արտաքին կողմը միշտ պետք և պարագանակորչած լինի վորնեւ ներքին արդարացուցիչ պատճառով:

Իսկ այն բայրը զեպքերում, յերբ գործողության արտաքին կողմը չի ունենում իր ներքին արդարացուցիչ պատճառը, այսինքն ավյալ ֆիզիկական արարքը պայմանավորող ներքին ձգումներն ու ցանկությունը, գործողությունը միշտ կկրի միանգամայն անբովանդակ ու մակերևսային բնույթ:

Ցեղ այսպես, բեմական արվեստում այն բոլոր ձգումներն ու ցանկությունները, վոր զերասանն ստիրված և կատարել իր զերի անունից, հանդիսանում ե նրա, այսպես կոչված, բեմական կամ դերասանական խնդիրը,

Ուրիշ խորքով, բեմական կամ զերասանական խնդիրը զերից բղխող ու զերասանի համար պարտապիր զարձնող այն կոնկրետ ու ակտիվ ցանկարյալն ե, վորի համար զերասանը՝ վորոշ ֆիզիկական գործողություն կատարելով՝ ձգում և կինսագործել:

Սակայն պետք ե ասել, վոր զերասանի համար ֆիզիկական արտահայտություննից զուրկ ցանկությունը զերևն զերասանական խնդիր չեւ Ցանկությունը զերասանական խնդիր և դառնում միայն այն զեպքում, յերբ նա ակտիվ կերպով զբանորում և վորնեւ ֆիզիկական զարգացրյամբ: Առանց այս կարևոր հանգամանքի առանձին վերցրած ցանկությունը միշտ ել կնուած անհատի մեջ թագնված լոկ պաստիվ մի դրություն:

Դերասանական խնդիրը բացի ակտիվ ցանկությունից ու համապատասխան ֆիզիկական գործողություննից, պետք և ունենանական տվյալ գործողության կատարման լեզամակն ու զաւնը, վորովհետեւ տռանց այս կարևոր հանգամանքի վոչ մի զեպքում չի կարող տեղի ունենալ վոչ մի ֆիզիկական գործողություն:

Նշանակում եւ յուրաքանչուր բեմական կամ զերասանական խնդիր միշտ բաղկացած ե լինում յերեք հիմնական տարրերից, վորոնք միշտ գտնվում են որգանական միասնության մեջ:

Որինակ:

— յենթագրենք, վոր Սուրենը, Արովյան փողոցով անցնելիս:

Հանկարծ նկատում ե, վոր վերնից դեպի իրեն ոլացող մի ավտոյ յեղալիս Միանգամայն պարզ ե, վոր ավյալ դեպքում ոլացող ավտոն Սուրբենի համար կհանդիսանա այն արտաքին պատճառը, վորը, ներդործելով նրա վրա, կատեղծի նրա համար մի նոր և անսպասելի վիճակ:

Այժմ փորձենք վերլուծել Սուրբենի այս վիճակն ու պարզենք. թե ավյալ պայմաններում ինչը կհանդիսանա նրա՝

ա. նիմմական ցանկուրյալնը,

այսինքն՝ գործողության ներքին կողմը.

բ. ֆիզիկական գործարյալնը,

այսինքն՝ գործողության արտաքին կողմը.

Պարզ ե, վոր Սուրբենը, տեսնելով գեղի իրեն յեկող ավտոն, վոյրկենապես կզգաւուանա և գիտակցելով, վոր ինքը կարող է ավտոյի տակ ընկնել, անմիջապես կաշխատի գժրախոռությունից փրկվել:

«Դժբախոռությունից փրկվել», — ահա այն միակ ու հիմնական ձգտումը, վոր կելանի Սուրբենի ամրող ուշազրությունն ու կարգը:

«Դժբախոռությունից փրկվել» ավյալ գեղագում կհանդիսանա Սուրբենի միակ և հիմնական ցանկությունը, այսինքն՝ նրա կատարելիք գործողության ներքին կողմը:

Այնուհետև միանգամայն հասկանալի յե, վոր Սուրբենն իր այդ ցանկությունը կատարելու համար կամ պետք ե արագորեն փողոցն անցնի, կամ թե յետ դառնա. Յենթագրենք, թե վորոշեց փողոցն անցնել Դա կընի Սուրբենի ցանկության Փիզիկական արտահայտությունը, այսինքն՝ նրա կատարելիք գործողության արտաքին կողմը:

Այժմ հարց և ծագում բայց չը վոր Սուրբենը կարող է փողոցն անցնել զանազան կերպ.

որինակ՝

— զանգաղ կամ արագ,

— շփոթված կամ սառնասիրտ,

— վախեցած կամ հանգիստ,

— այլայլված, հուզված, և այլն, և այլն:

Թե ինչպես կկատարի նա իր. այդ անցնելու գործողությունը, ուս կընի Սուրբենի գործողության կատարման յեղանակն ու գույնը:

Այնուհետև յենթագրենք, թե հենց այդ նույն Սուրբենը, այլայլված վիճակում փողոցն անցնելով, մայթի մոտ պատահաբար ուժգին թափով կողշում ե մի անցորդի:

Պարզ է, վոր անցորդի դժգոհությունը Սուրենի համար կդառնա մի նոր պատճեռ, վորպեսզի Սուրենի մեջ առաջանա մեր նոր խնդիր»

#### ՈՐԲԻՆԱԿ՝

- Ներողություն խնդրել,
- արգարանաւ,
- մեղագրել անցորդին,
- պաշտպանվել բացարություն տալ, և այլն, և այլն.

Յեղ այսպես, յեթե մենք ուշի ուշով հետևենք այդ Սուրենին, կտեսնենք, վոր նրա մեջ որվա ընթացքում հարյուրավոր այդպիսի խնդիրներ են ծագում:

Մի խնդիրը փոխվում է մյուսի և այսպես անվերջ: Նույնը տեղի յե ունենում կյանքում նաև մեզ բոլորին հետ Ստուգեցեք ինքներդ ձեզ և դուք այդ բանում խսկույն կհամոզվեք:

Սակայն պետք շեշտել, վոր գերասանական խնդրի յերրորդ տարրը, այսինքն՝ գործողության կատարման յեղանակն ու գույնը շատ կարելոր ու վճռական նշանակություն ունեն բնմտկան ստեղծագործության մեջ, վորովհետեւ գերասանը յերբեք չի կարող իրեն անհրաժեշտ գործողությունը կատարել մենց այնպես, փնչպես կամենա: Դերասանն ուզի, թե չուզի, իր գերասանական ցանկությունն ու ֆիզիկական գործողությունը գտնելուց հետո, պետք է վորոնի և գտնի նաև այդ գործողության կատարման համար համապատասխան յեղանակ ու դույն:

#### ՈՐԲԻՆԱԿ՝

յինթաղինենք, թե դարձյալ նույն Սուրենը, վորպես խնդիր-ուզում ե իր պատրիք ազավեր,

բայց Սուրենն այդ կարող է անել՝

- աներեսությամբ,
- սիրալիրությամբ,
- կոպտությամբ,
- խորամանկությամբ,
- կատակի բնույթ տալով,
- շատպելով կամ սառնասրառությամբ, և այլն, և այլն:
- կամ թե՝

«ցանկանում ե իր դիրեկտորից տվանս ուսանալ».

բայց նա այդ պահանջը կարող է ուզել՝

- խնդրելով կամ պահանջելով,
- շատ հանդիսա կամ խուճապով,

- քաշվելով կամ ցինիկությամբ,
- ստորանալով կամ արժանապատվությամբ,
- քձնելով կամ սպառնալով,
- մեծ լրջությամբ կամ կատակելով, և այլն, և այլն:

Յեկ ահա այն ձեզ, թե Սուրբենն ինչպես կկատարի իր այս խնդիրները, կլինի նրա գործողության կատարման յեղանակն ու դույնը:

Յեկ յեթե արվածաի մեջ ընդհանրապես և թատերական, ստեղծագործության մեջ՝ մասնավորապես, խանուշազրության և մատնվում գեղարվեստական ձեզ, այսինքն՝ «իմշապնօթ», այդ նշանակում եւ վոր տվյալ թատրոնն այլևս գաղարում և արվիստ լինելուց:

Հետևարար յեթե չկա տկտիվ ցանկօւրյուն, վորը չունենա իր ֆիզիկական զորադարձությունը, ասդա չկա և գործողություն, վորը չունենա իր կատարման անհրաժեշտ զայնն ու յեղանակը,

Մենք գերասանական խնդրի այս յերրորդ տարրի վրա հատկապես այսքան յերկար կանգ տռանք միայն նրա համար, վոր դա շատ կարնոր ու վճռում կան նշանակություն ունի մեր ստեղծագործության համար:

Շատ հաճախ մեր գերասաններն իրենց բեմական կամ գերասանական խնդրի առաջին բաղկացուցիչ տարրը, այսինքն՝ դերի ցանկօւրյութը շփոթում են նույն այդ խնդրի յերրորդ բաղկացուցիչ տարրի, այսինքն՝ գործողության կատարման յեղանակի և գույնի հետ:

### Որինակ

— վրանդել, փաղաքշել, հրավիրել, հանդիմանել և նման ակատիով գործողություններ գերասանը շփոթում ե

— կոպիտ, քնքուշ, սիրավիր, խիստ և նման այլ գույնների հետ\*

Բացի գրանից, պետք եւ ասել, վոր յեթե գերասաններից շատերն իրենց գերասանական խնդրի ցանկությունները շփոթում են այդ նույն խնդրի կատարման յեղանակի ու գույների հետ, ապա կան նաև գերասաններ, վորոնք իրենց գերի ցանկությունները շփոթելով նրա երամագրուրիումների հետ, սկսում են գերն զգացմունքների բաժանել և միանդամից խաղալ այդ զգացմունքները:

### Որինակ

գերասանը պարզում ե, վոր իր գերը՝

— սկզբում ուրախ ե,

— հետո տխուր,

— մի փոքր անց զայրանում ե,  
— ապա սիրում և վերջում տառւմ ե իր սիրածին, և այլն,  
և այլն:

Դերասանն առանց յերկար ու բարակ մտածելու սկսում է  
հերթով խաղալ ուրախություն, տիրություն, զայրույթ, ուր,  
առելություն և այլն:

Սակայն, յեթե մենք ուշի ուշով դիտելու լինենք այս պրո-  
ցեսն ու մեզ մի փոքր հաշիվ տանք, ապա հեշտությամբ կհասկանանք,  
վոր նման գերասանը հենց սկզբից ևեթ փաստորեն սկսում է  
խաղալ այն, ինչ վոր վորպես հետևանք նրա մեջ պետք և առա-  
ջանա ինքնարերարաց, Ռերիշ խոսքով, դերասանը կընկրես զածո-  
դուրյաւններ կատարելու փոխարեն, սկսում է վերացական զգացմունք-  
ներ խաղալ:

Իսկ վորպեսպի մեզ համար շարունակ պարզ լինեն և վերա-  
ցական բնույթ չկրեն մեր զգացմունքները, մենք պետք ե հանդա-  
մանորեն վերլուծենք ու գտնենք այս ակունքը, վորից տման անզամ  
մեր մեջ առաջանում ե այս կամ այն զգացմունքը:

#### Որինակ՝

— յենթադրենք թե Վաչիկը համար կերպով ձգտում ե  
ողաչու դառնաւ, բայց յերբ նրան այդ չի հաջողվում, նա սկսում  
է տիրել, վշտանալ ու խորը ապրումներ ունենալ Այսուհետեւ  
յենթադրենք, թե Միշիկը հանդիպում է վշտու Վաչիկին ու  
սկսում է հետաքրքրվել նրանով: Շատ հասկանալի յե, վոր Վա-  
չիկը կսկսի իր տիրությունը բացարել նրանով, վոր իրեն չի  
հաջողվել ողաչու դառնաւ վոր իր միակ ցանկությունը չիրագործ-  
վեց, և այլն, և այլն:

Նշանակում ե՝ միանդամայն պարզ ե, վոր Վաչիկի մեջ տիրու-  
թյան զգացմունքն առաջացավ վոչ թե նրա համար, վոր նա ձգտում  
եր տիրու լինել, այլ նրա համար, վոր նրա ցանկուրյաւնը չլրա-  
կանացավ:

Եեվ ահա, ճիշտ այնպես, ինչպես Վաչիկի այս զգացմունքը,  
այնպիս ել մարդկանց բոլոր զգացմունքներն անխսիր, հանդիսա-  
նում են նրանց ձգտումների, ու ցանկությունների դրական կամ  
բացասական նեռնվանքները Ռերիշ խոսքով՝ մեր բոլոր զգացմունք-  
ները վոչ ոյլ ինչ են, յեթե վաչ մեր բավարարված կամ չբավար-  
րված կամքի արդյունքներ:

#### Որինակ՝

— մարդ ձգտում է վորեն նպատակի և յերբ այդ նրան

շի հաջողվում, սկսում ե տիրել, նրա մեջ առաջ են գալիս զա-  
նազան տեսակի դժուն զգացմունքները:

Մարդ ձգտում ե վորեն նպատակի և յերբ այդ նրան  
հաջողվում ե, նա սկսում է ուրախանալ և նրա մեջ առաջ են գա-  
լիս զանազան տեսակի դժունակության զգացմունքները:

Նշանակում ե, վոր մեր բոլոր զգացմունքները սերտ կերպով  
կտպված են մեր ձգտումների ու ցանկությունների հետ ու պայ-  
մանավորված են նրանցով:

Դերասանն իր զերը պատրաստելիս պարտավոր ե իր աշ-  
խատանքն սկսել վոչ թե ուղղակի վերացական զգացմունքներ  
խաղալուց, այլ նա պետք ե նախ և առաջ վերջուծի և գննի իր  
բիմական տիպի այն կօնկրետ ցանկությունները, վարոնց դրական կամ  
բացառական նետքանիքով ե միայն, վառ եռա մնջ ծնվամ ե այս կամ  
այն զգացմանը, Դերասանի բիմական ցանկությունը հանդիսա-  
նում ե նրա մեջ առաջացած զգացմունքի մայրը, Ցանկությունն  
ե, վոր ճնում ու սնում ե զերասանի զգացմունքները, Իսկ այն  
բոլոր դերասանները, վորոնք չկիտեն կամ չեն ուղում գիտենալ  
այս տարրական ճշմորտությունը, նրանք միշտ ել միանգամից  
բռնում են զգացմունքի յեղջյուրներից ու սկսում են նահատակել  
թե իրենց և թե հանդիսականներին:

Բացի զրանից, բավական չե միայն զերը վերլուծել և գտնել  
նրա բոլոր ցանկություններն ու ֆիզիկական գործողությունները,  
անհրաժեշտ ե նաև, վոր դերասանն ակտիվ կերպով ձգտի և ուղենա  
կատարել այդ ցանկությունները:

Այսուհետեւ պետք ե հիշել, վոր մենք որյեկտների մասին  
խոսելիս ասել ենք, վոր գերասանի համար որյեկտ և հանդիսանում  
այն ամենը, ինչի վրա գործողության տվյալ մոմենտին  
կենսարունանում ե նրա ստեղծագործական ուշադրությունը: Այս  
տեսակետից ել առա պետք ե գիտենալ, վոր ներկայացման ընթաց-  
քում զերասանի ամենանիմեկան որյեկտը միշտ հանդիսանում ե  
նրա բիմական կամ դերասանական խնդիրը:

Իսկ յերբ զերասանն իր աշխատանքի պրոցեսում չի կարո-  
ղանում գտնել իր գերի ճիշտ խնդիրները, պարզ ե, վոր նա չի  
ել կարող իր ուշադրությունը կենարունացնել նրանց վրա: Իսկ  
դա նշանակում ե, վոր զերասանի կատարած գործողություններն  
անխուսափելիորեն միշտ կլընեն նախ անիմաստ և ապա լարված  
ընույթ: Բեմական խնդիրները զերասանի համար այն սահղեա-  
գործական աստիճաններն են, վորոնց ոգնությամբ միայն նա կարող

և բարձրանալ իր գերի բարձրւնքներն ու աիրել նրանց, իսկ այն-  
ըստը զերասանները, վորոնք փորձում են աիրել իրենց զերերին-  
առանց այդ աստիճանների, նրանք միշտ ել զերը հաղթահարելու-  
փոխարեն իրենք են հաղթվում զերից, իսկ վորպեսզի դերասանի-  
բեմական ինդիբները շարունակ ճիշտ ու համոզիչ լինեն, նա  
պետք ե միշտ գիտակցական մոտեցում ունենա զեպի նրանց  
ընտրությունը:

Դերասանը ներկայացման ժամանակ իր խաղի ընթացքում՝  
միշտ պետք ե հաստատգիտենա, թե ինքը, վորպես տվյալ պիեսի-  
գործող անձ, զերի տվյալ հատվածում

ա. ի՞նչ ե ուզում . . . զանկություն,

բ. ի՞նչ ե անում . . . զարձադրյալն,

գ. ի՞նչպես ե անում . . . լեղանակ և գույն:

Առանց այս յերեք նիմունական տարրերի դերասանի համար-  
չկա և չի ել կարող լինել վորոնք ուրիշ տեսակի բնմական կամ-  
դերասանական ինդիբը:

Դերասանն իր բնմական ինդիբները վոչ թե պետք ե ամեն-  
անգամ հնարի կամ ողից վերցնի, այլ նա այդ ինդիբները պետք  
է արամաբանորեն ըդխեցնի իր զերի տվյալ կոնկրետ վիճակից:  
Սա շատ կարենոր ե և յերբեք չպետք ե մոռանալ:

### ՍՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ե նշանակում բնմական կամ դերասանական ինդիբը:
2. Ի՞նչի հետևոնքով են մարդկանց մեջ ձգութեան ու  
ցանկություններ առաջանաւում:
3. Վերոնք են դերասանական խնդրի յերեք բաղկացուցիչ-  
տարրերը:
4. Ի՞նչ ե նշանակում գործողության ներքին և արտաքին-  
կողմ:
5. Ի՞նչով կարելի յե վորոշել դերասանի տաղանդավորության-  
շափը:
6. Ի՞նչն ե հանդիսանում դերասանի հիմնական որյեկտը:
7. Դերասանն իր զերի ցանկությունը հաճախ ի՞նչի հետ ե-  
շխոթաւում:
8. Ի՞նչ ե նշանակում զգացմունք:
9. Կարելի յե արդյոք զգացմունք խաղալ:
10. Վերտեղից ե վերցնում դերասանն իր բնմական կամ դերա-  
սանական ինդիբները:

**XV**

**ՄԿԱՆԱՅԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԻՆ**



Մեր նախորդ զբույցների ժամանակ արդեն առել ենք, վորկորցնել ուշադրությունը նախ և առաջ նշանակում ե անպայմանորեն կորցնել իշխանությունն իր նկատմամբ, զրկվել ինքնառմիրապետությունից: Իսկ այժմ պետք ե գիտենալ նաև, վոր գերտասանն իր բեմական ուշադրությունը կորցնելու հետևանքով անխուսափելորեն ընկնում ե, այսպես կոչված, միանալին լավաձարյան մեջ, վորն ունի իր արտահայտության յերեք հիմնական կլասիկ ձևերը:

ա. Լարվածության առաջին տեսակը բեմական արվեստում պայմանականորեն կարելի ե անվանել

«արոնիա» (մկանային անլարվածություն):

Լարվածության այս տեսակը հիմնականում արտահայտվում է նրանով, վոր՝

— գերասանը բեմի վրա ըոլորովին թուլանում ու վախճնում և տեղից շարժվել:

— Այս տիպի գերասանը շարունակ անտեղի քաշվում, կարմրում ու նույնիսկ ամաչում ե խոսել և վորեն հասարակ գործողություն կատարել:

— Դերտուանն անախորժ հուզմունքի հետևանքով ընկնում և դողի, քրոնքի և զանազան ֆիզիկական տհանությունների գիրկը:

— Այս կարգի գերասանը բեմի վրա շարունակ մտածում ե, թե յերբ պետք ե ինքը բեմից դուրս գա, կամ թե գործողությունը վերջանա:

Այս տիպի գերասանը տանել չի կարողանում, յերբ փորձերի ժամանակ ներկա յեն լինում կողմանքի անձինք:

բ. Լարվածության յերկրորդ տեսակը պայմանականորեն կարիլի յե անվանել

«միավերանիա» (մկանային գերլարվածություն),

Լարվածության այս տեսակը զիստավորապես արտահայտվում է նրանով, վոր՝

— գերասանը բեմի վրա կարծեք թե փայտանում ե ու, քար կարելով, այլև չի կարողանում տեղից շարժվել:

— Այս կարգի գերասանը բեմի վրա կորցնելով իր աչքերի սպորտական փայլը, զրեթե զրկվում և կենդանության նշույլց:

— Այս տիպի գերասանը նայում է, բայց չի տեսնում, ականջ և դնում, բայց չի լուսում:

գ. Վերջապես լարվածության յերրորդ տեսակը, որ այն տեսակն է, վորի նշանները վորոշ պայմանական առումով կարելի և համեմատել հոգեկան այն վիճակի հետ, վորը կոչվում է՝

«Պայխապահի»:

Այս տիպի լարվածությամբ տառապող գերասանն իր մտածին շարունակ այն հաստատ կարծիքն ու համոզմունքն ունի, վոր ինչը բեմի վրա յերբեք չի լարվում և վոր ներկայացման ժամանակ ինչը միանգամայն ազատ և ու համարձակ:

— Այս տիպի գերասանը շարունակ ընկնում և մի տեսակ արտակարգ տրանսի մեջ ու կորցնելով իր բնմական ուշադրությունն ու նորմալ չափի զգացումը, այլևս չի կարօղանում ինքն իրեն տիրապետել և հաշիվ տալ իր արածների համար:

— Այս կարգի գերասանը բեմի վրա անց ու գրք անելիս իրեն չափազանց շագատը ու «համարձակի զգալու հնաւենացով շարունակ կոխվրտում և իր խաղընկերների վոտները և կողյում գեկորներին, կանկարասիներին և իր շրջապատի մյուս առարկաներին:

— Դերասանի այս տիպն ունենում է մի տեսակ հիվանդութամարձակություն, վորը բեմի վրա սանձարձակության հասնելով, շփոթ ու իրարանցում և ստեղծում ներկայացման մեջ:

Պետք ե զիտենալ, վոր մկանային լարվածության այս յերեք տեսակներն ել պլասվորապես միշտ առաջանում են հասարակ ու պարզ գործողության շերեք նախնական տարրերի խախտումնց:

Դերասանն իր ստեղծապործութական ազատությունն ապահովեց ու համար պետք ե սովորի ու կարողանա զեկովարել իր ուստացությունն ու կամքը:

Յերբ դերտանի մեջ խախտվում և հասարակ ու պարզ գործողության յերեք նախնական տարրերից մեկն ու մեկը, այսինքն՝ ուշադրությունը, որյեկտը կամ չափի զգացումը, նու անխռուակելիորեն սկսում և ֆիզիկական անհանգստություն զգալ և լարվածության մեջ ընկնել:

Դերասանի ներքին տեխնիկայում առաջացած ամենաչնչին ժեղքվածքն անգամ խսկույն և իրեն զգացնել և տալիս առաջին տեխնիկայի ինդրում, վորովհետեւ բեմի վրա յերբեք գոչ մի

ախալ անհետնանք չի անցնում, յեթե գերասանը լաշ չի ախրա-  
պեռում իր վարպետությանը:

Բացի զրանից, շափազանց վատանգավոր ե, յերբ գերասանը  
քեմի վրա ավելորդ լարվածությունից խուսափելու համար շաբաւ-  
նակ մտածում ե մկանային ազատության մասին:

Բեմի վրա ազատ զգալու և մկանային լարվածության մեջ  
շընկնելու միտքը շատ հաճախ գերասանի համար ինքնին դառնում  
է ուշաղրության մի նոր որյեկտ, վորն աննկտելի կերպով կլա-  
նում ու փոխարինում ե նրա բեմական մյուս բոլոր որյեկտները:  
Յեկ ահա այսքանն արդեն բավական ե, վոր գերասանի բեմական  
ուշաղրությունն արմատապես խախտվի ու գերասանն ընկնի ավե-  
լորդ լարվածության մեջ:

Այսուհետև պետք ե ասել, վոր գերասանի բեմական կամ  
ստեղծագործական ազատությունը վոչ մի դեպքում չի կարելի և  
չսկսած և հասկանալ այնպես, վոր իրը թե գերասանն իր խաղի  
ժամանակ պետք ե ունենա մկանային լիակատար ու բացարձակ  
ազատություն:

Իսկ ոտք ընդհանրապես ճնարավոր չե, վորովհետև մկանային  
լիակատար կամ բացարձակ ազատության դեպքում գերասանը  
բեմի վրա պարզապես վայր կընկնի և այլևս չի կարողանա տեղից  
շարժվել:

Նշանակում ե՝ մկանային ավելիոր լարվածությունը գերասա-  
նի համար նույնքան մնասակար ու վատանգավոր ե, վորքան և  
մկանային լիակատար կամ բացարձակ ազատությունը:

Դերսանն անշուշտ իր մեջ վորոշ տիպի անհրաժեշտ լուր-  
պածություն պետք ե միշտ ունենաւ: Սակայն այդ լուրվածությունն  
անպայման պետք ե կը նազատակահարմար բնույթ և վոչ մի  
դեպքում չպետք ե կաշկանդի գերասանի ստեղծագործական ազ-  
ատությունը:

Յեկ այսպես, նշանակում ե պետք ե հիշել և յերբեք չմոռա-  
նալ, վոր գերասանի մեջ մկանային ավելորդ լարվածությունը  
գլխավորապես տռաջանում ե:

ա. նասարակ ու պարզ գաճողաւրյան կատարման յերեք նախ-  
նական առեւերի խախտումից,

այսինքն՝ կենարոնացած ուշաղրության, ճիշտ որյեկտի ու  
շափի զգացման բացակայությունից.

բ. բնմական անելիքներ նասաւ չգիտենալուց,

այսինքն՝ գերասանական խնդրի անորոշությունից.

գ. դերի ծանրության տակ ընկնվելուց,  
-յսինքն՝ բեմական փորձի պակասությունից:  
Մկանային ավելորդ լարվածությունից աղատազբվելու հա-  
մար, վորպես մարզանք, անհրաժեշտ և հասարակ Փիզիկական գոր-  
ծողություններ կատարել:

## ՍՏՈՒԴԻ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ե պատահում դերասանին, յերբ նա կորցնում է իր  
բեմական ռաջադրությունը:
2. Վորմնք են մկանային լարվածության յերեք կլասիկ  
աեսակները:
3. Ի՞նչպես ե արտահայտվում լարվածության «աթոնիա»  
աեսակը:
4. Ի՞նչպես ե արտահայտվում լարվածության «հիպերթոնիա»  
աեսակը:
5. Ի՞նչպես ե արտահայտվում լարվածության «պսիխոպա-  
տիա» աեսակը:
6. Դերասանը կարմղ ե արդյոք մկանային լիակատար ու  
բացարձակ աղատություն ունենալ, թե վոչ:
7. Վորմնք են մկանային լարվածության հիմնական պատ-  
ճառները:
8. Ի՞նչ միջոցով կարելի յե բուժել մկանային լարվածու-  
թյունը:

XVI.

ԱՐՁԱՆԵՐ



Կարելի յե ասել, վոր գերասանի ստեղծագործության գործիքը, վորը հանդիսանում է ինքը գերասանը, վորոց պայմանական առումով, շատ նման և սադիս գործիքի:

Ճիշտ այնպես, ինչպես լավ ասդիս գործիքը, առանց իր նյութի ըստանդակությունն աղավաղելու, ընդունում և ու հաղորդում, ճիշտ այնպես ել լավ գերասանը պարտավոր և առանց իր գերի սոցիալական նյությունն աղավաղելու, ըմբռնել ու իր գործիքի շնորհիվ հասցնել այն հանդիսականներին: Սակայն զըահամար պետք և վոր գերասանի պսիխո-ֆիզիկական ապարատը ճիշտ գործի, իսկ ճիշտ գործելու համար անհրաժեշտ և, վոր նրա ապարատը ժանգվածքներ չունենա, վորովհետև այդ ժանգվածքները շատ լրաց վնասներ են հասցնում դերասանի ստեղծագործությանը. նրանք շարունակ խանգարում ու աղավաղում՝ ևն նրա ստեղծագործությունը:

Եեվ վորպեսզի գերասանն ազատ լինի այդ ժանգվածքներից, նա պարտավոր և մաքրել ու շարունակ ստուգի, իր ստեղծագործության ապարատը՝ ժանգվածքներից ազատվել կարելի յե՝ միայն մի շորք անհրաժեշտ ու տևական մարզանքներ կատարելով:

### 1. ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ, ԿԱԳՎԱԾ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Անհրաժեշտ և դիտելու ժամանակամիջոցը աստիճանաբար պակասեցնել, իսկ տեսողության որյնկաներն ավելացնել և ընդհակառակը:

#### Պարտապմունք | -ին,

Ուսանողին դիտել տալ զանազան առարկաներ, առաջարկել վոր նա հերթով, կամ մեջընդմեջ, սկզբից ու վերջից հիշողությամբ ասի իր տեսած առարկաների ճիշտ գույները, ձևերը, չափերն ու քանակը:

— Գույնավոր մատիտներ:

— Գույնավոր, բայց տ-ըբեր ձևերի թերթիկներ:

— Գույնավոր, բայց տարբեր չափի մատիտներ:

— Գուշնավոր թերթիկներ, բայց վրան զանազան թվեր ու հատուկ անուններ գրված:

— Գուշնավոր և տարրեր չափերի փայտի ողակներ և այլն:  
Պարապմանը 2-րդ:

Ուսանողին ուշադրությամբ դիտել տալ զանազան աղյուսակներ և առաջարկել, վոր նա հիշողությամբ վերականգնի իր իր տեսածք:

— Լուսոյի քարտեր:

— Տաների և թվերի խորանարդներ:

— Դիտային թվեր:

— Զանազան գուշնավոր նկարներ ու նախշեր:

— Թարտեզներ և այլն:

Պարապմանը 3-րդ:

Ուսանողին ուշադրությամբ դիտել տալ վորեւե առարկա կամ տեսարան և առաջարկել, վոր նա հիշողությամբ պատմի ու մանրամասն նկարագրի իր տեսածք:

— Սենյակի ընդհանուր տեսքը:

— Առանձին վերցրած պատը, անկյունը, կամ կահկարասին:

— Պատից կախված նկարը:

— Ներկա յեղող ուսանողների հագուստներն ու մազերի ստնբվածքը:

— Ուսանողների դեմքի արտահայտությունը:

Պարապմանը 4-րդ:

Ուսանողին առաջարկել, վոր ուշադրությամբ դիտի և ապա հիշողությամբ ասի, թե ով ինչ առարկա յե իրեն ցույց տվել, դրեւ սեղանին, կամ թե ուրիշի գրպանը:

— Զանազան առարկաներ ցույց տալ:

— Զանազան առարկաներ գնել սեղանին:

— Զանազան առարկաներ գնել իրար գրպան:

— Զանազան առարկաներ հավաքել և ուսանողին առաջարկել, վոր վերադարձնի իրենց տերերին:

Պարապմանը 5-րդ:

Ուսանողին ուշադրությամբ դիտել տալ զանազան առարկաների զասավորություններ ու ապա առաջարկել, վոր նա հիշողությամբ ասի իր տեսած առարկաների ճիշտ զասավորությունները:

— Լուսոյատըի:

(Իսպ, սպիրտ, կոկային, խինին, մենթոլ և այլն):

— Գրադաբան:

(Կազիոսալ, Համեստ, Ֆառևստ, Քառս, Լիր արքու և այլն):

— Մոխրաման:

(Բղթի կոտրներ, ծխախոտի մնացորդներ, վասված լուց-կիներ և այլն):

— Լուցկիներից կառուցված զանազան նախշեր և այլն:  
Պարապմանը 6-րդ:

Ուսանողին ուշադրությամբ դիտել տալ զանազան ձևով  
պատորված մարդկանց խմբեր ու առաջարկել վոր նա հիշո-  
ղությամբ տաի իր տեսած մարդկանց ճիշտ դաստիքորությունները:

— Արհեստանոց:

— Բուժարան:

— Կայարան:

— Դասարան:

— Հանգստյան տուն:

— Կրկես և այլն:

Պարապմանը 7-րդ:

Ուսանողին ուշադրությամբ դիտել տալ առարկաների ու  
մարդկանց վորոշ դասավորություններ ու ապա նրանից գաղտնի  
փոփոխելով արդ դասավորությունները, առաջարկել ուսանողին,  
վոր նա գանի արված փոփոխություններն ու վերտականգնի  
նրանց սկզբնական դասավորությունները:

— Զանազան աշխատանքային պրոցեսներ:

— Ընդհանուր ժողովներ:

— Ճաշարան:

— Լուսանկարվող մարդկանց խմբեր:

— Շախմատային դասավորություններ:

— Զանազան առարկաների դասավորություններ, և այլն,  
և այլն:

Պարապմանը 8-րդ:

Ուսանողին առաջարկել վոր նա հիշողությամբ նկարագրե  
վորեան հանրածանոթ շենք կամ մարդ:

— Կրեմլի արտաքին տեսքը:

— Կուլտուրայի տաճ դաշլիճի տեսքը:

— Պրոլետարական հեղափոխության մեծ առաջնորդների  
կերպարանքները:

— Մեր ականավոր դիտնականների ու արվեստագիտների  
դեմքերը և այլն,

2. ԱԽԾԱԿՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐԻ, ԿԱՊՎԱԾ ՀՍՈՂԱԿԱՆ-  
ՎԻՇՈՂԻԹՅԱՆ ՀԵՏ

Անհրաժեշտ է լուելու ժամանակամիջոցն աստիճանաբար-  
պակառնցների, իսկ լողության որյեկտներն ավելացնել և ընդհա-  
կառակը:

Պարապմունք 1-ին:

— Ուսանողներին առաջարկել լարված ուշազրությամբ լսել  
այն բոլոր ձայները, վորոնք տեղի են ունենում տվյալ սենյակում:

— Ուսանողին առաջարկել վոր նա ուշազրությամբ լսի  
գաշնամուրի ձայնը և ձեռքն իջեցնի, յերբ ձայնը բոլորովին  
կմարդ:

— Խօսողությանը լարելու յերաժշտության ուժեղացումով՝  
ու թուլացումով գտնել նախապես պահված տռարկայի տեղը:

— Ուշազրությամբ լսել ու մարմինն արագությամբ զարձ-  
նել զեպի համկապես այդ նպատակով տրվող ձայնը:

— Ուշազրությանը լարել ու լսել նախ դրսից յեկող ձայ-  
ները, ապա շենքից ու վերջում բոլոր տեսակի ձայներն ու  
շատ էներգի:

Պարապմունք 2-րդ:

— Ուշազրությամբ լսել ու, հերթ չփախցնելով, ասել պայ-  
մանավորված տառով սկսվող քաղաքների կամ հայտնի մալո-  
կանց անուններ:

— Ուշազրությամբ լսել ու հետեւ, թե հերթով ով ինչ  
բառ ասաց և կրկնելով բոլոր նախորդ տաված բառերը, տվե-  
լացնել նորը:

— Ուշազրությամբ լսել ու վեր կենալ, կամ նստած մնալ  
յերբ տրվում են կարծր կամ հեղուկ տռարկանների անուններ:

Պարապմունք 3-րդ:

— Ուշազրությամբ լսել ու վորոշել տռարկայի ձայնը:

— Ուսանողների հետ նախապես պայմանավորվել, վոր վո-  
րոշ բառեր արտասանվելու դեպքումնրանք վորոշ շարժումներ կա-  
տարեն:

— Ուսանողներին նախապես համարակալել 0-ից մինչև 9-ը.  
և նրանցով թվարանական շորս գործողություն կտարել:

Պարապմունք 4-րդ:

— Ուսանողներին տառերի վերածել ու նրանցով բարձրա-  
ձայն նամակ գրել ու կարդալ:

— Ուսանողներին տալ մի վորեն պատմություն և խնդրել, վոր նրանցից յուրաքանչյուրը հերթով ամեն անզամ մեկական նախագահություն կարդա, ու ապա՝ մասնակցողներից մնկն ու մեկին առաջարկել, վոր նա պատմի տվյալ ամբողջ պատմությունը:

— Ուսանողներից մեկին առաջարկել, վոր նա վորեն դեպք յերկրորդ անզամ նկարագրի, իսկ մի ուրիշ ուսանողի խնդրել, վոր հետեւ ու ասի, թե արդյոք պատմողը տվյալ դեպքը նույնությամբ և նկարագրում, թե վոչ:

### 3. ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ, ԿԱԳՎԱԾ ՇՈՇԱՓՈՂԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Անհրաժեշտ և շոշափելու ժամանակամիջոցը աստիճանաբար պակասեցնել, իսկ որյականերն ավելացնել և ընդհակառակը:

#### Պարապմունք 1-ին:

— Ուսանողին առաջարկել մե վորեն առարկա և խնդրել, վոր նա շոշափելուց հետո մանրամասն նկարագրի առարկայի ձեն ու արտաքին հատկությունները:

— Շոշափելով վորոշել զանազան դրամանիշներ:

— Շոշափելով զանել նախապես ընտրված ու նշան արված լուցկին կամ թղթի կտորը:

#### Պարապմունք 2-րդ:

— Ուսանողին առաջարկել շոշափելիքի միջոցով վորոշել առարկաների դասավորություններն ու հիշողությամբ նկարագրել այն:

— Ուսանողին առաջարկել, վոր նա փակ աչքերով, իր շոշափելիքի սկնությամբ, ստուգի առարկաների մի վորոշ դասավորություն, և կամ նրանից գաղտնի փոփոխության յենթարկելով հիշյալ դասավորությունը, խնդրել, վոր նա հիշողությամբ վերականգնի տվյալ առարկաների նախնական ճիշտ դասավորությունը:

— Ուսանողին առաջարկել, վոր նա ուշադրությամբ դնենի իր ընկերների ձեռքերը, զգեստներն ու զեմքերը և ապա խընդրել, վոր նա փակ աչքերով շոշափի ու վորոշի, թե ում ձեռքերը, զգեստն ու զեմքն և շոշափում:

#### Պարապմունք 3-րդ:

— Ուսանողի մասնակցությամբ վորեն իր պահել ու ապա նրա աչքերը փակելով առաջարկել, վոր նա շոշափելով դանի այն:

— Ուսանողի մասնակցությամբ մի պարան զցել հատակին և ապա նրա աչքերը փակելով առաջարկել, վոր նա առանց պարանից շեղվելու անցնի նրա վրայավ.

— Ուսանողին նախապես ցույց տալ մի շաբթ առարկաներ և ապա նրա աչքերը փակելով, առաջարկել, վոր նա շոշափելով՝ վորոշի տվյալ առարկաների շափերն ու ձևերը:

#### 4. ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ, ԿԱՊՎԱԾ ՑԱՇԱԿՈՂԱԿԱՆ ՈՒ ՀՈՏԱՌՈՂԱԿԱՆ ՎԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

##### Պարապմօնիք 1-ին:

— Ուսանողի աչքերը փակել և առաջարկել, վոր նա հոգառությամբ վորոշի զանազան առարկաներ:

— Ուսանողին առաջարկել վորապես վի նա տարբեր հոգ ունեցող ուսելիքներ մտարելի:

##### Պարապմօնիք 2-րդ:

— Ուսանողի աչքերը փակել ու առաջարկել, վոր նա ճաշակելով վորոշի զանազան առարկաներ:

— Ուսանողին առաջարկել վոր նա տարբեր համ ունեցող պտուղներ մտարելի:

#### 5. ՀԱՆՐԱՑԻՆ ՄԵՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

Դերասանն իր ուշադրությունն ու կամքը պետք և այնպես մարզի, վոր անհրաժեշտության դեպքում կարողանա կարվել իր շրջապատից ու կենացրոնանալ իրեն առաջարկվող խնդիրների վրա: ա: Լազարան ուսադրության կենացրոնացում զանազան խանգարիչ պայմաններում:

##### Պարապմօնիք 1-ին:

— Առաջարկել ուսանողին, վոր նա թեթև ու անհամաշտի աղմուկի կամ նվազի տակ կարդա մի վորեն պատմվածք և ապա՝ աղմուկն ընդհատելով, խնդրել, վոր նա մանրամասն պատմի իր կարգոցածի բովանդակությունն ու ասի նրա գործող անձանց անունները:

— Առաջարկել ուսանողին, վոր մի քանի հոգու բարձրաձայն ընթերցանության ժամանակ մի փոքրիկ նամակ գրի ու ապա՝ աղմուկը դադարեցնելով, խնդրել, վոր նա կարդա իր գրած նամակը:

— Առաջարկել ուսանողին, վոր մի քանի հոգու բարձրաձայն ընթերցանության ժամանակ լսի նրանցից մեկն ու մեկի կարգացածն ու ապա պատմի:

— Առաջարկելու ուստանողին, վոր նա թեթև և ուժեղ աղմու-  
կի տակ ճիշտ հաշվի նրան տված լուցկիները, հողինի մի վարեկ  
պատմվածք, կամ լուծի թվաբանական մի խնդիր:

— Առաջարկելու ուստանողին, վոր նա միաժամանակ լսի յեր-  
կու բարձրաձայն ընթերցողի և հետո խնդրել, վոր ընդհանուր  
գծերով պատմի թե մեկի և թե մյուսի կարդացածը:

բ. Տեսօղական ուսագրաւրյան կենցրանացում զանազան խան-  
գարիչ պայմաններում:

Պարագմունֆ 1-ին:

— Առաջարկելու ուստանողին, վոր նա զանազան աղմուկների  
տակ ուշադրությունը կենտրոնացնի վորեւ որյեկտի վրա և խընդ-  
րել վոր աղմուկը զագարելուց հետո մանրամասն նկարագրի այս:

— Ուստանողին տալ յերկու տարրեր նկարներ և հաճախակի  
նրա ձեռքից վերցնելով մերթ մնկը, մերթ մյուսը, խնդրել, վոր  
նա զեթ ընդհանուր գծերով նկարագրի իր տեսած նկարների բո-  
վանդակությունը:

Առաջարկելու ուստանողին, վոր նա յերգելով զննի վորեւ նկար  
ու հետո պատմի այդ նկարի բովանդակությունը:

## 6. ԶԱՓԻ ԶԳԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

Զափի զգացումը մարզելու և միշտ արթուն պահելու համար  
անհրաժեշտ ե, վոր զերասանը շարունակ իր պահանջ  
զանազան ամիսների գործուղություններ կատարի: Ամիսների գոր-  
ծողություններ կոչվում են այն գործողությունները, վարոնք կա-  
տարվում են վոչ թե իսկական, այլ յերեսակայական կամ յենթա-  
դրական առարկաներով:

### ՈՐԲԻՆԱԿ՝

- ըմացք անել (առանց ջրի, սճառի և սպիտակեղենի).
- ծխախոտ վառել ու ծխել.
- կոճակ կարել.
- զգեստները հանել ու լողանալ.
- խմոր հունցել.
- ձուկ վորսալ.
- ճանճ բռնել.
- պարանով նավակ քաշել.
- փայտ բերել ջարպել ու վառարանը վառել.
- ժամացույց լարել.
- սափրվել ու լվացվել.

- ինքնայեսը բերեց թեյ լցնել ու խմել.
- լապտեր վառել.
- լուսանկարել.
- դիրք կարդալ ու նշումներ անել.
- ճաշել.
- ձվածիղ պատրաստել և այլն:

## 7. ԻՆՉՊԵՍ ԶԱՐԴԱՑՆԵԼ ՅԵԲԵՎԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Դերասանն իր յերևակայությունը պետք է այն աստիճան-մարզի, վոր կյանքն ընդուրինակելու փոխարեն կարողանա իր վառ յերևակայության շնորհիվ ստեղծել նույաբանման ու նույաբանկան նորը:

### Պարագմանք 1-ին:

Առաջարկել ուսանողին 5-ից մինչև 1 րոպեյի ընթացքում հորինել վորեն պատմություն կամ յերագ:

— Առաջարկել ուսանողներից մեկին սկսել վորեն պատմություն և ապա խնդրել, վոր մյուսները հերթով շարունակեն:

Առաջարկել ուսանողներին վորոց քանակությամբ պատկերով բառեր (որինակ՝ վրեժ, ջրվեժ, ժանդ, թույն, պարտեզ, ժողով, խինդ, լռուին, դաշույն, զիշեր, արշալույս, սարսափ և այլն) և խնդրել, վոր նրանք 5 րոպեյի ընթացքում մի վորեն պատմություն հորինեն այդ բառերից բղիստ պատկերների շուրջը:

— Մեխանիկորեն վերցնել վորեն ոիթմ ու ապա արդարացնել այն:

— Վերցնել վորեն դրություն և ապա հիշել, թե ուրիշ ինչ պեղքերում մարդ կարող է նման դրության մեջ գտնվել:

— Ուսանողներից մեկին կանգնեցնել դեմքով դեպի լուսամուռ և խնդրել, վոր նա մի վորեն բան նկարագրի, վորպիսինիրը թե տեսնում և լուսամուռից:

### Պարագմանք 2-րդ:

Ուսանողին առաջարկել, վորպեսզի նա միմնույն առարկաները զանազան պայմաններում զանազան կերպ ուղարկործի:

### Որինակ՝

#### Զեռնափայլ և զիլսարկ:

— Զեռնափայլը սրի, իսկ զիլսարկը վահանի տեղ ընդունելով մնամարտի:

— Զեռնափայլը կարթի, իսկ զիլսարկն ամանի տեղ դնելով ձուկ վորսա:

— Դլխարկից ու ձեռնափայտից դեկ շինել ու ավտո քէի  
— Ժոնդոյորություն ու զանազան կրկեսային համարներ  
գրատարել, և այլն:

Պարապմօւնիք 3-րդ:

Առաջարկել ուսանողին վոր նա նկարագրի՝

— Շմիդտի ճամբարը,

— ապագաս պատերազմը,

— վոր իրր թե նա, Մոսկվայում, մայիսմենյան տոնին տեսել և ընկ. Ստալինին, Վորոշիլովին կամ Միկոյանին:

Պարապմօւնիք 4-րդ:

— Առաջարկել ուսանողին այս կամ այն առարկայի վրա նշված կետի կամ քերվածքի շուրջը վորեն արգարացաւցիչ պատմությունն հորիներ:

— Ուսանողների մի մասը, համաձայն արված նշանի, վորեն ազատ գիրք և ընդունում, իսկ մյուս մասն անմիջապես համապատասխան դիրք ընդունելով, պետք և արդարացնի առաջինների բռնած դիրքը:

Որինակ՝

ուսանողներից մեկը մուրացկանի դիրք և ընդունում, իսկ մյուսն իրեն անցորդ ձեւացնելով, զբամ և տալիս նրան:

#### 8. ՌԻԹՄԻ ՄԱՐԶԱԿՆԵՐ

Ուսանողին առաջարկել այնպիսի գործողություններ, վորոնց ընթացքում տեղի յին ունենում զանազան վիճակների ու աշխատքությունների փոփոխություններ:

Որինակ՝

— Սուրենը սենյակում հանգիստ նստած դռու և պատրաստում, հանկարծ հարևան սենյակից լսվում են տարբանակի ուժեղ կրակոցներ:

— Սաթիկը վիրաբուժի նախասենյակում ոպտումն իր յեղաքար վիրահատությանը. պարզվում ե, վոր վիրահատությունն անցել և նաջող ե, ընդհակառակը:

— Լեվոնը շատ ուրախ զալիս և կայարան, բայց կայարանապետից իմանում ե, վոր զնացքն արդեն մեկնել ե:

— Վաչիկը գիրք կարդալիս ննջում ե, հանկարծ կարիճը խայթում և նրա վասը:

— Ալիկը հեիւն զնում ե գլորոց, կարծելով, թե զանից աշացել ե, բայց պարզվում ե, վոր զանգը գեռ չի արված. և, ընդհակառակը.

— Նազիկը փայլուն թվանշաններով վոգեվորված տուն եղաւիս. հանկարծ նկատում ե, վոր իր իրերի արկղը գողացված ե, առկայն, մի փոքր անց պարզվում ե, վոր իր ընկերուհիները կառակել են և այս:

### 9. ՎԵՐԱԲԵՐՄՇՈՒԽՆՔԻ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

ա. Գնահատել առարկան ու յերեսույթը, արտահայտելով դեպքի նա դրական կամ բացասական վերաբերմունք:

Պարապմունք 1-ին:

Տեսողական-դրական:

- Դիտել արշալույս կամ վերջալույս:
- Դիտել սավառնակի խիզախ թռիչքն ու պառույտները:
- Նայել զեղեցիկ շենք կամ արձան:
- Սատնալ փառավոր կազմով պատվո գիր:
- Դիտել շատ հաճելի կինո-նկար:

Պարապմունք 2-րդի:

Տեսողական-բացասական,

- Նայել արամզայի տակ ջարդված մարդու:
- Սատնալ աշխատանքից արձակման թուղթ:
- Դարտկը մաքրելիս նկատել վոր ձեր զբաները գողացված:
- Նայել անհանո՛ ներկայացում:
- Դիտել անհաջող լուսանկար:

Պարապմունք 3-րդի:

Լսողական-դրական.

- Լսել թռչունների քաղցր ծըլվոց:
- Լսել ավտոյի ձայն, յերը անհամբեր սպասում եք նրան:
- Լսել ձեզ մոտ յեկող բարեկամի վստնաձայնը:
- Լսել նախորոք պայմանավորված տոկոտամբության աղդանշանը, վորին դուք անհամբեր սպասում եք:
- Լսել գուշակ ջրի սփոփիչ կարկաչը:

Պարապմունք 4-րդի:

Լսողական-բացասական.

- Լսել դայլի վոռնոց:
- Լսել վատ ռազիո-հազորդում կամ անհանո՛ սուլցներ:
- Լսել, թե ինչպիս մեկը զարհութելի զրապարտություններ ե անում ձեր ընկերոջ հասցեյին:
- Դուք պատրաստվում եք զբոսանքի, հանկարծ լուսամուտից լսվում ե անձրևախտն քամու ձայն:

— Բանտի նկուղում նստած ժամանակ լսվում և դեպի ձեզ  
մտեցող դահճի վասնաձևնը:

Պարապմունք 5-րդ:

Շոշափողական-դրական.

- Հավաքել ծովափնյա հղկված քարեր ու խիռունջներ:
- Շոյել կատվիկի փափուկ մորթը:
- Շփել թավիշ, մարմար-կամ հայելի:
- Շոյել հարազատ յերեխայի գանգուր մազերը:
- Շոգ ժամանակ սառը ջրով շփել մորմինը:

Պարապմունք 6-րդ:

Շոշափողական-բացասական.

- Վարդ պոկելիս փշերով վիրավորվել:
- Պատահմամբ հազնել կեղտոտ մարդու սպիտակեղեն:
- Մխալմամբ վերցնել տաք հարթուկ, յենթաղրելով, վոր  
սառն եւ:
- Մութ սենյակում լուցկի վորոնելիս, պատահմամբ ձեռքը  
զնել սեղանի վրա թափված թանաքի մեջ:
- Մերկ ձեռքով ոձ կամ գորտ բռնել:

Պարապմունք 7-րդ:

Ճաշակողական-դրական.

- Շոգ ժամանակ սառը ջուր խմել:
- Հյուրասիրվել անուշ խմիչքով:
- Ուտել շատ համեղ թխվածք:
- Շոգ ժամանակ պաղպաղակ ուտել:
- Ուտել քաղցր ձմեռուկ:
- Պարապմունք 8-րդ:

Ճաշակողական-բացասական.

- Պատահմամբ ուտել փչացած կաղին կամ ընկույզ:
- Խմել ձկան յուղ կամ լուծողական:
- Ուտել աղ չարած կերակուր:
- Խմել թեյ, վօրի մեջ շաքարի փրխարեն սխալմամբ աղ

և լցված:

- Ուտել դառը վարունգ:

Պարապմունք 9-րդ:

Հոտառղական-դրական.

- Շնչել հոտավետ ծաղիկների բուրմուճք:
- Սոված ժամանակ խորովածի հոտ առներ:
- Զգալ անուշահոտ թխվածքի կամ նոր թխված հացի հոտ:

— Հանկագազը հանելուց հետո լիաթոք շնչել

— Սենյակում ջամամի հոտ առնել

Պարապմունք 10-րդ:

Հոտառողական-բացասական:

— Կոտրել փշացած ձուլ

— Բանդել հոպոպի ըռւն:

— Մանել մի տեղ, ուր գրված և նեխած դիակ:

— Խոսել սխտոր կերած մարդու հետ:

— Նստել հարբած մարդու կողքին:

բ. Նախնական պայմանը վոխելով, դրական վերաբերմունքը

կարող և զառնալ բացասական և ընդհակառակը:

Պարապմունք 11-րդ:

Տիտղական:

— Կարգալ մտերիմ բարեկամի նամակը.

Քարեկամը գարձնել վախերիմ թշնամի:

— Հանդիպել կեղտոտու ու չափրված անծանոթի.

անծանոթը գարձնել հարազատ:

— Գտնել հարյուր ռուրիփ.

Դաշնակը գարձնել կորցնել:

— Մանել մաքուր և արեստ սենյակ.

մաքուր ու արեստը գարձնել կեղտոտու ու մասյլ:

Պարապմունք 12-րդ:

Լուղական:

— Անսառում մոլորված ժամանակ լսել ընկերների ձայնը.

Ընկերներին գարձնել զաղաններ:

— Լսել հաճելի յերաժշտություն.

Հաճելին գարձնել տնհաճու:

— Լսել շատ ախորժելի լուր.

ախորժելին գարձնել անսախորժ:

— Լսել հեղափոխական հուզիչ ճառ.

Հեղափոխականը գարձնել հականեղափոխական:

Պարապմունք 13-րդ:

Եղափողական:

— Ամռանն ընդունել զով գուշ.

ամռաը գարձնել ձմեռ.

— Զմռանը հագնել տաք մուշտակ.

ձմռաը գարձնել ամռա:

— Շիել թավիշ.

Քաղիշը դարձնել թաղիք:

— Սուր ածելիով սափրվել.

սուրը դարձնել բռւթ:

— Ցրտին վառարան վառել.

ցուրտը դարձնել շոգ:

Պարապմունք 14-րդ:

Ճաշակողական

— Ուտել հասած խաղող.

Հասածը դարձնել խակ:

— Ուտել յեփած զետնախնձոր.

յեփածը դարձնել հում:

— Ուտել շաքարով մածուն.

շաքարը դարձնել խինին:

— Ուտել թարմ կարագ.

Թարմը դարձնել կծված.

Պարապմունք 15-րդ:

Հոտառողական:

— Ծնչել վարդի բուրմունք.

Վարդը դարձնել հոտած ձու:

— Դաշտում շնչել մաքուր ող.

Դաշտը դարձնել ծիարան:

— Միսել բարձրորակ ծիախոտ.

Բարձրորակը դարձնել վատորակ:

Պարապմունք 16-րդ:

— Ուսանողներից մեկին հերոսի տեղ դնել.

Հերոսին դարձնել մատնիչ:

մատնիչին դարձնել ծանր ատլետիկայի չեմպյոն.

Չեմպյոնին դարձնել սուր վարակիչ հիվանդ.

հիվանդին դարձնել վտանգավոր խելագար.

Խելագարին դարձնել թշվառ մարդ կամ վորք յերեխա:

Եերարերմունքի շբաղակված կամ բաց ձև:

Պարապմունք 17-րդ:

— Ծնորհավորել ընկերոջը՝ նրա հաջող յելույթի համար:

— Դժողովություն հայտնել վատ ներկայացման առթիվ:

— Դեմոնստրատիվ հետանալ ձեզ զուր չեկող ժողովից:

— Գոհանակությամբ ընդունել ձեզ արվող նվերը:

— Նախատել ընկերոջը նրա տղեղ վերաբերմունքի համար:

Վերաբերմունքի բաղարկված կամ փակ ձև:

### Պարապմունք 18-րդ:

- Անկոչ հյուրին սիրալիրությամբ հասկացնել, վոր շատ դժգոհ էք նրա այցելությունից:
- Մեկին ատել բայց ձևացնել, թե սիրում եք:
- Մեկին դիմ մինել բայց ցույց տալ, վոր թեր էք քվեարելում:
- Ռոճիկից զգան լինել, բայց ձևացնել, թե իրը շատ գոհ եք:
- Հյուրասիրվել վատորակ ծխախոտով, բայց անհարմարությունից ստիպված ձևացնել երբ թե շատ հաճելի յե ծխվում:

### 10. ՓՈԽԱԴԱՐՁՆ ՆԵՐԳԻՆ ՇՓՄԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

Ուսանողներին առաջարկել այնպիսի գործողություններ կատարել, վորոեղ մասնակցելիս լինեն յերկու և ավելի գործող անձերու Որբնակ՝

- Վաղեմի ընկերների հանդիպում:
- Ճաշարանում մատուցողին ընթրիք պատվիրել ուստեւ, վճարել և գնալ:
- Ցերկու հոգի հայացքներով իրար հասկացնում են, վոր ներկա գոնվող յերրորդը լրտես եւ:
- Մեկը խռուճապով բաղխում ե զուռը, իսկ մյուսը գուռը շրանալով, ներսից հարց ու փորձ ե անում զուռը բաղխողին:
- Քաղը անտարկյալն իր սենյակից հայտնում ե հարեվան սենյակում նստած ընկերոջը, վոր միապետությունն արդեն տապալվել եւ:

### 11. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԵՏ ԹԵԹԵՎՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՄԱՔՐՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՎԵԼՈՒ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

- Ուսանողին տալ զանազան որյեկաներ և առաջարկելու վոր ուշագրությունը կենարոնացնի նրանց վրա:
- Ուսանողին տալ զանազան ֆիդիկական որյեկաներ և առաջարկել, վոր նա առանց ավելորդ շարժումներ անելու, այդ որյեկանները մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրի:
- Ուսանողին առաջարկել, վոր նա մի շարք առարկաների միջից, առանց նրանց դիպչելու, արագությամբ անցնի:
- Ուսանողին առաջարկել, վոր նա զանազան կրկիսային համարներ կտարի:

## 12. ՄԿԱՆԱՑԻՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐ

Մկանացին լարվածության գեմ կովելու և բեմական անհրաժեշտ ազատություն ձեռք բերելու համար պետք է ռաւանողին միշտ հասարակ ու պարզ ֆիզիկական գործողություններ տալ և հետեւ, վոր նա այդ գործողությունները կատարի՝

ա. իր «ԵԽԱ»-ից յելնելով, ու

բ. ավյալ պայմանների համաձայն մկանացին նամապատճառին եներդիա ծախսելով։

- Առանձացավով տառապել,
  - Սանատորական «մեռյալ ժամ» անցկացնել,
  - Սպիտակեղենն հարթութիւր,
  - Զմերդուկ ջոկել, կտրել և ուտել,
  - Ամաններ լվանալ ու սրբել,
  - Կոշիկներ ու դգեստներ մաքրել,
  - Բուժիչ կաթիլներ ընդունել,
  - Խաղող ուտել և ձեռքերը սրբել,
  - Պազպազակ ուտել և ապա ստոք ջուր խմել,
  - Սանրվել ու յերեսը շաղարել,
  - Տանկական սուրբ խմել ու ծխախոտ ծխել,
  - Ողի խմել ու նախաճաշել,
  - Նամակ գրել ու ծրաբել,
  - Մատիտ սրել ու նկարել,
  - Ածելի սրել ու ստիրել,
  - Պատին մեխ խփել ու նկար կախել,
  - Առաջին նշանով մի վորնե դիրք ընդունել, յերկրորդ նշանով արդարացնել ընդունած դիրքը։
- Հիշյալ նպատակի համար, վորպիս մարզանքներ, ցանկացնել վերցնել նաև զանազան աշխատանքային պրոցեսներ։
- Որինակ՝**
- հյումնություն,
  - կոշկակարություն,
  - վորմաղրություն,
  - ձկնորսություն,
  - դերձակություն,
  - քարտաշություն,
  - պրաշարություն, և այլն, և այլն։



**ԱՄՓՈՓՈՒՄ**



Արտանով հիմնականում վերջանում եւ դերասանական արվեստի հիմունքների, բեմական գիտելիքների և անհրաժեշտ մարդանքների նախնական շըջանը:

Պետք եւ հիշել միայն՝

1. Վոր արվեստը, ինչպես և բոլոր գիտությունները, պարտավոր եւ վոչ միայն կյանքը նանաչել և բացառել, այլ և վերափոխել այն:
2. Վոր արվեստի սոցիալական արժեքը կայանում եւ նրանում, վոր նա ակտիվ կերպով ներգործելով մարդկանց մտքերի ու զգացմունքների վրա՝ կազմակերպում եւ նրանց գիտակցությունն ու նոգերանուրբաթը և հիմունքն վերափոխում եւ նրանց՝ դեպի միջավայրի յերևույթներն ունեցած վերաբերմունքը:
3. Վոր դասակարգային հասարակության մեջ՝ արվեստը նույնպես դասակարգային բնույթ ունի և դասակարգային պայքարի հուժկու զենքերից մեկն եւ հանդիսանում:
4. Վոր արվեստը գիտությունից տարբերվում եւ նրանով, վոր արվեստագետը չկտրվելով դատողությունից, իր ստեղծագործության արդյունքը առավելապես ձևակերպում ու արտահայտում եւ գեղարվեստական գգայական պատկեներով:
5. Վոր թատերական արվեստի ստեղծագործության նյուրը հանդիսանում եւ որյեկտիվ իրականությունը, վորը գրամատուրգիական յերկի ձևով մտնում եւ թատրոն և դերերի ձևով բաշխվում գերակատարների մեջ:
6. Վոր գերասաննի ստեղծագործության գարծիքը կամ միջոցը հանդիսանում եւ հենց ինքը գերասանը:

7. Վոր գերասանական արվեստը մյուս բոլոր արվեստներից հիմնականում տարրերվում են նրանով, վոր գերասանն իր ստեղծագործության անհատը, շինանյութն ու դործիքը լինելուց զատ, վորպես լիարժեք կենդանի մարդ միաժամանակ հանդիսանում են նաև իր ստեղծագործության գեղարվեստական արդյունքի նյութականացման ձեռք
8. Վոր ընդունակություն սովորել չի կարելի, այլ պետք է ունենալ այն
9. Վոր արժեքավոր խորհրդային գերասան լինելու համար անհրաժեշտ են ունենալ նախ ընդունակություն, ապա ձեռք բերել վարպետություն և պրոլետարական կայուն աշխարհայացք:
10. Վոր թատերական դպրոցը կարող է միայն մարզել . իր ուսանողների անհատական ավալներն ու նրանց համապատասխան կուլտուրա տար:
11. Վոր գերասան-գործիքի ամենահիմնական հատկությունն այն է, վոր նա պետք է կարողանա կենդանի ու համար զիչ գործողություն կատարել:
12. Վոր յուրաքանչյուր հասարակ ու պարզ կենդանի դորժողություն կատարելու համար դերասանը պետք է ունենա:
- a) կենցրոնացած ուսադրություն,
- բ) ճիշտ որյեկտ,
- գ) որյեկտիվ շափի զգացում,
13. Վոր առանց գերասանի թատրոնը նույնքան անիմաստ է, վորքան և առանց թատրոնի՝ գերասանը:
14. Վոր գերասանը բեմական արվեստում միայն այն ժամանակ է զլիսավոր տարը հանդիսանում, յերբ նա իր վարպետությունը ծառայեցնում է իր բեմական տիպերը ճիշտ դրսնորելու համար:

15. Վոր գործադությունը մշտպմում և ընմական արվեստի շունչը:
16. Վոր ուշադրությունը հանդիսանում է՝ յուրաքանչյուր հասարակ գործողության ավյալ մոմենտին կլանում ու զբաղեցնում և գերասանի քենական ուշադրությունը, կոչվում է որբեկու:
17. Վոր թատերական արվեստամ այն ամենը, ինչ վոր գործողության ավյալ մոմենտին կլանում ու զբաղեցնում և գերասանի քենական ուշադրությունը, կոչվում է որբեկու:
18. Վոր չափից ավելի զարգացած՝ չափի զգացումը դերասանի համար նույնըան վնասակար և, վորքան և թույլ կամ բոլորամբն չզարգացածը:
19. Վոր գերասանի կենտրոնացած ուշադրության բացակայության զեպքում գործողությունը կրում և մեխանիկական բնույթ, ճիշտ որյեկտի բացակայության զեպքում՝ անխմտսա բնույթ, իսկ որյեկտիվ չափի զգացման բացակայության զեպքում՝ բռնազրոսիկ բնույթ:
20. Վոր մարդկանց մեջ ճիշտ որիթմ ծնվում և զբությունների ճիշտ գնահատումից:
21. Վոր գանել գերի սիթմը, այդ նշանակում և խորապես զգալ նրա ներաշխարհը և ձեռք բերել նրա ճիշտ կատարման ու զբուրման բանալին:
22. Վոր վերաբերմունք ունենալ, նշանակում և ըստ եյության ճիշտ դնահատել դրությունն ու գիտենալ, թե ավյալ պայմաններում ինչպիսի հասարակ ու պարզ գործողություն պետք և կատարել:
23. Վոր վերաբերմունք չունենալը նույնպես մի վերաբերմունք եւ:
24. Վոր փոխադարձ ներքին շփումը միայն այն զեպքում և կենդանի և համոզիչ, յերբ մարդիք մտքերը, զգացմունքներն ու արարքները մի ուրիշին ուղղելով, հետևում եւ,

վոր նա ընդունի և տպա, նըանից վորեն պատասխան ստանալով, գնահատում ու արտահայտում ե իր վերաբեմունքը:

**25.** Վոր գերասանական վարպետություն ունենալ, նշանակում ե բնմի վրա կարողանալ շփվել խաղընկերների հետ:

**26.** Վոր բնմում առարկաների հետ գործ ունենալ, նշանակում ե գործողության ավլալ պայմաններում ճիշտ ըմբռնել նրանց ֆունկցիօնալ նշանակությունը:

**27.** Վոր բնմական արվեստում գոյտթյուն ունեն առարկաների ոգուազործման չորս հիմնական տեսակներ՝

- ա) աղդակի,
- բ) անուղղակի,
- գ) վարպես սիմվոլ,
- դ) վարպես արտադրուրյան արտանայտաղ միջաց:

**28.** Վոր բնմական կամ դերասանական խնդիրը բազկացած է յերեք անբաժանելի առարելիքներից.

- ա) ակտիվ ցանկուրյուն,
- բ) ֆիզիկական գործողուրյուն,
- գ) գործողության կատարման յիղամակ և գույն:

**29.** Վոր բնմական կամ դերասանական խնդիրը գերասանի համար հանդիսանում ե նրա սահղծագործական ուշադրության ամենահիմնական որյեկտը:

**30.** Վոր գերասանական խնդիրը չի կարելի շփոթել դպացունքի և գործողության կտարման յեղանակի կամ գույնի հետ:

**31.** Վոր զգացմունքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ անհատի բավարարված կամ չբավարարված կամքի արդյունք, նրացանկությունների դրական կամ բացասական յելքեր հետևոնք:

- 32. Վոր ստեղծագործական պրոցեսի բոլոր հիմնական տարրերը պայմանավորված են իրարով և հետևողական կերպով բղուում են իրարից։  
Որինակ՝
- ներքին շփումը՝ վերաբերմանից,
  - զրաբերմանը՝ ոիրմից,
  - ոիթմը՝ դրաւրյան գնանաւումից,
  - գնահատումը՝ ուսադրուրյութից, որյեկտից & չափի գուցաւմից։
- 33. Վոր կենտրոնացած ուշադրությունը, ճիշճ որյեկտը և որյեկտիվ չափի զգացումը կազմում են դերասանական վարպետության այն յերեք նախնական տարրերը, զորոնց ողնությամբ միայն դերասանը կարող է կատարել իր բնմական գործողությունները։
- 34. Վոր հասարակ ու պարզ գործողության յերեք նախնական տարրերը խախտվելու գեղքում գերասանն անխռուսափերնեն սկսում ե տարապել մկանային լարվածության կլասիկ յերեք տեսակներով։  
ա. առ ո ն ի ա ր (անլարվածություն),  
բ. մ ի պ ե ր ր ո ն ի ա ր (գերլարվածություն),  
գ. ավ ս ի խ ս պ ա տ ս ի ա ր։
- 35. Վոր մկանային ավելացդ լարվածությունը դերասանի համար նույնքան վնասակար ե, վորքան և մկանային լիակատաց ազատությունը։
-



# III

## ԵՐԵԱՆ



I

ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ  
ՄԵԹՈԴ



## Ա Մ Ե Թ Ո Դ

1. Ամենից առաջ պետք և իմանալ, վոր արվեստի ասպարիզում ոտեղծագործուկան մերոդը չի կարելի շփոթել ու նույնացնել նյութի մշակման համար գործածվող զանազան պրիոնների ու ու միջոցների հետ:

Այս վերջիններն ունեն տեխնիկական բնույթ և կիրառվում են միայն նյութի տեխնիկական մշակման բնագավառում:

Ճիշտ և տեխնիկական պրիոնների ընտրությունն ու նրանց սպառագործումը ուվայալ ստեղծագործության մեջ տմբողջապես պայմանավորված և և բղխում և արվեստագետի ստեղծագործուկան մեթոդից, սակայն այդ ընալի չի նշանակում, վոր ստեղծագործուկան մեթոդն ու նյութի մշակման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցները միևնույն բաներն են:

Սոցիալիստական ռեալիզմի արվեստի մեջ մեթոդը նույնառում ու միասնառում և աշխարհայացքին:

Արվեստագետի ոտեղծագործական մերօդը խորապես պայմանավորված և նրա աշխարհայացքով և բղխում և նրանից:

Զատել արվեստագետի մեթոդը նրա աշխարհայացքից, դա նշանակում և մեխանիկական կոպիտ սիսալ կատարելու:

Ստեղծագործական մեթոդը—զա արվեստագետի այն սկզբ-ը ունեցային մատեցուների ընդհանրարյունն և, վորով նա ճանաչում, բացատրում ու արժեքագորում և կյանքի յերևույթները:

Թե արվեստագետն ինչպես և ճանաչում կյանքի յերևույթները, դասակարգային պայքարի վերքերից և նա գիտում այլպիսիները և իր ստեղծագործության մեջ այդ ամենի առթիվ ինչպիսի վերաբերմունք և հանդես բերում, —ահա հենց այդ ել կազմում և ուվայալ արվեստագետի ստեղծագործական մեթոդը:

Ինքնին հասկանալի յե, վոր դասակարգային հասարակության մեջ արվեստագետի ստեղծագործական մեթոդն ունի դասակարգային բնույթ և կարևոր դեր և խաղում գործադրախոսական պայքարի մեջ:

Այստեղից ել բղխում ե այն, վոր խորհրդային դերասանի համար սոցիալիստական ռիալիզմի մեթոդի ճիշտ ըմբռնումն ու կիրառումը կազմում ե նրա ստեղծագործության ամենակարևոր ու վորոշիչ ողակներից մեկը:

Սոցիալիստական ռեալիզմի դիրքերում կանգնած արվեստագետը պետք է կյանքը դիտի ու ճանաչի նրա համընթաց շարժման ու զարգացման մեջ:

Նա մեր ամենորյա պրակտիկայի մեջ պետք է ձգտի տեսնել մեր հերոսական պայքարի ու սոցիալիստական ճշմարտության հիմքերն ու մեր ել ավելի յերջանիկ տպադայի կոնկրետ պատկերը:

Սոցիալիստական մեթոդը արվեստագետից պահանջում է, վոր նա վոչ թե մանրամասն արձանագրի կյանքի այս կամ այն յերեսույթի մակերեսը, այլ վոր նա խորանալով այդ յերեսույթների հանդիպ, ընդհանրացումներ անի և արտահայտի նրա խսկական եյությունն ու զարգացման ներանկարը:

Բացի այդ, սոցիալիստական ռեալիզմի մեթոդով ստեղծագործող արվեստագետը վոչ մի դեպքում չպետք է սվաղի իր գառակարգային վերաբերմունքը կյանքի յերեսույթների հանդիպ:

Նա իր վերաբերմունքի մեջ կառակցականություն դնելով, պետք է ցույց տա իր դասակարգային համակրանքն ու հակակրանքը:

Այսուհետեւ նա կյանքի յերեսույթներն իրարից չկտրելով, պետք է խուսափի նրանց աղավաղելուց, այսինքն՝

—յերը արվեստագետը տվյալ յերեսույթի մեջ միայն նրա աննշան բացասական կողմերը տեսնելով, սկսում է այդ տարրերը չարամոռեն խտացնել ու ջանում ե ամեն ինչ բացասական գույներով ներկայացնել:

Ցեղ ընդհակառակը՝

յերը արվեստագետը տվյալ յերեսույթի բացասական կողմերն սկսում է դիտավորյալ կերպով սվաղել ու ամեն ինչ փայլուն տեսնելով՝ ձգուում է կյանքը չափից ավելի գեղեցկացնել ու վուկեղուծել այն:

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդը կյանքի յերեսույթները պետք է ընդունի կամ ժխտի վոչ թե յենելով այս կամ այն տառանձին վերցրած անհատի սուրյեկտիվ ցանկությունից ու պահանջից, այլ հաշվի առնելով մեր ամբողջ իրական կյանքը, պետք է յենի նրա զարգացման պրոցեսի որյեկտիվ ընթացքից:

Նա մեր այսորը պետք է դիտի յերեկվա ու վաղվա մեջ՝  
մեր վաղը պետք և բղխեցնի այսորից և մեր յերշանիկ այսորվա  
մեջ պետք է տեսնի մեր ավելի պայծառ ապագան:

Նշանակում և սոցիալիստական ռեալիզմը վորակ սանդա-  
դութական մեթոդ, խորհրդային գերասանից պահանջում է, վոր նա-  
տ. կյանքը դիտի և ճանաչի նրա համընթաց շարժման ու  
զարգացման մեջ.

բ. իր բնմական տիպերն ուսումնասիրելիս ու կերտելիս չկտրի-  
նրանց պատմական կոնկրետ միջավայրից.

գ. իր բնմական տիպերը կառուցելիս անհրաժեշտ ընդհան-  
րացումներ անի և իր ստեղծագործական շեշտը նրանց ընորոշ և  
տիպիկ կողմերի վրա դնելով, ճիշտ դրսեորի նրանց սոց-դասա-  
կարգային եյությունն ու զարգացման տեսնքնեցը.

դ. իր բնմական տիպերը չպրկի անհատականությունից ու  
մարդկային ինդիվիդուալ գծերից.

ե. իր ստեղծագործության մեջ կուսակցականությունների  
և իր կերտած բնմական տիպերի հանդեպ չքողարկի: իր դասա-  
կարգային սերն ու տաելությունը.

զ. խուսափի իր բնմական տիպերը վսուելելուց ու նրանց  
մեջ միայն բացասական կողմերը խառացնելուց:

Կան մարդկի, վորոնք կարծում են, թե արվեստագիտը կա-  
րող է և վորոշակի մեթոդ չունենար

Դա, ինարկե, հնարավոր եւ

Սակայն ստեղծագործության պրոցեսում վորոշակի և հետե-  
գադական մեթոդ չունենալը կամ թե անմերօդուրյունը նման ար-  
վեստագիտների համար ինքնին մի. մեթոդ ե, վորը բացասական-  
հետեւնքներից բացի, վորներ զրական արդյունք տալ չի կարող:

## 2. ՎՈՃ

Վորպեսպի մեզ համար ել ավելի պարզ լինի սոցիալիստա-  
կան ռեալիզմի եյությունը, մենք պետք եւ անպայման հանգամա-  
նորեն ծանոթանանք նաև՝ թե ինչ բան և առհանարակ վօնը:

Վոճը — զա հաստրակական կյանքի զարգացման վորոշ աս-  
տիճանի վրա կանգնած այս կամ այն դասակարգի նյութական-  
ու. հոգեկան կեցության ընորոշ գծերի դրսեորման այն ընդհանուր-  
արտահայտությունն ե, վոր ցույց է տալիս տվյալ դասակարգի-  
մտածելակերպի, գործելակերպի և նրա նիստ ու կացի տիպիկ-  
ձևերը.

սրինառկ՝

— ուվյալ դաստիարագի սոցիալական իդեոլոգի և ձգտութեալիքի գըրսկորման յեղանակները,

— պայքարի արտահայտության առանձնահատուկ կողմերը.

— կենցաղի և շարժ ու ձեի բնորոշ գծերը, և այլն, և այլն Այս տեսակետից ել ահա միանգամայն սխալ ե, յերբ հաճախ էարծում են, թե արվեստի վոճը միայն ձևական հասկացողություն և և ուրիշ վոչինչ:

Սխալ ե, վորովհետեւ վոճը նախքան ձեւ լինելը, հանդիսանում և սոցիալ-դաստիարագային բովանդակություն այն չափով, վորչափով նա արտահայտում և բնորոշում և ավյալ դաստիարագի նյութական և հոգեկան կյանքի եյությունն ու պատկերը նույնը պետք և ասել նաև մեր բորհրդային արվեստի առաջատար վոճի՝ սոցիալիստական ռեալիզմի մասին,

Սոցիալիստական ռեալիզմը վոչ մի գեղգում չի կարելի և չպետք և հասկանալ վորպես կյանքի յերևույթների սոսկ ձևական նկարագրություն:

Սոցիալիստական ռեալիզմի վոճը, վորպես խորհրդային արվեստի առաջատար վոճ, պետք և արտահայտի մեր աշխատավորության պայքարի ներօսակամուրյաւմը, աշխատանքի տնձնվիրույթումն ու սոցիալիստական կյանքի լավատեսուրյաւմը,

### 3. ԲԵՄԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԻՊ

Գետք և իմանալ, վոր բեմական կենդանի կերպարներ (օբրաձ) ստեղծել — այդ բնավ չի նշանակում, վոր դերասանը պետք և լուսանկարչական ճշտությամբ ընդորինակի իրեն շրջապատում տեսած իր այս կամ այն ծանրթին: Դա կլինի բեմական ռաեղծագործության գոճնեկացում ու արվեստի պարզեցում:

Բեմական կերպարը պետք և ներկայացնի լիարժեք գեղարվեստական տիպ:

Դերասանը պետք և ըմբռնի, վոր բեմական գեղարվեստական տիպը վոչ թե այս կամ այն առանձին վերցրած անհատի հաջողված կամ անհաջող ընդորինակությունն ե, այլ վոր նա հանդիսանում և հասարակական վորոշ խավին պատկանող, միանման մտածող ու միանման վարք ու բնավորություն ունեցող մարդկանց բնորոշ գծերի ընդհանրացած արտահայտությունը:

Սակայն այդ միանման բնավորությունների ու ընորոշ

զծերի ընդհանրացումն ունի նաև իր վտանգը, վորովնեան չափից ավելի ընդհանրացած ու անհատականությունից զրկված տիպիկականացումը շատ շուտով կարող ե վերածվել վերացականությամբ:

Հետևաբար. Դերասանն իր բնմական կերպարներն ստեղծելիս պետք է իր ուշադրությունը բեկերի վոչ միայն նրանց ընդհանուր և տիպական կողմնորի, այլև նրանց անհատիկանությունների վրա Այլապես ինչիվեղուալ հոգերանությունից ու անհատականությունից զուրկ և չափից ավել ընդհանրացած բնմական կերպարը կղադարի կենդանի ու կանկրեատիպ լինելուց:

Բացի դրանից, պետք է ասել, վոր ամեն մի ընդհանրացած և ինդիվիդուալ հատկություններով սժտված բնմական տիպ գեռա և լիարժեք ստեղծագործություն չեւ:

Դերասանի կերտած բնմական տիպերը լրիվ արժեք են ներկայացնում միայն և միայն այն գեղքուամ, յերբ դերասանը՝ վորպես ովյալ դասակարգի արվեստագետ՝ այդ տիպերը անց ե կացնում իր դասակարգային զիտակցության բավիկ ու նրանց մեջ դնում է իր ստեղծագործական մտքերը, հույզերն ու վերաբերմունքը:

Այսուհետեւ, դերասանը պետք է իր մտահոգության առարկան դարձնի նաև այն խնդիրը, վոր իր ստեղծած բնմական կերպարները կտրված չլինեն պատմական կոնկրետ միջավայրից վորովինետեւ հաճախ գերասանի ստեղծած բնմական կերպարներն ընդհանուր ու անհատական գծեր ունենալով հանդերձ, այսուամենայնիվ հիմնականում կարող են տառապել պատմական անհարազարյամբ:

Ենք այսպես, բնմական գեղարվեստական տիպը, պատմական վորոշ շրջանի, հասարակական վորոշ խավին պատկանող, միանման մտածող և միանման վարք և ընավորություն ունեցող մարդկանց ընորոշ գծերի մի այնպիսի ընդհանրացած միասնություն եւ, վարն արվեստագետի սօցիալ-դասակարգային զիտակցության բավիկ տացնելով, ընդունում է իր կօնկեն և ինդիվիդուալ գծերով սժտված կենդանի մարդու ռեալ կերպարանը:

Ուրեմն, դերասանն իր բնմական գեղարվեստական տիպերը կերտելիս պետք է իմանա, վոր կյանքում չկա առհասարակ և վերացական մարդ, այլ կա միայն պատմական կոնկրետ միջավայրում ապրող ու զործող կոնկրետ մտածելակերպ ու հոգերանություն ունեցող կոնկրետ մարդ:

## 4. ՏԻՊԻԿԱՆԱՑՄԱՆ ՄԻԶՈՅԸ

Մենք արդեն ասացինք, վոր գերասանն իր բեմական կերպարները կերտելիս չպետք է նրանց զրկի մարդկային խնդիվիդուալ գենդանի զծերից և բնորոշ զնոտաներից:

Սակայն առացինք նաև, վոր նրանց այդ ինդիվիդուալ ու մասնավոր զծերի մեջ միաժամանակ պետք և արտահայտվեն նաև ովյալ կերպարների բնավորության ընդհանուր ու տիպիկ կողմերը:

Այժմ մենք պետք և փոքր ինչ հանգամանորեն կանգ առնենք և պարզենք, թե ինչ և նշանակում տիպիկ յերեսույթ կամ չիս: Տիպիկ կամ տիպական կարող և լինել ամեն միշերեսույթ, վորն ոժոված և միանման յերեսույթների ընդհանուր և բնորոշ կողմերով:

Սակայն վորպեսզի ավելի պարզ ու հասկանալի լինի, թե ինչ ասել և սոցիալական տիպ, մենք կփորձենք ավելի մանրամասնորեն բացատրել այս:

### Որինակ՝

յենթագրենք, թե մեզ հարկավոր և ստեղծել կոմունիստի տիպը Պարզ և, վոր արվեստի տեսակետից շատ անարժեք բան կլինի, յեթե դերասանը վերցնի իր առաջին խել հանդիպած ծանոթ կոմունիստին և օկսի հարազատորեն ընդորինակել նրան:

Այդ կլինի մասնակի, յեղակի մի կոմունիստ և վոչ թե կոմունիստի խացած ու բնորոշ տիպը կոմունիստի խացած ու բնորոշ տիպ ստեղծելու համար պետք և գիտել շատ կոմունիստների, վերլուծել նրանց բնավորությունները, նիստ ու կացը, շարժ ու ձևը, աշխատելու և խոսելու յեղանակը, սովորությունները, և այլն, և այլն:

Ու ապա այս ամենի արդյունքներն իրար հետ համամատելով, դերասանը պետք է ընտրի և առանձնացնի՝ այն ամենը, ինչ վոր ընդհանուր ու բնորոշ ենրա դիմած բոլոր կոմունիստների համար:

Այսուհետև, վորպեսզի վերլուծության հետևանքով գտնված այդ ընդհանուր ու բնորոշ կողմերը վերացական բնույթ չկրեն, դերասանը պետք և իր ստեղծագործական յերևակայության ոգնությամբ այդ տիպիկ, բայց գեռման դիմապրկված հատկություններն որպանապես շաղախի մարդկային անհատական զծերի հետ

ու նրանց մարդաբնի ինքիսիդուալ տեսք ու հոգեբանություն ունեցող կենդանի մարդու մեջ:

Առանց այդ տիպական ու անհատական կողմերի որպանական միացման, դերասանի կերտած բնմական տիպերը միշտ կլրեն չափազանց վերացական ու օխեմատիկ բնույթ:

## 5. ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆ

Անթե մենք ուշի ուշով դիտելու լինենք մեր շրջապատի մարդկանց, ապա կտեսնենք, վոր նրանք առավել կամ նվազ չափով իրարից տարբերվում են իրենց բնավարությաններով և առանձնահատկություններով:

Բնավարություն ասելով պետք է հասկանալ մարդկանց ներքին հատկությունների և առանձնահատուկ զգերի այն հանդադրությունը, զորով բնորոշվում և տվյալ անհատի սոցիալ-դատակագլուխ ելուրունն ու վարը,

Մակայն, յեթե կյանքում մարդիկ ավելի կամ պակաս չափով հաճախ իրար նման են իրենց բնավարությունների բնդհանուր զգերով, ապա նրանք անպայմանորեն իրարից տարբերվում են իրենց առանձնահատկություններով:

Առանձնահատկությունն այն և, ինչով մի մարդ տարբերվում է մյուսից:

Ցուրաքանչյուր մարդ, զորքան ել նա իր բոլոր արտաքին ու ներքին տվյալներով նման լինի մյուսին, այնուամենայնիվ հիմնականում միշտ մի ինչ վոր նատակ կողման տարբերվում և մյուսից: Յով առա այն, ինչով տվյալ մարդը տարբերվում և մյուսից, կինի նրա առանձնահատկությունը Շատերը կարծում են, թե մարդկանց առանձնահատկություններն արտահայտվում են միշտ նրանց արտաքին ալյաներով, այսինքն՝ շարժ ու ձևով հայցքով, նստվածքով, ձայնի յելլեններով, և այլն, և այլն:

Մինչդեռ մարդկանց առանձնահատկությունները կարող են արտահայտվել նաև նրանց մասնակիւրովի, զարծելակերպի ու զգաց մունքների դրսություն յեղանակի մեջ:

Դերասանն ամեն անդամ իր բնմական տիպերը կերտելիս պետք է համառ աշխատանքի զնով ձգոի և կարողանա գունել այն առանձնահատկությունը, զորով իր բնմական տվյալ տիպը հիմնականում տարբերվում և ուրիշներից:

Այսուհետև տիպերի առանձնահատկությունը չպետք է փընտակել միայն նրանց Փիզիկական պակասությունների ու արտաների մեջ, ինչպիս որինակ, կաղության, ճաղատության, սուպատառության, և այլն, և այլն:

Դա կլինի առանձնահատկության շատ սահմանափակ ու մակերեսային ըմբռնում

Տիպերի առանձնահատկությունը պետք է մանրազնին կերպով գորոնել նրանց հոգեկան, մասվոր ու ֆիզիկական ամրող ելության մեջ։ Իսկ դրա համար դերասանը պետք է մանրամասնորեն հաշվի տռնի իր բնմական տիպերի դասակարգային պատկանելիությունը, առըիքը, մասնագիտությունը, կրթությունն ու դաստիարակությունը, սովորություններն ու ճաշակը և այլն։

Գոյնել բնմական տիպի առանձնահատկությունը—այդ նշանակում և կարողանալ տարբերել նրան ուրիշներից և ճանաչել նրա ցյեսը։

## Ե. ԽՆՏՈՒԹՅԱՎ ՅԵՎ ՊԱՏՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դերասանը պետք է սովորի իր բնմական տիպերը կերտելիս յելնել նրանց ներքինից, նա պետք է խորանա իր դերի հոգերանության մեջ և ձգաի նրա արտաքինը բղխեցնել նրա Աերբիթից Իսկ դրա համար դերասանն իր դերը պատրաստելիս անպայման պետք է նրա վրա շատ լուրջ վերլուծուկան աշխատանք կատարի։

Առանց այդ լուրջ ու խորը վերլուծական աշխատանքի դերասանը գրեթե միշտ ել ստիպված կլինի իր դերի կառուցումն ակսել նշանակալից արտաքին նշաններից։

Սակայն յերեմի պատահում ե, վոր գերասանն իր դերի և պիեսի շուրջը չափազանց բարեխիղն ու մանրազնին վերլուծական աշխատանք կատարելով հանդերձ, այսուամենայնիվ վոչ մի կերպ չի կարողանում զգալ ու պատկերացնել իր դերի արտաքինը։ Նման դեպքերում գերասանն սկսում և հուզվել, նյարդայնաւալ և յերեմին նույնիմէ հուսահատվել։

Բայց ահա պատօնական մի դեպք, ձայնի յելմեջ, քայլվածք, հայացք կամ ձեռքի շարժում—և դերասանը կարծեք թե ինտուիցիայով գտնում է այն, ինչ պակասում եր նրա ստեղծագործական յերեսակայությունը շարժելու համար։

Բանն այն ե, վոր այս ամենը հնարավոր ե, վորովհետև ստեղծագործական պրոցեսը մի այնպիսի բարդ և սուրյեկտիվ պրոցես ե, վոր ամեն մեկի մոտ կարող ե շատ յուրահատուկ ձեւվով սկսվել և ընթանալ։

Սակայն այսուղեղ կարելորն այն չե, թե գերասանի ստեղծագործության պրոցեսն ինչից սկսվեց այլ այն, թէ այդ ստեղծագործության արդյունքը որյեկտիվորեն ի՞նչի յի նանգում։

Կաբող և պատահել, վոր դերասանն իր դերերը կատուցելիս իրեն անհրաժեշտ գույներն ու գետալները գտնի ինտուիցիայով, սոկայն այստեղ կարևորն այն է, վոր դերասանը կարողանա իր ինտուիցիայի արդյունքները յենթարկել իր սեղծագործական զիակացուրյանը և սոուզել նրանց պիտանիությունը:

Անցուշա, գետալները շատ կարևոր են տիպերի գունեղացման համար: Սակայն այդ գետալները պետք եւ լինեն այնպիսի գետալներ, վորոնց շնորհիվ հնարավոր լինի գրսնորել ամլյալ բնմական տիպի եյության ընորությունը:

Շատ հաճախ փորձերի ու ներկայացման ընթացքում դերասանը կարող և միանգամայն պատահարար նոր գետալներ, շարիխոներ և գույներ գտնել Նման գեղքում դերասանը չպետք է միանդամից վոզմորմի այդ պատահական շարիխներով, այլ պետք է իր ստեղծագործական անշառառությամբ պարզի, թե արդյոք իր գառած գետալը, շարիխնը կամ գույնը ըստ եյության վորեն նոր բան ավելացնելում է իր բնմական տիպն ավելի խորացնելու և ցայտուն կերպով գրսնորելու: Համար, թե վոչ:

Դերասանը գետալների ընտրության մեջ պետք է լինի անշափ զգուշ և պահանջկոտ, վորովհետև ամեն մի պատահական գետալ կամ շարիխ, վորն ըստ երության վոչինչ չի ավելացնում բնմական տիպի ներաշխարհը ճիշտ գրսնորելու և նրա գնդարվեստականության վրա, գառնում եւ ինքնանալու մանրունք և միայն խնդրում է տիպի հստակությունը:

Յեղ ահա այստեղից ել միանգամայն պարզ ե, վոր դերասանն իր ստեղծագործության ղեկը վոչ մի գեղքում չպետք է հանձնի իր ինտուիցիային, վորովհետև ինտուիցիան այս տեսակետից շատ անվտանելի յեւ նա շատ անգամ դերասանին արջի ծառայություն եւ մատուցում, յերբ տեսնում ե, վոր ավյալ դերասանը զիտակցական մոտեցում չունի զեպի իր ստեղծագործությունն ու վորպետությունը: Հայտնի յեւ, վոր գասակարգերն ել ունեն իրենց գասակարգային ինտուիցիան, սակայն կարելի յեւ արդյոք միայն այդ հիման վրա դասակարգային պայքարի զեկը հանձնել դասակարգային ինտուիցիայի ձեռքը: Պարզ ե, վոր վոչ:

Դասակարգային պայքարում գասակարգերը զեկավարվում են վոչ թե իրենց ինտուիցիաներով, այլ զիտպեցուրյանը:

Նույնը կարելի յեւ և պետք է ասել նաև արվեստի մասին: Այստեղ նույնպես ղեկավար վերը պետք է պատկանի արվեստագետի ստեղծագործական մաքին ու զիտակցությանը: Սակայն գա, ինարկե, չի նշանակում, վոր դերասանի համար ինտուիցիան ավելորդ

մի բան եւ Դա անշուշտ կլիներ շատ կռպիտ մի սխալ, վորը հատուել եւ միայն արվեստի վուլգար տեսաբաններին Խնառուիցիան ստեղծագործության մեջ անպայման ունի իր կարևոր տեղը, բայց և այնպես, դեկավառ ու վնասկան գերը միշտ պետք եւ պատկանի ստեղծագործողի, զիտուեցաւրյանը:

Նշանակում ե՞ դերասանն իր աշխատանքների ընթացքում բնակ չհրաժարվելով ինտուիցիայի շնորհիվ զտած արդյունքներից, այսուամենայնիվ պետք եւ իր ամբողջ ստեղծագործական ողբոցեսը յինթարկի իր զիտակցաւրյանն ու նիմնականում տռաջնորդվի նրանով.

Այլապես նա կարող է միշտ աստեղծագործական սխալների մեջ ընկնել, վորովհետև ինտուիցիան մարդկանց չգիտակցված այն փորձն ե, վորը բգխում եւ շրջադաշտի յերեսույթների ներդործության հետևանքով նրանց մեջ կուտակված անմիջական տպագորություններից:

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Բ Ց Ե Ր

1. Ի՞նչ ե նշանակում մեթոդ
2. Կարելի՞ յե արդյոք դերասանի ստեղծագործական մեթոդը զտածել նրա աշխարհաճացքից և հակադրել իրար
3. Ի՞նչպես պետք ե դերասանն իր բեմական տիպերը կերպելիս արտահայտի սոցիալիստական ռեալիզմի մեթոդը
4. Ի՞նչ ե նշանակում տիպերը գրանորել իրենց զարդացման տենդենցի մեջ
5. Սոցիալիստական ռեալիզմի տեսակետից կարելի՞ յե արդյոք բավարարվել միայն կյանքի մակերեսը նկարագրելով
6. Ի՞նչ ե նշանակում արվեստի կուտակցականությունն և բնչակես պետք եւ արտահայտվի այն դերասանի ստեղծագործության մեջ
7. Ի՞նչ ե նշանակում արվեստի վոճակ
8. Կարելի՞ յե արդյոք արվեստի վաճը հասկանալ իրեւսուի ձևական մի կողմէ
9. Վերն ե խորհրդային արվեստի առաջատար վոճը և բնչպիսի բնորոշ գծեր պետք եւ արտահայտի այն
10. Ի՞նչ ե նշանակում բեմական գեղարվեստական տիպ
11. Ի՞նչ ե նշանակում տիպիկ յերեսույթ կամ տիպ:

- Ա. Դերասանն իր բեմական տիպերը կերտելիս, բացի նրանց ընդհանուր և տիպական կողմերն ընդգծելուց, ել թոշ պետք ե անի:
13. Ի՞նչ ե նշանակում բնավորություն և ինչով են պայմանամորդած մարդկանց ընավորություններն ու վարչությունը:
14. Ի՞նչ ե նշանակում գտնել մարդկանց առանձնահատկությունները:
15. Ի՞նչ ե նշանակում ինտուիցիա:
16. Ստեղծագործության մեջ կարելի՞ յե արդյոք ժխանել ինտուիցիայի զերը:
17. Կարելի՞ յե արդյոք ստեղծագործական պրացեսի զեկը հանձնել սոսկ ինտուիցիայի ձեռքը:
18. Ի՞նչպես պետք ե վարպի դերասանն իր փորձերի և ներկայացման ընթացքում պատահաբար գտնե նոր դետալների, շորի խների և գույների հետ:



II

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԵՐԻ ՎՐԱ



Դերի վրա աշխատանք թափել և բեմական կենդանի տիպ  
ստեղծել—այդ նշանակում է կարգանալ բեմից այնպիսի կենդանի  
և նամնզիչ մարդ պատկերել, վարն իր ակտիվ ներգործությամբ ի վիճակի  
լինի նուզել նամդիսականների մաքերն ու զգացմունքները:

Սա բավական բարդ և պատասխանառու աշխատանք և և  
դժբախտաբար մեր գերասաններից շատերը հաճախ մոռանում են  
այս:

Սակայն վորպեսզի դերասանն իր դերն ամեն անգամ ճիշտ  
դրսեարի և նրա խաղը համոզիչ լինի, նա պետք ե շատ լուրջ  
ուսումնասիրության յենթարկի իր դերը և պարզի նրա դասակար-  
պային եյտությունն ու այն ներքին մղումները, վորոնք պայմա-  
նավորում են նրա բեմական վարքն ու արարքները:

Իսկ զերն ուսումնասիրել—այդ նշանակում է հանգամանորեն  
վերլուծել վոչ միայն դերը, այլ և ամբողջ պիեսը:

Առանց ստեղծագործական նյութի բազմակողմանի և լուրջ  
ուսումնասիրության չի կարելի բեմական կենդանի և լիարժեք  
տիպեր կերտել:

Դերասանն իր դերն ու բեմագրվող պիեսը կետք ե ուսումնա-  
սիրի ու գիտենա այնպես, ինչպես նվազախմբում նստած յուրա-  
քանչյուր յերաժիշտ պարտադիր կերպով գիտե վոչ միայն իր  
յերաժշտական հատվածը, այլև ամբողջ յերաժշտական յեղանակը:

Իսկ վորպեսզի դերասանը կարողանա իր ստանձնած դերերը  
հանգամանորեն ուսումնասիրել ու ճիշտ պատկերել նրանց, նա  
պետք ե իր ամբողջ աշխատանքը բաժանի յերկու հիմնական  
շրջանի՝

1. վերլուծական,

2. ստեղծագործական:

## 1. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դերասանի աշխատանքն այս շրջանում գլխավորապես պետք  
ե կատարվի սեղանի շրջան և հիմնականում պետք ե ընթանա-  
նյութի ուսումնասիրաբյան ուղիղով:

Վերլուծական շրջանում պետք ե պարզել՝

ա. Պիեսի օբյեկտիվ իրականությունը:

Մենք իր ժամանակին տսել ենք, վոր դերասանի ստեղծագործության նյութը հանդիսանում և պրիեսիվ իշտանօւրյանք, վորը պիեսի միջոցով մտնում է թատրոն և դերերի ձևով բաշխվում դերասանների միջև։

Այժմ պետք է տսել, վոր դերասանն իր դերն ու պիեսն ուսումնասիրերու համար չպետք է սահմանափակվի միտքն զրամատուրգի տված նյութով, այլ պետք եւ ուսումնասիրի իրական կյանքը, պետք և դիտի և անձամբ ծանոթանա պիեսում կատարվող դեպքերին և շոշափված խնդիրներին։

ա. շատ խորն ուսումնասիրի և դասակարգայնորեն ճիշտ ըմբռնի նրանց սոցիալական եյությունը:

բ. հիմնականում յելնի նրանց սոցիալ-դասակարգային եյությունից և չզատի այն կենդանի մարդուն հատում անհատատական հոգեբանությունից և ընավորության առանձնահատուկ գծերից:

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր


1. Ի՞նչ է նշանակում սխեմատիկ տիպ:
2. Առանց անհատական հոգեբանության և առանձնահատուկ գծերի կարելի՞ յե արդյոք կենդանի և համոզիչ բնմական տիպ պատկերել:
3. Եերբ արվեստագետը կյանքի յերևույթները դիմելու գործում ուեալ կյանքին չափից ավելի յե մոռենում, դրանից բնչաղիսի անախորժություններ են առաջանում:

4. Ի՞նչ և նշանակում նատուրալիստական տիտ:
  5. Առանց բնորոշ ու տիտական գծերի կարելի յթ արդյոք լիարժեք սոցիալական տիպերը կերտել:
  6. Կարելի յթ արդյոք բնմական տիպերի հոգեբանությունը բացառըն սոսկ նրանց ռանհատական հոգեբանությունը:
  7. Ի՞նչ և նշանակում ռոսիխողովովմա:
  8. Կարելի յե մարդու անհատականը կարել սոցիալականից և ընդհակառակը:
  9. Ցերբ խորհրդային արվեստագետը կյանքը ճանաչելու գործում դասակարգային ճիշտ դիրքերի վրա չի կանգնած, դրանից ի՞նչ վտանգներ են առաջնում:
-



IV

ԹԱՏԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Թատերականության մասին խոսելիս միշտ պետք է հիշել, վոր արվեստի ստեղծագործության բուն նույթը, ինչպես արդեն ասել ենք Նախորդ զբուխներում, միշտ հանդիսանում են որյեկտիվ իրականություններ:

Բայց ամբողջ խոդիրն այն է, վոր արվեստի ամեն մի ճյուղ պետք է ձգտի և կարողանա այդ ռեալ իրականությունն արտահայտել իր հարազատ լեզվով և միայն իրեն հատուկ միջոցներով:

Հետևարար պարզ է, վոր թատրոնը նույնպես պարտավոր և իրական կյանքն արտահայտել վոչ թե այն բնական ձևերով, վոր զոյտություն ունեն կյանքում, այլ միանգամայն տարբեր, բնմական հատուկ միջոցներով—քայլականությամբ:

Մեր զրույցների սկզբնական շրջանում մենք արդեն պարզել ենք, վոր բնմական արվեստը, անկախ նրանից, թե նա զեղարվեստական ինչ ուղղություն է պատկանում, հիմնականումը ըստ եյության միշտ կապված է վորոշ պայմանականության հետ:

Մենք արդին ասել ենք նաև այն, վոր նույնիսկ այն դեպքում, յերբ թատրոնն իր բնմից ձգտում է կյանքը նույնությամբ ցուցադրել, նա ևս զերծ չի վորոշ պայմանականությունից: Արմենաստում և, մասնավորապես, բնմական արվեստում, հնարավոր չեն ազատվել պայմանականությունից: Սակայն ամբողջ խոդիրն այն է, թե մենք ինչ տեսակի պայմանականության հետ գործ ունենք և ինչ չափով ենք կիրառում այն:

Բանն այն է, վոր զերասանն ամեն մի դեր կամ դեպք կարող է բնմից հանդիսականներին այնպես պատկերել, վոր նաև իր բոլոր մանրամասնություններով ամբողջովին նմանվի բնական կյանքին և վորոշ հարաբերական իմաստով լինի այնպես, ինչպես այդ սովորաբար լինում է իսկականում:

Միանգամայն պարզ է, վոր այդ դեպքում մենք գործ ունենք բնմական պայմանականության այն տեսակի հետ, յերբ զերասանն արվեստի մեջ կյանքն ընդուժինակելուց և կյանքին նմանվելուց բացի ուրիշ վոչինչ չի հետապնդում:

Կյանքին նմանվելը նման զերասանների համար դառնում է այն միակ ու վերջնական չափանիշը, վորով նրանք չափում են

իրենց, այսպես կոչված՝ «բնմական ստեղծագործություններ», ըստ վորում վորքան նման, այնքան լավ:

Անշուշտ, դժվար չի հասկանալ, վոր յերբ արվեստագետն իր արվեստի մեջ միայն լուսանկարչական ճշմարտություն եւ գիշնուառում, նա իրավունք չունի գուրս գալու յերեռույթի բնական շրջանակից և նրան վորեւե բան ավելացնել կամ պակասեցնել, վորովնետեւ դրանից կտուժի յերեռույթի արտաքին տեսքն ու նմանությունը:

Մակայն այդ նույն գերը կամ գեղքը կարելի յեւ բեմից ցուցադրել նաև թատերական այնպիսի պայմանական ձևերով ու միջոցներով, վոր նա իր արտաքին մանրամասնություններով քնավ կյանքին չնմանվելով հանգերձ, այնուամենայնիվ կարող և արտահայտել նրա խնկական եյտեթյունը:

Բնմական պայմանականության առաջին դեղքում, գերասանը քնավ չխորանալով իր գերի եյտեթյան մեջ, զինավորապես ձգտում է, վոր գերն իր արտաքին բոլոր մանրամասնություններով վորքան կարելի յեւ շատ նմանվի կյանքի արտաքինին ու հիշեցնի այն:

Մինչդեռ բնմական պայմանականության յերկրորդ դեղքում գերասանն իր գերը ռեալ կյանքից չկտրելով հանգերձ, հիմնուեանում ձգտում է խորանալ իր գերի եյտեթյան մեջ և զանում և այն դրսեռել թատերական հատուկ ձևերով ու միջոցներով:

Այլ կերպ ասած, բնմական պայմանականության այս յերկրորդ դեղքում կյանքը բեմից ցուցադրվում է վոր թե կյանքի բնական ձևերով, այլ բատերական միջոցներով:

Ցերը թատրոնում իրը կոմ յերեռույթը ցուցադրվում է ճիշտ այնպես, ինչպես նա զոյություն ունի խնկական կյանքում, թատրոնը փաստորեն դադարում և ստեղծագործական վայր լինելուց և դառնում է սոսկ մի ցուցահանգես:

Մինչդեռ թատրոնում իրը պետք է ստեղծագործվի: Թատրոնը պարագան է զանել իրերի մատուցման այնպիսի գունեղ և արտահայտիչ միջոցներ, վորսնց շնորհիվ հնարավոր լինի, ուսնց յերեռույթը նույնությամբ ընդորինակելու և սարկորեն կրկնելու. Ել ավելի ցայտուն կերպով դրսեռել նրա եյտեթյունն ու բուն իմաստը: Բայց թատերականությունը կամ իրերի թատերականացումը բնավ չի նշանակում, թե թատրոնը պետք է խուսափի ռեալ կյանք ցուցադրելուց և հանուն թատերականության պետք

Ե ձգուի կյանքի յերնույթները բեմից շարունակ աղավաղել ու գոհնկացնելի Դա նույնպես արվեստ չեւ

Յերբ թատրոնի արվեստագետը առորյա կյանքը նույնությամբ չընդորինակելու ու չկրկնելու համար թատերականության անվան տակ իր արվեստի մեջ սկսում և աննպատակ, կամ, ավելի ճիշտ՝ ինքնանպատակ մարզանքներ անել, նա պարզապես արվեստի մի ծայրահեղությունից ընկնում և մյուսը և թատերականության բուն իմաստը գուեկացնելով, վեր և ածում այն կեղծ, փքուն և ունայն ձևապաշտության Նման գեղքում արվեստագետը բաշրակօնուրյունը կյանքին ծառայեցմելու փախարեն սկսում և կյանքը զանաբերել իր նիվանդոս գրասերականությամբ:

Մեզ համար թատերականությունը միայն և միայն այն ժամանակ և առողջ, արժեքավոր և ընդունելի, յերբ նա վոչ միայն բովանդակազմուրկ չի անում կյանքը, այլև ձգտում և հիմնականում որյիկատիվ իրականությունից չկարվելով հանդերձ, ել ավելի ընդգծել այն և ցայտուն գույներով դրսնորել յերնույթի բուն եյությունն ու նրա ընորոշ կողմերը:

Բացի դրանից, յերբ գերասանը բեմի վրա մոռանալով իր և հանդիսականների միջև յեղած տարածությունը, սկսում իր գերը կյանքի տուրշյա գույներով պատկերել, նա զգալապես իջեցնում ու թուլացնում և իր գերակաստարության տպավորությունը:

Բանն այն և, վոր այն ամենը, ինչ վոր կյանքում մեզ համար բնական և ու համոզիչ, նույնությամբ բեմ տեղափոխվելիս հանդիսականների վրա միշտ թողնում և շատ գժգույն և անհամոզիչ տպավորություն:

Բեմում մի գործող անձ մյուսին շշուկով գաղտնիք հաղորդելիս պետք և այնպես հաղորդի, վոր ամրողջ սրահը լսի և հասկանալու գաղտնիքը, իսկ յեթե գերասանն այդ բանն անի բնական, այսինքն՝ ճիշտ այնպես, ինչպես նա այդ անում և առորյա կյանքում, իր անունը, հանդիսականը պարզապես վաշինչ չի լսի:

Նշանակում ե բեմի վրա չի կարելի ամեն ինչ անել ճիշտ այնպես, ինչպես այդ կատարվում է իսկական կյանքում:

Բեմի վրա գերասանի կատարած գործողությունների բնականությունը չափվում և վոչ թե նրանց տառացիորեն կյանքի նմանությամբ, այլ նրանով, թե վորքան ավյալ գերասանը՝ հիմնականում չկարվելով իրական կյանքից ու պահպանելով իր կատարած գործողությունների ներքին իմաստը, կարողանում և

նրբնց կատարման համար համոզիչ և բեմականորեն ավելի արագաւայտիչ գույշներ ու յեղանակներ գոտնելը

Իսկ այդ իր հերթին նշանակում ե, վոր թատրոնում զերասանն իր արտահայտչական միջոցների, այսինքն՝ ձայնի, շարժումների և դիմախաղի մեջ պետք ե չափավոր բաժերական ընդգծվածություն մատցնի, վորպեսզի իր գերի արարքները բեմից լրիվ չափով հանդիսականներին հասնեն և համապատասխան ռեալ ազդեցություն գործեն։

Բացի զրանից, զերասանը բեմի վրա վոչ մի զեպքում չպետք է իր բեմական գործողությունները կիսատպաստ կատարի։

Բեմում ամեն մի շարժում, յուրաքանչյուր միտք կամ ապրում պետք ե անպայման թատերականորեն և տրամաբանորեն ամբողջացած լինի։


Իսկ այն բոլոր զեպքերում, յերբ բեմի վրա ստեղծված դրության հետևանքով անհրաժեշտ ե, վոր զերասանն իր սկսած այս կամ այն գործողությունը կիսատպատճեն թողնի, այնուամենայնիվ զերասանն այդ կիսատպությունը հանդիսականներին պետք ե այնպես մատուցի, վոր զերասանական վարպետության տեսակետից այդպիսին միանգամայն ճարտար և իր տեսակի մեջ լուզին ավարտված լինի։

## Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ր

1. Ի՞նչ ե նշանակում բեմական պայմանականություն։
2. Կարմղ և արդյոք թատրոնն ապրել առանց պայմանականության։
3. Յերբ զերասանն իր գերերի մեջ ձգտում և ճշտությամբ ընդորինակել իր տեսած ծանոթներին և նրանց նմանվելը նա ստեղծագործղ ե, թե վոչ։
4. Ի՞նչ ե նշանակում թատերականություն։
5. Կարելի՞ յի արդյոք թատերականության անվան տակ աղավաղել իրական կյանքը և կարգել նրանից։
6. Վորմնք հն թատերականության վատանգները։
7. Լմվ ե արդյոք, յերբ զերասանը բեմի վրա խոսում ու շարժվում և ճիշտ այնպես, ինչպես այդ լինում ե իսկական կյանքում։
8. Լմվ ե, յերբ զերասանն իր բեմական գործողությունները կիսատպաստ ե կատարում։

7

ԴԵՐԱՍԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ «ՅԵՍ»-Ը



Պետք ե գիտենաւ, վոր դերասանի «յես»-ն ու նրա կերտած ըեւ-  
ական տիպերի «յես»-երն՝ որզանապես պայմանավորված են մի-  
մյանցով և գոնվում են սերտ միտոնության մեջ:

Առանց դերասանի ստեղծագործական «յես»-ի չկա և չի կա-  
բող լինել բնիմական և վոչ մի կենդանի տիպ:

Բայց այդ չպետք ե հասկանալ այնպես, վոր իրը թե դերա-  
սանն իր ստեղծագործած ըոլոր դերերում պեսաք ե ամեն անզամ-  
ինքն-իրեն խաղա և շարունակ իր միորինակ ցես»-ը ցուցագրի: Այդ  
չափազանց անախորժ ու անարժեք բան կլիներ դերասանի համար:

Անհրաժեշտ ե, վոր դերասանն ամեն անզամ նոր դեր խա-  
զալիս կարողանա հիմնական փոփոխության յենթարկել և վերա-  
կազմակերպել իր ամբողջ հոգեկան ու ֆիզիկական տվյալները-  
այսինքն՝

- մտածողության ու ապրումների յեղանակը,
- ռիթմը,
- ընդհանուր տեսքն ու շարժումները,
- խոսելու ձևն ու կերպը,
- ինտոնացիաներն ու շեշտագրությունները,
- զարմանքի ու բացականչության ձևերը,
- քայլելու յեղանակն ու նայմածքը, և այլն, և այլն:

Սակայն այդ նույնպես չի նշանակում, թե դերասանը պետք-  
է բոլորովին ինքն իր «յես»-ից հրաժարվի և ինքն իրեն բնավ  
վաշնչով չհիշեցնի. դա, իհարկե, համարվոր չեւ:

Դա նշանակում ե, վար դերասանն ինքն իրեն պետք ե հի-  
շեցնի միայն այն չափով, վորչափով տվյալ դերը խաղում ե տվյալ-  
դերասանը և վոչ թե մի ուրիշը:

Բոլոր դերերում նոույնությամբ չկրկնվելու համար դերասանը  
պետք ե ամեն անզամ:

ա. չեղոքացնի իր մեջ այն բոլոր տարրերը, վորոնք ավելորդ-  
են տվյալ դերի կատարման համար.

բ. խուսափի իր դերն այնպիսի տվյալներով ոժակուց, վո-  
րոնք չեն բղիում իր անհատականությունից:

Այս կապակցությամբ ել մենք, «ամպլուտ» ասելով, հասկանալում ենք գերասանի հոգեկան և ֆիզիկական տվյալների այն հանրագումարը, վոր հնարավորություն և տալիս տվյալ գերասանին միանդամայն անբանազրուիկ կերպով խաղալ այս կամ այն կարգի գերեր

Ցեթե տվյալ գերասանն ինքը, վորպես անհատ, իր խառնը-վածքով թույլ տեմպերամենատի տեր մի մարդ ե, պարզ ե, վոր նա թատրոնում չե կարող խաղալ այնպիսի գերեր, վորոնց բեմական կատարումներն անպայմանորեն դերասանից պահանջում են ուժեղ տեմպերամենու:

Թատերական արվեստում տեմպերամենն կոչվում է դերասանի այն հուզմունքը, վորն առաջանում է նրա մեջ իր կատարած դերի եյությունից: Դերասանի ընմական տեմպերամենուը, դա նրա տվյալ գերի, կամ գերի տվյալ հատվածի եյությունից առաջացող հուզմունքն եւ:

Դերասանի տեմպերամենուը պետք է միշտ պայմանավորված լինի նրա՝ ըստ գերի կատարած բեմական խնդիրների ճիշտ և խորն ըմբռնումով:

Իսկ դա իր հերթին սերտորեն չառված է դերասանի՝

— դրության ճիշտ զնահատման,

— ճիշտ սիթմի, և

— վերաբերմունքի ճիշտ դրսնորման ֆունկցիաների հետ:

Դերասանը պետք է շատ լավ ըմբռնի և զգա իր և իր խո-ղընկերների կողմից իրացվող բեմական խնդիրների եյությունը և ըստ այնմ ել կարողանա հուզմիկ և արտահայտել իր վոգնորու-թյունն ու հուսահատությունը: Հակառակ դեղովում դերասանի ար-տահայտած տեմպերամենուը միշտ կկրի չափազանց վերացական բնույթը:

Այսուհետև՝ գերասանը պետք է կարողանա տարբերել նույն իր անձնական հուզմունքն ու նրա արտահայտության ձևերն իր գերի հուզմունքից և նրա դրսնորման յիշանակներից, վորովհետև բեմական տիպերի շյառ-երը զերասանի ստեղծագործական շյառ-ով պայմանավորված լինելով հանդերձ, այսուամենայնիվ նրանք խո-բապես տարբերվում են իրարից:

Դերասանը ըեմի վրա պետք է կարողանա հուզմիկ վոչ թե իր «յես-ի» անունից, այլ իր բեմական տիպի «յես-ի» անունից: Այսինքն՝ նա պետք է կարողանա ըմբռնել և ճիշտ ցուցադրել, թե ինչպես պվալ կանկրետ տիպը, և վոչ թե ինքը գերասանը, տվյալ կոնկրետ պայմաններում կարտահայտի իր հուզմունքը:

Սակայն շատ հաճախ պատահում ե, վոր գերասանն իր սեփական տեմպերամենտը շփոթելով իր բնմական տիպերի տեմպերամենտի հետ, դերակատարության պահին այդպիսին սկսում է փոխարինել իր անձնական տեմպերամենտով:

Վերսիչյալ անախորժությունից խուսափելու համար անհրաժեշտ ե, վոր գերասանը նախ խորն ուսումնասիրի իր դերի բնավորությունը և առաջ շատ լավ զիտենա նրա կոնկրետ ձբդառություն ու ցանկությունները:

Առանց բնմական տիպի կոնկրետ ձբդառություններն իմանալու չի կարելի բեմից բազմակողմանի և կենդանի մարդիկ պատկերել:

Սակայն կան գերասաններ, վորոնք սիրում են շարունակ պարծենաւ, վոր իրենք բոլոր գերերում ել միշտ ռեկնդանի մարդիկ են խաղում:

Այդ ճիշտ ե, բայց նման գերասանները պարզապես մոռանում են, վոր իրենք ամեն անզամ վոչ թե տարբեր կենդանի տիպեր են խաղում, այլ վոր նրանք տարբեր տիպերի անվան տակ միշտ ել խաղում են կամ միևնույթիպեր, կամ թե՝ «իշենք-իշենց»:

Ենու, վերջապես, գերասանը պետք ե իր յուրաքանչյուր բնմական տիպի ներաշխարհն ու արտաքինն այնպիսի բազմակողմանիությամբ ուսումնասիրի, վոր նրա մասին խոսելիս կարողանա նրան այնպես ընորոշել, ինչպես մենք այդ անում ենք մեր մտերիմեների մասին խոսելիս:

Նա իր բնմական տիպերի «յես-երը խորապես ճանաչելու և միշտ դրսերելու համար պետք ե անպայման իր ստեղծագործական «յես-ի միջոցով ընդունուլ մերձենա իր կերտելիք տիպին և որդանապես շաղկապվի նրա հետ:

Առանց այս անհրաժեշտ մերձեցման յերրեք չի կարող անդի ունենալ և վոչ մի համոզիչ գերասանական կտարում:

Սակայն գերասանի և բնմական տիպերի «յես-իրի այս մերձեցմը և շաղկապումը վոչ մի գեղջում չպետք ե հասկանալ այնպես, վոր իրը թե գերասանն իր ստեղծագործության պրոցեսում պետք ե իր «յես-ն տատիճանաբար մոռացության մասնի և, ինքն իրենից բոլորովին հրաժարվելով՝ վերջնականապես կուլ գնա իր դերի «յես-ին ու մարմնանա նրա մեջ:

Պետք ե ասել, վոր այս առումով ավելի շուտ բնմական տիպն ե, վոր մարմնանում ե գերասանի մեջ, քան թե գերասանն իր կերտած տիպի մեջ, վորովհետև ինչպես արդեն պարզել ենք, վոչ

թե բեմական գեղարվեստական տիպն և հանդիսանում գերասանիք կրնկրետացման ձևը, այլ ընդհակառակը, գերաստանն և, վոր կազմում և իր ստեղծագործության արդյունքի, այսինքն բնմական գեղարվեստական տիպի որյեկտիվացման կամ նյութականացման միջոցը:

Բացի այդ, յեթե գերասանի «յես»-ն իր ստեղծագործության պրոցեսում ամեն անգամ բոլորովին վերանա և իրավեմերվի իր կերտած բեմական տիպերի հետ, այս գեղագում հարց և առաջանում՝ թե ապա ել ոչ ենրա փոխարեն բեմի վրա գերակատարություն անում և հսկում գործող անձերի արարքներին:

Եսու պարզ ե, վոր ստեղծագործության պրոցեսում գերասանի հետ յերբեք ել նման միատիկ այլափոխություն չի կատարվում: Դերասանը բեմի վրա յերբեք ինքն իրեն չի մոռանում և չի լուծվում իր գերելի մեջ, վորովնետեւ չի կարելի ստեղծագործության պրոցեսում բացակա գտնվել և այնուամենայնիվ տիպեր ստեղծագործել Ընդհակառակը, այդ տեսակետից գերասանն իրեն յերբեք այնքան ացրում և ուժիմ չի զգում, վորքան իր գերակատարության ժամանակ:

Դերասանն իր գերը խաղալիս վոչ թե ինքն իրեն կօրցնում ու խպառ մոռանում ե իր «յես»-ը, այլ նա իր ստեղծագործության պահին իրեն շարունակ արթուն ու զգոն պահելով, միշտ հիշում ե, վոր ինքը գերասան ե, վոր ինքը բեմի վրա գեր և կատարում, վոր իրեն շրջապատում են իր խաղընկերները, վոր սրահում հանդիսականներ կան նոտած և վոր բեմի վրա չի կարելի ամեն բան անել, և այլն, և այլն:

Այնուհետև միանգամայն սխալ ե նաև այն կարծիքը, վոր իրը թե գերասանը պետք է իրավես զգա և ամձնապես վերապրի իր գերի զգացմունքներն ու հոգեկան վիճակը:

Բանն այն ե, վոր յեթե գերասանն ամեն անգամ իրոք զգա և վերապրի իր կատարելիք դերերի հոգեկան ապրումները ճիշտ այնպիս, ինչպիս այդ լինում և իրական կյանքում, ապա գերասանն իր շատ գերերում ստիպված կլինի ամսական առնվազն չորս անգամ ուշաթափել, յերեք անգամ ուրիշներին սպանել և մեկ անգամ լուրջ հիվանդանալ կամ խելագարվել:

Իսկ ինչւ այդպես չի լինում, վորովնետեւ, ինչպիս արդինացինք, բեմի վրա գերասանն ինքն իրեն յերբեք չի մոռանում և իր ստեղծագործական զես-ը միտք արքուն պանելով, չափավորում ու հսկում և իր արածները:

Իսկ այն բոլոր գեղքերում, յերբ զերաստնն իբր թե իր դե-  
րի հետ իրոք «մերժում» ու բեմի վրա ինչն իրեն բոլորովին մռ-  
ռանում է, նա պարզապես կորցնում է իր արթուն «յես-ը և փշաց-  
նում է իր ու իր խաղընկերի դերերը»:

Սակայն այս ամենից չե կարելի յեղբակացնել նաև, վոր  
զերաստնը պետք է մի ծայրահեղությունից ընկնի մյոււը: Այ-  
սինքն՝ վոր յեթե զերաստնն իր զերակատարության ժամանակ  
իրոք չի զգում և անձնապես չի վերապրում իր բեմական տիպե-  
րի հոգեկան վիճակը, ապա նա պետք է բոլորովին անտարբեր մնա-  
դեպի նրանց ապրումներն ու հույզերը»:

Բեմական տիպերի զգացումներն ու հույզերը, վոր զերաստնն.  
իր խաղի ընթացքում պետք է զգա ու ապրի, բոլորովին նման  
չեն այն ապրումներին, վոր մեղնից յուրաքանչյուրն ունենում  
և իրական կյանքում: Դերաստնի բեմական ապրումները այլ վո-  
րակի ապրումներ են և պայմանավորված են նրա ստեղծագործա-  
կան յերեակայությամբ:

Դերաստնը պարտավոր է իր բեմական տիպերին ընդհաւող  
մերձենալ և զգալ նրանց հոգեկան վիճակն ու ապրումները մռ-  
ռապիրապես այնպես, ինչպես այդ կյանքում տեղի յի ունենում  
մեղ հետ, յերբ մենք կարեկցում ենք ուրիշներին և մասնակցում  
նրանց ուրախությանն ու վշտին:

Իսկ այդ ապրումները և զգացմունքներն եյապես ապրեր-  
վում ու վորակապես այլ ընույթ են կրում, քան այն ապրում-  
ները և զգացմունքները, վոր մարդ ունենում է, յերբ անձնապես  
ինչն և վորեն վիշտ կամ ուրախություն ապրում:

Նշանակում ե՝ զերաստնն իր բեմական տիպերը կերտելիս  
շպետք և իր անձնական «յես-ը շփոթի նրանց «յես-երի հետ  
ու կուլ գնա նրանց ապրումներին»:

Դերաստնի և բեմական տիպի «յես-երի մերձեցումը պետք  
և տեղի ունենա վոչ թե զերաստնի ստեղծագործական «յես-ի-  
լիւակատար մոռացության ու նրա վերացման հաշվին, ինչպես այդ-  
հաճախ կարծում են շատ ու շատ միամիտ՝ զերաստններ, այլ սուկ-  
տյն ճանապարհով, վոր զերաստնը պետք և ձգուի և կարողանա-  
իր ստեղծագործական «յես-ի միջոցով խորապես ներթափանցել  
իր բեմական տիպերի եյության մեջ, և իրեն տվյալ տիպի կաշվի  
մեջ զգալով, իր վարպիտության շնորհիվ համոզիչ կերպով կատա-  
րել այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և տվյալ բեմական տիպի  
ներաշխարհը ճիշտ դրսնորելու համար:

Իսկ մերձենալ գերին և իրեն նրա կաշվի մեջ զգալ, դա  
նշանակում և խորապես ըմբռնել նրա բավանդակությունն ու  
միապես տիրապետել ստեղծագործակուն ամբողջ նյութին:

Դերասանն իր ընմական տիպին պետք և այնպես մերձենա,  
վոր նրա մասին խոսելիս կազողանա ասել վոչ թե «մա», այլ «իս»:

Ենի այս տեսակետից ել—վորքան զերասանն իր ստեղծագոր-  
ծության պլոցեսում խորը թագցնի իր անձնական «յետը», այն-  
քան ավելի լիարժեք և համոզիչ կլինեն նրա կերտած ընմական  
ախպերը:

### ԱՏՈՒԳԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Առանց զերասանի «յետը» կարմղ և արդյոք զոյտություն  
ունենալ ընմական կենզանի տիպ:
2. Դերասանն իր ստեղծագործության պլոցեսում կարմղ և  
արդյոք բոլորովին մօռանալ իր «յետը»:
3. Ի՞նչ պետք և անի դերասանը, վորպեսզի իր բոլոր դե-  
րերում շարունակ ինքն-իրեն չխաղա:
4. Ի՞նչպես պետք և հասկանալ դերասանի «յետը» ու ըե-  
մական տիպի «յետը» մերձեցումը:
5. Ի՞նչմեր լավ չե, յերբ դերասանն իր խաղի ընթացքում  
բոլորովին կորցնում և իր «յետը»:
6. Դերասանը կարմղ և իրապես զգալ ու անձնապես վերադ-  
րել իր զբերի հույզն ու նրանց հոգեկան վիճակը:

VI

ԴԵՐԱՍԱՆԻ ՅԵՎ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԻ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ



Սովորաբար թատրոնի մասին խոսելիս մենք շատ հաճախ մոռացության ենք տալիս հանդիսականին, վորը կազմում և թա- տերական արվեստի ամենահիմնական նախապայմաններից մեկը:

Դերասանը չի կարող առանց հանդիսականի խաղալ, վո- րովինետև հանդիսականը դերասանի վոգեվորության և խանդա- վառության ակունքն եւ Առանց հանդիսականի գերասանը նույնն է, ինչ վոր առանց դերասանի թատրոնը:

Սակայն այդ ճիշտ և միայն այն դեպքում, յերբ գերասանը խորապես կազմված և իր հանդիսականների հետ, ապրում և նըանց իդերով, մտքերով, ձգութմներով և հույզերով:

Զգեստը և կարծել, թե հանդիսականը թատրոն և գալիս միայն դերասանին նայելու և պասիվ կերպով արձանադրելու. այն ամենը, ինչ տեղի յի ունենում ընկեր վրա,

Այդպես լինում և միայն այն դեպքում, յերբ թատրոնն ինքն իրեն սոսկ հայելի համարելով, սկսում և պասիվ կերպով անդրա- գարձնել իր մեջ կյանքը ճիշտ այնպես, ինչպես նա կա:

Նման դեպքում հանդիսականը միայն պասիվ կերպով նայում և բեմում կատարվող իլյուզիոնիստական տեսարանները և, լավա- գույն դեպքում, մեծ զարմանք ու հիացմունք արտահայտելով կյանքի հաջող ընդորինակության համար, հանդիստ որտով հե- ռանում և թատրոնից:

Այժմ հարց և ծագում, իսկ մեմ և հարկավոր նման Հարվես- տը: ԶԵ վոր հանդիսականը թատրոն և գալիս վոչ թե նրա հա- մար, վոր բեմի վրա հաջող կամ անհաջող լուսանկարչություն տեսնի, այլ՝ իսկական արվեստ:

Իսկ մենք արդեն ասել ենք, վոր իսկական արվեստը պար- տավոր և նուզի մարդկանց մտքերն ու զգացմունքները, վերա- փոխել նրանց գիտակցությունն ու հոգեբանությունը:

Լավ դերասաննը նա յի, ով հարգելով իր հանդիսականին՝ մեծապես շահապրգուված և, վոր հանդիսականը վոչ միայն ներ- կայացումը լրիվ տեսնի, այլև ներկայացումից հետո իր հետ անհրաժեշտ մտքեր ու հույզեր տանի և կարողանա հաճապա- տասխան յեղբակացություններ հանել կյանքի մասին:

Իսկ յերբ զերտաստնը կերտէրում և հանդիսականին միմիայն իր գերի արտաքինով, այսինքն՝ յերբ նա զրադեցնում և հանդիսականին միայն և միայն իր խոսքերով ու արտաքնիրով և չի հասցնում նրան, թե ինչից զրդված և ինքն այդ խոսքերն արտասանում կամ այդ գործողությունները կատարում, — հանդիսականն ակամայից կարվում և տվյալ գերտաստնից և ներկայացմանը թացքում սկսում և զրադվել կողմաներով:

Դերտաստնը պետք և նախապես շատ լավ զիտենա, թե ինքնիր խաղի ընթացքում, վորպես հետեւանք, վհրանեղ, ինչ հույզեր, զգացմունքներ և արամազրություններ պետք և առաջացնի հանդիսականների մեջ:

Սակայն, ինչպես արդեն իր ժամանակին տոել ենք, ուստի չի նշանակում, վոր հիշյալ տրամադրություններն ստեղծելու համար զերտաստնն իր գերի կառուցումն ու կատարումը պետք և սկսելողակի այդ զգացմունքներն ու հույզերը հերթով խաղալուց:

Դերտաստնը պետք և խորապես ըմբռնի, վոր թատրոնում կարենը միայն այն, չե, թե զերտաստնը ինչ և բնմում ասում և անում, այլև այն, թե նա ինչ ներքին մղութերից ու զրդապատճառներից ստիպված և տվյալ բառերն ասում, լավիս, տիրում, սիրում, առում, զայրանում, ուրախանում, խանդում, և այլն և այլն:

Դերտաստնը բեմից հանդիսականների համար պետք և լինի վոչ միայն տեսաննելի և լսելի, այլև հասկանալի:

Իսկ յեթե անզամ զերտաստնն իր՝ ըստ գերի կատարած գործողությունների բուն իմաստն ու ներքին զրդապատճառները գիտե, բայց չի կարողանում այդպիսիները ցայտուն կերպով հանդիսականներին հասցնել, միննույն և, հանդիսականը տվյալ զերտաստնից դարձյալ կնեռանա և չի զգո նրա ստեղծագործական խորությունն ու հմայքը:

Եսու հաճախ պատահում ե, վոր ներկայացման ընթացքում պիեսի հերոսներն սկսում են առնջվել և խոր ապրումներ ունենալ, իսկ հանդիսականները մնում են անմասնակից այդ ամենին:

Ի՞նչից և առաջանում այդ: Նրանից, վոր զերտաստնը չի կարդանում իր հուզմունքների ու ապրումների իսկական պատճենները հասցնել հանդիսականներին:

Ենքը հանդիսականը չգիտե, թե ինչի համար և հուզմում ու առնջվում տվյալ գործող անձը, նա միայն նայում ու պասիվ վերաբերմունք և ցույց տալիս գեղի նա: Իսկ յերբ հանդիսականներն ըմբռնում են բեմում կատարվող իրադարձությունների բուն-

իմաստն ու զրդապատճառները և գիտեն, թե ինչի համար են տանջվում պիեսի դործող անձերը, նրանք պասիվ չեն մասմ, նրանք նույնպես սկսում են հոգվել և գործող անձերի հանդեռ բերել իրենց զրական կամ բացասական վերաբերմունքը:

Նշանակում ե՝ դերասանն իր դերը պետք և այնպես կառուցի և մատուցի, վոր հանդիսականը վոչ միայն տեսնի ու լսի, այլև կարդանա իր տեսածն ու լսածն ըստ եյտթյան հասկանալ և վարակվել այն մոքերով ու հույզերով, վորոնք բղխում են ավյալ ներկայացման նպատակադրումից:

Գործող անձերի փոխադարձ և նրանց դեպի իրենց շրջապատ ունեցած վերաբերմունքը հանդիսականին դարձնում և ներկայացման ամենաշահազրպաված և ակտիվ մասնակիցը:

Իսկ յեթե բեմից դերասաններն իրենց փոխադարձ վերաբերմունքի միջոցով չընդգծեն և հանդիսականին չհասկացնեն, վոր ահա, վորտեղ վոր ե, պետք ե, ըստ դերի, թեմ մտնի, ասենք թե՝ «ժողովրդական կոմիսարը», ապա յեկող դերասանին հանդիսականը նույնպես չի ընդունի և չի վերաբերվի վորպես «ժողկոմի»:

Բայց դերասանի և հանդիսականի այս փոխադարձ ներքին ակտիվ կապը, ինչպես մենք արդեն պարզել ենք մեր անցած զրոյցներում, վոչ մի դեպքում չպետք և հասկանալ գահնկորեն, այսինքն՝ վոր իրը թե դերասանն իր դերերը կատարելիս պետք և իր խաղընկերներից անջատվի և անմիջապես հանդիսականների հետ ուղղակի շփման մեջ մտնի:

Թատրոնն իր զարդացման վորոշ շրջանում պաշտպանել և այն տեսակետը, վոր ներկայացման ժամանակի վարպայրը բացվելուն հետո, դերասանի և հանդիսականի միջև միշտ պետք և գործթյուն ունենա յերևակայական մի պատ («չորրորդ պատ»), վորը բեմ ու գործողության վայրը բաժանելով թատերասրահից, պետք և դերասանին մեկուսացնի հանդիսականից:

Այս տիպի թատրոնում դերասանը պետք և մոռանար, վոր ինքը գտնվում և բացրում, նա չպետք և զգար հանդիսականների ներկայությունը:

Բանն այն ե, վոր վերոհիշյալ «չարբադ պատը» միանգամայն ճիշտ և իմաստավորված եր միայն այն տիպի թատրոնում, վորաւեղ այդ պատի շնորհիվ բեմում կատարվող իրադարձություններից հանդիսականը բոլորովին չեղոքացվում և նրան միայն պատիվ դիտողի դեր եր հատկացվում:

Սակայն մեզ մոտ, խորհրդային թատրոնում, դերասանի և

Հանդիսականի փոխարարերությունն արմատապես այլ բնույթ է կրում, վորովինեռն մեր հանդիսականը ներկայացման ընթացքում միայն պատիվ դիտող չե, այլ հանդիսանում են նրա ակտիվ մասնակիցն ու ստոդագործական պրոցեսի կարևոր ողակներից մեկը.

Բայց հանդիսականի մասնակցությունը ներկայացման մեջ և նրա դերասանի հետ ունենալիքը կենդանի կազը նույնպես շպետք և գոհենկացնել և հասկանալ այնպես, վոր իրը թե հանդիսականը պետք և ներկայացման ընթացքում շարունակ սրահից ուղղակի կերպով միջամտի դերասանների խաղին և անմիջակառնորեն խառնվի ընմուռ կատարվող գործողություններին:

Հանդիսականը դերասանի հետ կենդանի կազի մեջ և մոռնում միայն ներկայացման ընթացքում հանդես բերած խ ակտիվ վետաբեմանի շնորհիվ:

Նշանակում ե, յեթե չի կարելի դերասանի ու հանդիսականի փոխադարձ ներքին կազը վուզգարացնել ու հատկանալ այն վորպիս ուղղակի ու անմիջական մի պրոցես, ապա չի ել կարելի հրանց շինական պատով իրարից անջատելը.

Հետևաբար հանդիսականի և դերասանի փոխադարձ կենդանի կազը նույնքան անուղղակի և վոչ անմիջական բնույթ և կրում, վորքան և դերասանի ու հանդիսականի փոխադարձ ներքին կազը:

Այս տեսակետից ել խորհրդային թատրոնում չչորրորդ պատիք ինդիքին եյապես այլ բնույթ և կրում, վորովինեռն մեր դերասանը յերբեք չպետք ե մոռանա, վոր սրահում նստած են հանդիսականներ, վորոնք վոչ միայն պատիվ դիտողներ չեն, այլ վորներանք իրենց ակտիվ վերաբերմունքի շնորհիվ կենդանի մասնակցություն են ցույց տալիս ներկայացման ընթացքին:

Ի վերջո, քանի վոր մեզ մոտ դերասանի ու հանդիսականի միջև պետք ե միշտ գոյություն ունենա փոխադարձ ներքին շփում և կենդանի կազ, միանգամայն պարզ ե, վոր նրանց միջև վոչ մի շշորորդ պատճ չկա և յերբեք ել չի կարող լինել:

Իսկ այն բոլոր դեպքերում, յերբ դերասանն այդ կենդանի կազը զահենկացնելով ձգուում ե ներկայացման շրջանակից դուրս թռչել և հանդիսականների հետ ուղղակի և անմիջական շփման մեջ մոռնել նա պետք և դիտենա և հիշի, վոր այդ շորրորդ պատը կա և միշտ ել պետք ել լինի:

Այնուհետև դերասանը պետք ե խմանա, վոր յերբ իր խաղընկերը պիեսի բռվանդակության տեսակետից ներկայացման ավյալ հատվածում հանդիսանում ե տեսարանի զբավոր գործող անձը,

ինքը իրավունք չունի իր ավելորդ ու անտեղի շարժութերով  
միջամտել ու խանգարել ուրիշի խաղը, վորովհետեւ՝

ա. զբանից առևտում և ավյալ տեսարանի բուն իմաստն  
ու թուլանում նրա ամբողջական տպավորությունը.

բ. հանդիսականների ուշադրությունը ցրվում ու գործողության գլխավոր մոմենտներից կտրվելով՝ յերկրորդական մոմենտներով և զբաղվում:

Ցեզ, վերջապես, խորհրդային գերասանը պետք և կարողանա  
իր արվեստի միջոցով վերափոխել ու դասակարգայնորեն ճիշտ  
կազմակերպել հանդիսականների մաքերն ու զգացմունքները:

Իսկ այդ կարողանալու համար մեր զերասանը պարագանոր  
և նախ սովորել պրոմետարականորեն ճիշտ մտածել ու առա իր  
կատարած գերերը նիւթ ըմբռնել ու նիւթ դրանուել:

Մեծագույն հանցանք ե, յերբ կուլտուրականապես և քաղաքա-  
կանապես տհաս գերասանն իր վրա վերցնելով խորհրդային գե-  
րասանի պատվավոր կոչումը, փորձում և հանդիսականների գի-  
տակցությունն ու հոգերանությունը կազմակերպել, առանց հաս-  
կանալու, վոր չի կարելի վորպես քաղաքացի դաստիարակված չլի-  
նել ըայց արվեստի միջոցով դաստիարակել հանդիսականներին:

### Ս Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Բ

1. Առանց հանդիսականի կարմղ և արդյոք գոյություն ունե-  
նալ թատրոն կամ զերասան:
2. Կարելի՞ յէ արդյոք հանդիսականի վրա նայել վորպես  
սոսկ պասիվ մի դիտողի:
3. Յերբ թատրոնն սկսում և կյանքը նույնությամբ ընդո-  
րինակել, լինչպիսի վերաբերմունք և ցույց տալիս նրան  
հանդիսականը:
4. Ի՞նչ պետք և անի դերասանը, վորպեսզի հանդիսականը  
ներկայացման ընթացքում կարողանա զգալ զերասանի  
ընմական վիշտն ու ուրախությունը:
5. Ի՞նչպես և լինչով և արտահայտվում հանդիսականի ու-  
տիվ մասնակցությունը ներկայացման պրոցեսում:
6. Ի՞նչպես պետք և հասկանալ չչորրորդ պատշաճ դերը խոր-  
հրդային թատրոնում:
7. Կարմղ և արդյոք զերասանը, վորպես քաղաքացի դաստիա-  
րակված չլինել, իսկ վորպես արվեստագետ՝ դաստիարա-  
կել հանդիսականներին:



Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ



Սրանով վերջացնում ենք մեր այս աշխատության նաև յերկուրդ շրջանը: Գետք և ասել, վոր սրանով բնավ չի սպառվում այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և դերասան լինելու համար:

Ստեղծագործող գերասան դառնալու համար բավական չեմիայն յուրացնել ձեռնարկի բովանդակությունը, այլ անհրաժեշտ և ձեռք բերած տեսական պաշարն անխոնչ ու համառ աշխատանքի շնորհիվ կերառել գործնականում, ստուգել և ապա, որպանապես այն տիրապետելով, առազգության մեջ ձեվակերպվել դերասան:

Բայց վորպեսզի ամեն մի սկսնակ դերասան կարողանա իր գործնական աշխատանքների ընթացքում փոքր ինչ ավելի վստահ դպալ իրեն, նու պետք և շարունակ ճիշի և յերբեք չմոռանա.

1. Վոր արվեստի մեջ մեթոդը չի կարելի հասկանալ վորպես տեխնիկական սրբութերի և զանազան միջոցների մի կոմպլեքս:
2. Վոր սոցիալիստական ռեալիզմի արվեստի մեջ մեթոդը նույնանում ու միասնանում և արվեստագետի աշխարհահայցը ին:

3. Վոր խորհրդային դերասանի ստեղծագործական մեթոդը, ուս նրա սկզբունքային մոտեցումների ընդհանրությունն և, վորով նա ճանաչում, բացատրում ու արժեքավորում է կյանքի յերևույթները՝ բնմից անդրադարձնելիս:

4. Վոր ստեղծագործական վորոշակի մեթոդ չունենալը նույնապես մեթոդ եւ

5. Վոր սոցիալական ռեալիզմի մեթոդը խորհրդային դերասանից պահանջում և կյանքը դիտել ու ճանաչել նրա համընթաց շարժման մեջ, սոցիալական յերևույթները դասակարգայնորեն ճիշտ ըմբռնել, մարդկանց անհատական-

գծերի մեջ նրանց ընդհանուր ու միապական կողմնը  
տեսնել ու այս ամենի մեջ կուրակցականություն դնելով  
տիպիկ ընավորությունները տիպիկ հանգամանքների մեջ  
պրսնորել ու ցույց տալ նրանց զարգացման ճիշտ տեսքնենցը.

6. Վոր արվեստի վոճը սոսկ ձևական հասկացողություն չե, այլ  
վոր նա խտացած կերպով արտահայտում ե տվյալ դար ա-  
շբանի ու դասակարգի նյութական ու հոգեկան կյանքի  
ամրող ելությունն ու պատկերը:
7. Վոր խորհրդային դերասանի ստեղծագործության մեջ  
սոցիալիստական մեալիզմի վոճը, վորպես խորհրդային  
արվեստի առաջատար վոճ, պետք ե արտահայտի մեր  
աշխատավորության պայքարի հերոսականությունը, աշ-  
խատանքի անձնվիրությունն ու սոցիալիստական կյան-  
քի լավատեսությունը:
8. Վոր բեմական գեղարվեստական տիպը պատմական վորոշ  
միջավայրում ազդող, միանման մտածող, միանման ընտա-  
վորություն և բնորոշ գծեր ունեցող մարդկանց մի այն-  
պիսի ընդհանրացում ե, վորը դերասանի դասակարգային  
գիտակցության բովից անցնելով, ընդունում ե իր կոն-  
կրետ և ինդիվիդուալ գծերով սժոված կենդանի մարդու  
ուսաւ կերպարանքը:
9. Վոր բնավորության ասելով պետք ե հասկանանք մարդ-  
կանց ներքին հատկությունների և առանձնահատուկ  
գծերի այն հանրագումարը, վորով բնորոշվում ե տվյալ  
անհատի դասակարգային ելությունն ու սոցիալական  
վարժը:
10. Վոր հաճախ մարդիկ իրենց բնավորությամբ իրար  
նմանվելով հանդերձ, այնուամենայնիվ իրարից տարբեր-  
վում են իրենց առանձնահատկություններով:
11. Վոր աշխատել զերի վրա նշանակում ե խորապես ըմբռո-  
նել գործող անձի մտքերը, հույզերն ու ձգտութերը:

12. Վոր զերաստնի «աշխատանքը զերի վրա» պլոցեսը բաժանվում է յերկու հիմնական շրջանի՝  
ա. վերլուծականի և  
բ. սեղծագործականի:
13. Վոր զերաստնի իր բնեմական տիպերը կերտելիս պետք է շատ լուրջ ու խորը վերլուծական աշխատանք կատարի վոչ միայն իր զերի և պիեսի շուրջը, այլև այն որյեկտիվ իրականության շուրջը, վորը հեղինակի կողմից ընդուրելված և նրա տվյալ պիեսում:
14. Վոր բնեմական տիպերը հիմնականում ունենում է՝  
ա. ֆիզիկական կառուցվածքի պարզ տիպ,  
բ. ֆիզիկական կառուցվածքի բարդ տիպ:
15. Վոր խորհրդային զերաստնը կյանքը խորը ճանաչելու համար պետք է կարողանա դասակարգային ճիշտ գիրքից նայել նրա վրա:
16. Վոր կյանքի յերևույթները նույնությամբ վերաբերութեալ դեռ արվեստ չե, իսկ յերևույթները վերաբերապես առանց կյանքին լավ ծանոթ լինելու՝ նույնպես սխալ և անարժեք մի գործ եւ:
17. Վոր թե սիեմատիզմը և թե նապուրալիզմը ու պսիխոլոգիզմը հավասարապես աղավաղում են սոցիալական կոնկրետ միջավայրում ապրող ու գործող մարդու դասակարգային եյությունն ու նրա կինդանի նկարագիրը:
18. Վոր զերաստնը պարաւոր և զանել իր բնեմական տիպերի մատուցման այնպիսի գունեղ և արտահայտիչ թատերական միջոցներ, վորոնց շնորհիվ ճնարավոր լինի առանց այդ տիպերը կյանքից կարելու կամ թե նրանց նույնությամբ ընդորինակելու, եւ ավելի ցայտուն կերպով զրանորել նրանց եյությունն ու բուն իմաստը:
19. Վոր թատրոնն առանց թատերականության նույնքան անիմաստ է, վորքան և թատերականությունն առանց բովանդակության:

20. Վոր դերասանի ստեղծագործական շյառ-ի և բնմական տիպի «յեւ»-ի մերձեցումը պետք է տեղի ունենալ վոչ թե դերասանի «յեւ»-ի լիակատար մոռացության հաշվին, այլ վոր դերասանը պետք է ձգտի և կարողանա իր ստեղծագործական շյառ-ի միջոցով խորապես ներթափանցել իր բնմական տիպերի եյության մեջ և իր վարպետության շնորհիվ համոզիչ կերպով կատարել այն ամենը, ինչ վոր անհրաժեշտ և նրա ներաշխարհը ճշտորեն դրսեորելու համար:
21. Վոր չի կարելի ստեղծագործել ու ստեղծագործության պրոցեսում բացակա գոտնվել:
22. Վոր խորհրդային թատրոնում «չորրորդ պատշ»-ը վերանում և այն չափով, վոր չափով մեր հանդիսականը սոսկ պասիվ դիտող չե, և մնում և այն բոլոր դեպքերում, յերբ դերասանն սկսում և հանդիսականների հետ ուղղակի և անմիջական կերպով շփվել և ինքնացուցադրությամբ զբաղվել.
23. Վոր հանդիսականի և դերասանի փոխադարձ կենդանի կապը նույնքան անուղղակի և վոչ անմիջական բնույթ և կրում, վորքան և դերասանի ու հանդիսականի փոխադարձ ներքին կապը:
24. Վոր դերասանն իրավունք չունի ներկայացման ընթացքում իր ամելօրդ ու անտեղի շարժումներով միջամտել ու խանդարել իր խաղընկերներին:
25. Վոր միծագույն հանցանք և, յերբ կուլտուրանապես և քաղաքականապես տհաս դերասանն սկսում և բնմից հանդիսականին դաստիարակել:

Հեղինակի կողմից . . . . .

**ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ**

I.	ՆԱԽՆԱԿԱՆ ԶԲՈՒՅՑ	13
1.	Արվեստի առանձնահատկությունը	15
2.	Արվեստի գասակարգային բնույթը	19
II.	ԴԵՐԱՍՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱԹԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ	19
1.	Դերասանի ստեղծագործության նյութը	21
2.	Դերասանի ստեղծագործության գործիքը	27
3.	Դերասանի ստեղծագործության արդյունքի որ- յիկացման ձևը	30
4.	Առանձնահատկության սխալ բնորոշումներ	34
III.	ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ	39
1.	Ստեղծագործական յերևակայություն	43
2.	Ստեղծագործական լուրջ վերաբերմունք կամ բե- մական պայմանական հնավատա	44
3.	Ստեղծագործական զրգիռ	47
4.	Ֆիզիկական անհրաժեշտ ավլաներ	48
IV.	ԴՊՐՈՑ	51
V.	ԴԵՐԱՍՍԱՆԸ ՎՈՐՊԵՍ ԲԵՄԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴԼԱՎՈՐ ՏԱՐՅ	59
VI.	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	65
VII.	ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ	73
VIII.	ՈԲՅԵԿՏ	81
IX.	ԶԱՓԻ ԶԳԱՑՈՒՄ	89
X.	ՈՒԹՄ	95
XI.	ՎԵՐԱԲԵՐՄՈՒՅՔ	103
XII.	ՓՈԽԱԴՄՐ ՆԵՐՔԻՆ ՇՓՈՒՄ	113
XIII.	ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՈԴՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	119
XIV.	ԴԵՐԱՍՍԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ	123
XV.	ՄԿԱՆԱՅԻՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ	133

XVI	<i>ՄԱՐԶԱԱՆՔՆԵՐ</i>	139
1.	<i>Ուշադրության մարզանքներ, կապված տեսողական հիշողության հետ</i>	141
2.	<i>Ուշադրության մարզանքներ, կապված լսողական հիշողության հետ</i>	144
3.	<i>Ուշադրության մարզանքներ, կապված շոշափողական հիշողության հետ</i>	145
4.	<i>Ուշադրության մարզանքներ, կապված ճաշակողական և Հոռահանգական հիշողությունների հետ</i>	146
5.	<i>Հանրային մենակության մարզանքներ</i>	»
6.	<i>Չափի զգացման մարզանքներ</i>	147
7.	<i>Ցերևակայության մարզանքներ</i>	148
8.	<i>Ռիթմի մարզանքներ</i>	149
9.	<i>Վերաբերմունքի մարզանքներ</i>	150
10.	<i>Փոխադարձ ներքին շիման մարզանքներ</i>	154
11.	<i>Առարկաների հետ թեթևությամբ ու մաքրությամբ վարվելու մարզանքներ</i>	»
12.	<i>Մկանային ազատության մարզանքներ</i>	155
	<i>ԱՄՓՈՓՈՒՄ առաջին շրջանի</i>	157

## ՅԵՐԿՐՈՐԴ ԾՐՁԱՆ

I.	<i>ՍՏԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵԹՈԴ</i>	167
1.	<i>Մեթոդ</i>	169
2.	<i>Վաճ</i>	171
3.	<i>Բեմական գեղարվեստական տիպ</i>	172
4.	<i>Տիպիկանցման միջոց</i>	174
5.	<i>Բնավորությունն և առանձնահակությունն</i>	175
6.	<i>Ինտուիցիա և պատահականությունն</i>	176
II.	<i>ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԵՐԻ ՎՐԱ</i>	181
1.	<i>Վերլուծական շրջան</i>	183
ա.	<i>Պիեսի որյեկտիվ իրականությունը</i>	184
բ.	<i>Պիեսի գաղափարախոսությունը</i>	»
դ.	<i>Պիեսի միջանցիկ գործողությունը</i>	185
դ.	<i>Դերի միջանցիկ գործողությունը</i>	»
ե.	<i>Դերի փոխադարձ կտորն ու վերաբերմունքը</i>	186
դ.	<i>Տեքստ</i>	187

Ե.	Դերասանական հատված	190
Ը.	Բնմական կամ դերասանական խնդիր	>
Բ.	Դերի կուզմինացիոն կետը	191
Ժ.	Բնմական ախպերի դասակարգությունը	>
2.	Սանդագործական արջան	194
ա.	Գույներ	195
բ.	Բնմական ախպերի ֆիզիկական կառուցվածքը	199
<b>III.</b>	<b>ԱԽԵՄԱՏԻԶՄԻ, ՆԱՏՈՒՐԱԼԻԶՄԻ ՅԵՎ ՊՄԻԿՈԼՈԳԻԶՄԻ</b>	
	<b>ՎՏԱՆԳՆԵՐԸ</b>	<b>203</b>
1.	Ախեմատիզմ	205
2.	Նատուրալիզմ	207
3.	Պմիկոլոգիզմ	209
<b>IV.</b>	<b>ԲԱՑԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>	<b>213</b>
<b>V.</b>	<b>ԴԵՐԱՍԱՆԻ ԱՏԵՂՆԱԳՈՐԾԱԿԱՆ «ՅԵՍ»-Ը</b>	<b>219</b>
<b>VI.</b>	<b>ԴԵՐԱՍԱՆԻ ՅԵՎ ՀԱՆԴԻՍԱԿԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒ-</b>	
	<b>ԹՅՈՒՆԸ</b>	<b>227</b>
	<b>ԱՄՓՈՓՈՒՄ յերկրորդ արջանի</b>	<b>235</b>



Պատ. Խմբագիր՝ Սիրոս  
Տեխ. Խմբագիր՝ Սո. Ալբանիայուն  
Մըբազզէ՛ Խ. Արվապյան  
Դևավիտի լիազոր Խ Ա—3095  
Հրատ. 4488, պատվիր 157, աիրամ 3000  
Հաճանքած և արտադրության 1938 թ. գետրվարի 9-ին  
Սուրաղրված և արտադրության 1938 թ. մայիսի 16-ին  
Բուլղը 62×94.  $15\frac{1}{4}$  առ. մամ., հեղին.՝  $7\frac{1}{4}$  մամ, 1 թերթ. 33400 առ. Ֆիշ  
Քինը 3մ. կազմը 60 կ.

ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՅԵՎ ՎՐԻՊԱԿՆԵՐ

եջ	Տար	Վերևից Ներքեւից	Տողած և	Գեղը և լինէ
17	14—15	Վերևից	սոցիալստական	սոցիալստական
>	16	>	լե	ե
>	4	Ներքեւից	մեր	մեջ
49	7	Վերևից	գերբերում	գերերում
61		Ներքեւից	Ծաշվածը կորզալ	կարսդ
>		>	> >	գլուխալիք
>	1	>	թառերախողություն	գործողություն
63	7	Վերևից	սատնալ	սահենալ
85	1	>	ու	ու մեր
91	6	>	ճշմարտությունն	ճշմությունն
107	13	>	Փունկիցիսնալ	Փունկիցիսնալ
133	1	>	լորդութություն	լորդութություն
210	6	>	պուիխոլոգիստական	պուիխոլոգիստական
215		>	ընույթը	նյույթը
230	19	>	ավյալ	ավյալ
237	4	Ներքեւից	սոցիոլոկան	սոցիոլոկան
240	3	>	կուլտուրանապես	կուլտուրականապես

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0007114

ԳԻՒԸ Յ Ռ. 60 Կ.

ЦЕНА

20299

Տ. ՇԱՄԻՐՀԱՆՅԱՆ  
ОСНОВЫ АКТЕРСКОГО  
ИСКУССТВА  
ГНЭ АРМ. ССР, ЕРЕВАН